


ՀՅՈՒՄԱԿՈՒՐ





2854

ԷՂՄԻԱԾԻՆ ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՂՄԻԱԾԻՆԻ

Բ

1960



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԱԾԳՐԱԿԱՆ — Եղիշե արքայիսկոպոս Դուռյան	3
Խաղաղության պաշտպանության դիրքերում	7
ՄԱՅՐ Ա.Ի.ՌՈՌՈՒՄ	14
Կարծիքներ Եղիշե արքայիսկոպոս Դուռյանի մասին	16
ԹՈՐԳՈՄ Ա.Ի.ԳԵՂԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ — Ճշմարիտ արժանիքն մարդք	19
ՀԱՅԿԱԶՈՒԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ — Երևան տարի առաջ...	21
Հ. Ճ. ՍԻՐՈԽԻՆԻ — Եղիշե պատրիարք Դուռյան	23
Համայն Վրաց Պատրիարք-Կարողիկոս ՄԵԼքիսեդեկ Գի մաճը	31
Տանե Կիլիկիո Կարողիկոսությունը պատմության լուսի տակ	34
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ — Լմբատավանքը և նրա վիմագրությունները	50
Զեկավց Դալուս Կյուլպեճկյան նիմեարկության	58
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	59



ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐ, ԷՉՄԻԱՅԻՆ
«ՀՅՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմանակական հանրական ամսագիր՝ հայոց ազգական հարաբերությունների մասին
Redaction of the monthly review „Etchmiadzin”, Echmiadzin, Armenia. USSR

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՉՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊՈՒՄԿՈՎՈՍ ԴՈՒՐՅԱՆ

(1860—1930)

Ետրվար ամսին լրանում է երշանկահիշատակ նղիշե պատրիարք Դուրյանի ծննդյան հայրամայակը, իսկ ապրիլին՝ մահվան 30-ամյակը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը նայ նոգեորականուրյան և հավատացյալ նայ ժողովրդին ուղղված 1959 թվականի հունիսի 10 թվակիր Եր սրբատառ կոնդակով սրտապին երահանգում էր, Կոստանդնուպոլսի ամենապատիկ Տ. Գարեգին պատրիարք Խաչառյանի գլխավորությամբ, հոբելյանական պատշաճ հանդիսուրյուններով նշել «Արմաշի Դպրեվանոց նախկին վանահայր և վերատեսուչ, Կոստանդնուպոլսի և Ս. Երոսալմեմի պատրիարք երշանկահիշատակ Տ. նղիշե արքեպիսկոպոս Դուրյանի ծննդյան հարյուրամյակը»:

Նղիշե պատրիարք Դուրյանի կյանքը ուսանելի է և մոնումենտալ, իր ամբողջ գրականուրյան, պարզության և վեհության մեջ: Դուրյանը նղել է նայ եկեղեցականի փետոված և սիրված մատաֆարը և ժողովրդի լուսավորության, ծառայության նվիրված վաստակավոր մշակը:

Վեհափառ Հայրապետը գեղեցիկ կերպով է բնութագրել իր կոնդակում Դուրյան սրբազնի վասարակը որպես ՈՒՍՈՒՑՉԻ և ՀՈՒՅՎՈՒԿԱՆՆԻ, մտածողի և բարոյախոսի, հայկարանի և հայագետի, բանաստեղծի ու գրողի:

«Հոգելույս Դուրյան սրբազն իր առաքի-նազարդ նոգիով, իր բոլորակ կյանքով ու վաստակով, Հայ նկեղեցիի և հայ ժողովրդի առաջական պատմության նորագույն շրջանում և իր աշակերտների և ծանրթեարի նիշուղության մեջ:

Դի հանդեպ ունեցած իր խորունկ սիրով և մեծ նվիրումով, աներեր կանգնած է մեր շնորհներով լեցուն հայրապետներու լուսափալանգին մեջ և հավետ կենդանի պիտի մեա անօր բաղցը հիշատակը՝ որպես Աստուծո շոնչը կրող ընթիր անօր, որպես բարոյախոս. «ՄԱՀԿԱՆԱՑՈՒ ԾՆԵԱԼ՝ ԱՆՄԱՀ ԶԻՒՐՆ ՅԻՇԱՍԱԿ ԵԹՈՂ, ՊԱՏՈՒԵԱՑ ԶՊԱՏԿԵՐՆ, ՊԱՏԿԱՆԵԱՑ Ի ԿՈՉՆԱԿԱՆՆԵՆ, ՓՈԽԱՆՈՐԴԵԱՑ ԶԿԵԱՆՆԵ» (Խորենացի):

Արդար Դուրյան սրբազնը, որպես մարդ և հոգելորական, որպես նկարագիր և անհատականուրյուն ոսկեձոյլ մի ամբողջություն է: Նա ԺԹ դարի մեր ազգային-եկեղեցական, հասարակական և մշակութային զարքոնքի ամենահներնատիպ և անկրկնելի մեծուրյուններից մեկն էր:

Դուրյան սրբազնը իր ուսուցչական, հովական, գրական, բանասիրական մեծ վաստակով, իր առաքինազարդ և անբասիր կենցաղով և մեր դասական մատենագիրների և եռամեծ վարդապետների տեսլականով, լուսավոր և անմոռանալի հիշատակ է բաղել մեր եկեղեցական պատմության նորագույն շրջանում և իր աշակերտների և ծանրթեարի նիշուղության մեջ:

Նղիշե պատրիարք Եղերաքախտ բանաստեղծ Պետրո Դուրյանի կրտսեր Եղերայրն էր, ծնված 1860 թվականի փետրվարի 23-ին (հին տոմարով), Կոստանդնուպոլսի ամենահին, բայց հայկական շեշով հարուստ մեկ քաղի՝ Սկյուպարի մեջ, համեստ հայ Երկա-

բագրծի ընտանիքում: Դուրյան սրբազնը իր աշխատասիրությամբ և բնատու ձիրենցով ընտանեկան համեստ հարկից հասել է բարձրագույն դիրքի և գիտցել է այն փեռածել լուսավոր առաքելության հայ հալատացյալ ժողովրդի և Հայ նկեղեցու ծառայության աճքաստանում:

Հայկական հավատավոր ընտանիքի և սրբության մեջ բողոքած ու սեած մարդը եղավ նա, ինչ որ նետագայում էլ կազմեց երա հկարագրի գեղեցկության և բազմակողմանի առաքելության աղբյուր:

Դուրյանի կյանքը և բովանդակ գործունեությունը ամփոփվում են երկու հիմնական և լուսափայլ գծերի մեջ: Նա գերազանց տիպարն է նայ ուսուցի և անքափի նայ հոգևորականի: 1876 թվականին նա ասպարեզ իջակ նախ ուրախ ուսուցիչ՝ Սկյուտարի ձեմարանում: 1878 թվականին Դուրյան սրբազնը ընդմիջու իր անունն ու կյանքը կապաւմ է Հայ նկեղեցու ծառայության գործին ուրախ հոգևորական:

Դուրյան սրբազնը, եկեղեցական կյանքի հետ, հոգևորականի իր սեմի տակ զուգընթացարք առաջ է տարել միշտ կրթական գործը: Նրա կյանքը այս երկու ասպարեզներում եղել է ներշնչող ուղեցույց և փառության բովանդակ գործունեության ամենից ավելի հիշատակելի կողմը եղել է միշտ կրթական գործին աված մղումը և նայ նոր հոգևորականության պատրաստության մաս հոգությունը:

«Դուրյան սրբազնը, — գրել է Վեճափառ Հայրապետը՝ բնութագրելով հոգևորականն ու ուսուցիչը նրա մեջ, — Ավելի քան Կոմի ՈՒՄ ՈՒՍԱՎ ԵՎ ՈՒՍՈՒՑ, աղոքեց ու գրեց, դասախոսեց, դաստիարակեց և հարոցից ու իր պաշտոնը փառավունց սրտեանդ նվիրումի մը բարի արդյունավորությամբ, «ԳերԱԶԱՆՑԱԱԼ ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅՆ, ՈՅՔ ԶԱՅՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԷԽՆ ԱՌԱՐԹԻՆԻՔ» (Խորենացի):

Դուրյան սրբազնի կենսագիր և նրա արժանավոր աշակերտներից մեկը՝ Թորգոմ արեւպիսկոպոս Դուշակյանը, Դուրյանի հանաբայության հիմնամյա հորելյանի առքիլ իր գրած «Եղիշե պատրիարք Դուրյան» արձեխավոր մենագրության մեջ (Երևանիմ, 1932 թ., էջ 326) նրան բնութագույն է ուրաքանչ գերազանց ուսուցիչ և նկեղեցու մեծ վարդապետի, «ուրու ամբողջական կյանքը նվիրված է եղեր ժողովրդական դաստիարակության, եկեղեցական դաստիարակության» նվիրական գործին:

Դուրյանի կյանքի առաջին և մեծ փառքը կազմում է նրա ուսուցչությունը: Ուսավ և ուսուց Սկյուտարի հեմարանից, ապա Պատմակում, Արմաշում, Զմյուտիայում, Կոս-

տանդնուպոլսում, Երևանիմում: Նրա շնչի տակ հասավ հոգևորականների և մոտավորականների խոստումնալից մի սերունդ: Դուրյանը ուսուցիչ և հոգևորականի իր պատկաներ և հմայքի պահեց մինչև իր կյանքի վերջին օրը:

Եկեղեցու բեմը Դուրյանի համար հանդիսացել է «ուսուցանելու մի ուրիշ ամրին», հոգեկան դաստիարակության վարժոց, ուսկից հեշտ ձայնը ավելի սրբերու մեջ պետք է արձագանքէ»:

Դուրյանը մի ամբողջ շրջանի ուսուցիչն էր ու վարդապետը միանգամայն:

Ուսուցչական և հոգևորական այս զույգ ասպարեզներում Դուրյանը ներկայանում է մեզ Նվիրութիւնն և ԱՌԱՐԹՅԱՆ լուսապատճեն: Դուրյանը հոգու նվիրվեց նայ ժողովրդի մտավոր և հոգուոր շինուրյան գործին: Այդ սրբազն աշխատանքի մեջ առանց մնացողն ին դեմ է իր սիրար, աննկուն կամքը և հարուստ գիտելիքները:

ՍՈՎՈՐԸ ԵՎ ՍՈՎՈՐԸ ԵՑՆԵԼ, անա Դուրյանի հոգու մշտական, կենդանի նրայրքը: Դուրյանը ժողովրդի ծառայության և Հայ եկեղեցու սպասավորության նվիրված մշակի և հոգևորականի սրտառու մտավորն է: Այս իմաստով նա Արմաշի դպրեվանքը և երևանականի հայոց կանքը վերածեց բարյական զաղագրական հաստատությունները: Որոնք երա անունը միացնում են նայ մշակույթի մեծ երախտավորեցիւնների խմբին: Այդպիսի աշխատանքները, որոնք երա անունը միացնում են նայ մշակույթի մեծ երախտավորեցիւններով, մերողի ավելի գործնական առաջարկություններու և առնենք դասագրքի բոլոր մատչելիությամբ», որոնցով շատեր սիրավետը են մեր ոսկեղինիկ լիզվին, «Պատմություն հայ մատենագրության»-ը, ուսեղ «Երեխան խոր է իր առաջանքն ու գրչին, իր սեսուրյանց և մերողին ինքնարյունը» (Թորգոմ արեւպիսկոպոս Դուշակյան) հայ մատենագրության սկզբնակորության, զարգացման, գերեի զյուտի, հայերեն լեզվի ծագման և լեզվաբանական դիրքի և մեր մեծ մատենագրեների և նրանց երկերի վերուժման հարցերում: Դուրյանի մատենագրական, բանասիրական վաստակի մեջ

տանդնուպոլսում, Երևանիմում: Երա շնչի տակ հասավ հոգևորականների և մոտավորականների խոստումնալից մի սերունդ: Դուրյանը ուսուցիչ և հոգևորականի իր պատկաներ և հմայքի պահեց մինչև իր կյանքի վերջին օրը:

Եկեղեցու բեմը Դուրյանի համար հանդիսացել է «ուսուցանելու մի ուրիշ ամրին», հոգեկան դաստիարակության վարժոց, ուսկից հեշտ ձայնը ավելի սրբերու մեջ պետք է արձագանքէ»:

Դուրյանը մի ամբողջ շրջանի ուսուցիչն էր ու վարդապետը միանգամայն:

Ուսուցչական և հոգևորական այս զույգ ասպարեզներում Դուրյանը ներկայանում է մեզ Նվիրութիւնն և ԱՌԱՐԹՅԱՆ լուսապատճեն: Դուրյանը հոգու նվիրվեց նայ ժողովրդի մտավոր և հոգուոր շինուրյան գործին: Այդ սրբազն աշխատանքի մեջ առանց մնացողն ին դեմ է իր սիրար, աննկուն կամքը և հարուստ գիտելիքները:

ՍՈՎՈՐԸ ԵՎ ՍՈՎՈՐԸ ԵՑՆԵԼ, անա Դուրյանի հոգու մշտական, կենդանի նրայրքը: Դուրյանը ժողովրդի ծառայության և Հայ եկեղեցու սպասավորության նվիրված մշակի և հոգևորականի սրտառությունների խմբին: Այդպիսի աշխատանքները, որոնք երա անունը միացնում են նայ մշակույթի մեծ երախտավորեցիւններով, մերողի ավելի գործնական առաջարկություններու և առնենք դասագրքի բոլոր մատչելիությամբ», որոնցով շատեր սիրավետը են մեր ոսկեղինիկ լիզվին, «Պատմություն հայ մատենագրության»-ը, ուսեղ «Երեխան խոր է իր առաջանքն ու գրչին, իր սեսուրյանց և մերողին ինքնարյունը» (Թորգոմ արեւպիսկոպոս Դուշակյան) հայ մատենագրության սկզբնակորության, զարգացման, գերեի զյուտի, հայերեն լեզվի ծագման և լեզվաբանական դիրքի և մեր մեծ մատենագրեների և նրանց երկերի վերուժման հարցերում: Դուրյանի մատենագրական, բանասիրական վաստակի մեջ

առանձին արժեք է ներկայացնում նրա գըն-
հաղատական աշխատուրյուններն ու տեղե-
կագրերը՝ նվիրված Հայ և կեղեցուն, նայ և
նոյն և կեղեցական հարաբերությանց, մա-
տեսագրական և լեզվաբանական բազմարիվ
հարցերին, որոնց մեջ հաճես է զայիս ող-
ջամիտ գիտականը, պատմաբանը և մեծա-
նմուս բանասերը:

Ուսուցչական իր երկարամյա դասախոսու-
թյանց և պրպումների խնամիտ արգա-
սիք հանդիսացան նաև նրա մի շարք դասա-
գրերը, «Ուսուցչի գործը ամենն ավելի
եռանդուն արդյունաբերությամբ առաջ տա-
նելու համար», ինչպիսիք են «Ազգային պատ-
մուրյուն»-ը, «Կրոնների պատմություն»-ը,
որը այդ միջոցին բոլորովին նորություն էր
նայ դպրոցներում «քե՛ իր գիտություն և քե՛
իր ուսուցում», ինչպես նաև «Հին կրոն հա-
յոց կամ Հայկական դիցաբանություն»-ը, մի
լուրջ ուսումնասիրություն, ինչիրված հայկա-
կան հերենոսության, հերքանու Հայաստանի
մենականներին և նշանավոր դիմերին:

Իրավ նոգեռական, բազմավաստակ ուսու-
ցիչ ու բազմամուս գիտական Դուրյան
սրբազնը նաև նոյնքան իրավ բանա-
ստեղծ էր: 1873 թվականին նա, «Տակալին
պատմակի դեռանասակ», գրական ասպարեզ
է իշել ոչ միայն որպես «բանաստեղծ Պետ-
րոս Դուրյանի եղբայր», այլ նաև որպես
նոր և շնորհալի բանաստեղծ:

Դուրյան սրբազնը ծնունդով բանա-
ստեղծ էր ինչպես իր եղբայրը՝ Պետրոս
Դուրյանը, և այդպիսին էլ մենց նա «ամեն
տեղ», իր կյանքի և գործունեության բոլոր
բնագալառներում, «իր մշակույթի բոլոր գի-
ծերուն վրա և բոլոր անկյուններուն մեջ՝
ան նոյնն է միշտ, բանաստեղծը՝ նախ և
ամենն ավելի» (Թորգոմ արքեպիսկոպոս
Գուշակյան):

Բանաստեղծ եղիշե Դուրյանի ժերողա-
կան առաջին վասակը նախ 1909 թվակա-
նին հրատարակվել է Զմյուտիհայում «Հով-
վական սրբեց» վերեագրի տակ: Ապա 1936
թվականին Երևանի մուս տպական «Սրբազն
քեար»-ում ամփոփվել է նրա ինքնազիր և
բարգմանած բանաստեղծական վասակը:

«Հովվական սրինգ»-ը բնեադատության
կողմից ժամանակին ընդունվեց զերմորեն և
գմանատվեց որպես «հայտնություն» իր
նոգեռու և կրոնաշունչ նկարագրություն մեր կրո-
նական նոր պաեզիայի բնագավառում, «իր
իմացական և բարոյական կյանքի նովիտնե-
րուն մեջ, իր նոցիին սեռունդը փնտող քրիս-
տոնյա բանակը նորի մը ուղղված և ազեր-
կական նովի մը եղանակված»:

Արդարեւ, Դուրյան սրբազնը իր բնվան-
դակ կյանքում, և ամեն տեղ և ամեն տա-

րազի տակ, նախ նոգեռական է եղել: Նա
մեծ էր նաև որպես նոգեռ-բարոյական
բարձր և կարապիր: Հայ ժողովուրդը, միշտ
հարգալից լստահությամբ, Դուրյանի բազ-
մաշնորհ անձնավորության և այլազան ծիր-
երի տակ տեսել, զնահատել և պատվել է
մանավանդ նայ նոգեռականը, որը, իրա-
կան, շաշափելի ծառայություն է մատուցել
իր եկեղեցուն և ժողովրդին, անվերապահո-
ւն արժանացել է համատարած հարգան-
քի, որպես պարկեշտ և պահիվ մարդ և մա-
տուր նոգեռական, որովհետև նա ունեցել է
ուսուցչական ասպարեզի և նովվական կոչ-
ման նվիրականության հատուկ զգացմուն-
քը:

Դուրյան սրբազնը խորունկ սիրով և
պաշտամունքով սիրել է Հայ եկեղեցուն,
որպես նայ ժողովրդի միության և պահպա-
ման միշնաբերդը, նայ ազգային դիմագծու-
թյան պահապանը, մեր ժողովրդի տոհ-
մային առաջինական և ազգային նկարա-
գրի ներշնչարանը:

Հոգեռականի կոչումը և ովար սրբազն
եղուում էր նրա համար՝ ծառայելու նայ ժո-
ղովրդին և Հայ եկեղեցուն:

Եվ Դուրյան սրբազնը չի դրել իր նո-
գեռականի ուսար և իր պարտք հատուցել
է նայ ժողովրդին և Հայ եկեղեցուն: Դրանով
նա արժանավորապես դարձել է զաղափա-
րական, նշմարիտ արժանիքների տեր մար-
դը, մտի և սրտի շնորհներով զարդարված
նոգեռականը, «մեր օրերու Շնորհալին,
սիրված, հարգված բոլորեն», — ինչպես
նշում է Վեհափառ Հայրապետը:

Հայ եկեղեցու հանդեպ Դուրյան սրբազ-
նի պաշտամունքը և նայ նոգեռականի գի-
տակցությունը բարձրացրի նրան:

1929 թվականին, Երևանի մում, իր նո-
րելյանական հանդիսությունների ժամանակ,
Դուրյան սրբազնն ասել է.

«Ինարկի պիտի շզարմանաք, երե ըսեմ,
քե հուզված եմ խորապես... և ավելի պիտի
ընտրեի լոել ու խոկալ, բայ քե խոսիր: Բայց
որովհետև կլանինամ կոստ մը ըլլալե, պետք
է որ շրումներս շարժին:

Իմ հիսնամյա ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆՆ նորել-
յանն է միայն որ կատարվի այսօր, և երե
ութիշներ տարբեր արժանիքներ ալ տեսան
անձին վրա, այդ իմ ուզած չէր: Ես հավա-
նեցա այս հանդիսավորության, ո՛չ քե ինք-
զինքս փառավորելու, այլ՝ միշնորդաբար՝
առիք մը բնծայած ըլլալու համար ամեն ա-
նոնց, որ կսիրեն իրենց եկեղեցին, և նա-
խանձախնելիր են պատվելու անոր մեկ պաշ-
տոնյան, որ իր պարտք կատարած է լոկ:
Գիտեմ՝ քե Հայ եկեղեցին համար կարեսը
ծառայություններով ապրող մարդեր չեն

պակսիր մեր մեջ, քեւ չեն ունեցած նորել-
յանի մը արժանանալու բախոր: Տարիներու
որոշ թիվի մը ճետ կազ շունի այդ փառա-
վուրամը. ծառայուրյան արժեքին մեջ կկա-
յան վարձքը: Ես այդ բախտավորուրյունը
ունենալով այս պահուա՛ չեմ նկատե՞ սա-
կայն, թե ինձի ուղղված ըլլան ծողովրդային
համակրանքի այս բոլոր ցուցերը, ծափ ու
գովեստ, այլ այդ ամենը կողերձալին Հայ
նկեղեցիին, որ ամենու Մայրէ է եղած, որ
իր կարք խմցուցած է մեզի ու պահած է
մեր գոյուրյունը: Անո՞ր կպարտիմ իմ ար-
ժանիքս, եթե ունիմ, և վարդապետական
կամ վարժապետական պաշտոնին մեծ մա-
սր անով է արդյունավորված:

...իմ տկար ուժերս պիտի պահեմ Հայ
նկեղեցիին համար, երբեմնի ծիրանազգեստ
այն՝ Դշխոյին՝ որ հիմա ցեցոտիներ է հա-
զած: Ան կսպաս իր բոլոր զավակներն հա-
վատի և անձնուրացուրյան փոխարինու-
րյուն մը: Սիրեցեք զայն, սրբիցեք անով,
ու անոր մեծուրյան գանձերուն մեջ պիտի
գտնեք ձեր հոգեկան հարստուրյունը, պատ-
րաստ ըլլալով, եթե հարկ ըլլա, պատռելու
ձեր պատմունանները և անոնց լավագույն
կառուներով վերստին հագլեցնելու և զար-
դարելու բովանդակ հայուրյան այդ սգավոր
ու դժբախ Մայրը»:

Դուրյան սրբազնը իր պատվական ան-
ձով և անձնուրաց կյանքով փառավորեց

Հայ նկեղեցուն: Իր բոլանդակ պաշտոնա-
վարուրյան ընթացքում ամեն տեղ սեր ու
հարգանք գտավ իր անձի հանդեպ և իր
գործունեուրյան ոգին հատկանշող ուղղա-
մբուրյան մասին, և բարձրուն և արդաւ
կերպով զեահատվեց թե՝ ծողովրդից, թե՝ իր
աշակերտներից, թե՝ իր գրչի և ասպարեզի
ընկերներից, և սիրվեց թե՝ իր կենդանու-
րյան տարիներին և թե՝ մասից հետո:

Դուրյան սրբազնը իր եսին բաղել է
լուսավոր, շոշափելի հետու և պայծառ հիշա-
տակ:


Երախտագետ սրտերի խորհումն է Դուր-
յան սրբազնի հիշատակը: Նա ապրում է,
կապրի ընդմիջո՞ւ, իր անվան հմայքով, իր
վաստակով և մահավանդ իր հկարագրով ու
շունչով՝ գալիք սերունդների սրտերում:

Դուրյանը, ուղիս արպար հոգկուրական,
պատմուրյան է պատկանում:

Օհնուրյո՞ւն բարի հիշատակին Դուրյան
սրբազնի, որ հիսուն տարի, իր իսկ բա-
ռերով ասած, «Կրազան թեմեր ավետա-
րանական նավատաքը բարողեց մեր նկեղե-
ցիի զավակներուն և նոյնչափ ու ավելի
տարիներով սորվեցուց աննախանձարար,
դասարանական արառներու վրա»:

Գալիք հայ հավատավոր սերունդների
սրտի և հիշողուրյան մեջ անշեշ լուսապաս-
կով կեանդակիլի Դուրյան ուսուցչի և նոգե-
վորականի սրտառուց պատկերը:





ԽՍՀԱՂՈՒԹՅԱՆ ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Փետրվարի 6-ին, Երևանի արվեստի աշխատողների տանը, մայրաքաղաքի և մեր Հայրենիքի հասարակայնության ներկայացոցիների մասնակցությամբ, տեղի ունեցավ հաղաղության պաշտպանության ռեսպոնտիկական կոմիտեի ընդլայնված կոնֆերանսը։ Սովետական կառավարության զինաթափման նոր առաջարկի մեջ Միության բոլոր եղացարական ժողովուրդն էլ տեսնում է իր շինարար կյանքի նոր հաղթանակը։ Որովհետև հայ զինվորը նույնպես տուն է վերադառնում Հայրենի շենքը ու քաղաքները կառուցելու, հողը մշակելու, կյանքը հարստացնելու համար։

Համագումարին ներկա էր նաև Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսը։

Զինաթափման հրատապ և այժմեական հարցին նվիրված զեկուցումով հանդես եկավ հաղաղության պաշտպանության ռեսպոնտիկական կոմիտեի նախագահ գրող Նաիրի Զարյանը։ Այնուհետև ելույթներ ունեցան Հայաստանի ժողովուրդական նկարի Արա Սարգսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Հովհաննիսյանը, բանաստեղծութիւնի Աղավնին, արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Հ. Ստեփանյանը և ուրիշներ։

Հանուն Հայ Եկեղեցու, հայ հոգևորականության և հայ հավատացյաների, հավաքվածների բոլոն ծափահարությունների ներքո, ամբիոնին է մոտենում Վեհափառ Հայրապետը և ողջունում Սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը, օրհնում աշխարհի բոլոր խաղաղասեր մարտիկներին և կոչ է անուածիացնել բոլոր զանքերը՝ ամրապնդելու համար խաղաղությունը ողջ աշխարհում։ Իր ճառուր Վեհափառ Հայրապետն ասում է։

«Էշմիածնեն դեպի Երևան ենանապարհին մեր երկների զինջ կապույտ ֆոնի վրա կդի-»

տեի վեհատեսիլ մեր Արարատը, այսօրվա պայծառ արեի շողերուն ներքեւ։ Եվ Արարատը ինձի կրվի խորեցանիշը հալեւթական խաղաղության։ Ինձի այնպես կրվի, թե խաղաղության ներմակ աղավենին, թոփչի առած Մասիսի կատարեն, այսօր կավառնի համայն աշխարհի վրա հաղթական։ Այս ոգեշնչումով եկա ձեր մեջ, այսանդ, ուր հավաքված են մեր Հայրենիքի խաղաղության կողմնակիցներու արժանավոր ներկայացուցիչները։ Թույլ ամեք ուրեմն ձեզ բերել ողջունը և սրտագին խոսքը Ս. Էշմիածնի։ Հայ հոգեռականությունը Հայաստանեն ներս և ի սփյուռ աշխարհի, զիսավորությամբ Ս. Էշմիածնի, անվերապանուրեն մասնակցած է խաղաղության համաշխարհային շարժման՝ առաջին հսկ օրեն։ Մեր խաղաղությունը կրխի նախ մեր կրոնական հավատեն, որովհետև մեզ համար Ս. Գիրքը, հատկապես Ս. Ավետարանը, ամեն բան առաջ և ամեն բան վեր սիրու և խաղաղության վարդապետություն մըն է։ Մեր խաղաղությունը կրխի նաև անշուշտ մեր ազգային պատմության փորձեն և մեր ժողովուրդի գերազույն շահերու գիտակցութենեն։ Մենք բոլորս հայ ենք և քաջ ծանոր մեր անցյալի տխուր պատմության էջերուն, որոնք լեցուն են անակուր ողբերգություններով, ավերածություններով և նախատակություններով, բոլորը արդյունք պատերազմներու, արշավանքներու, մեկ խոսնվ արդյունք խաղաղության պայմաններու շգոյության։ Անա թե ինչո՞ւ Հայաստանյաց Եկեղեցին և Մենք, իրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր խոր գոհունակությունը և Երախտագիտությունը պետք է հայտնենք բոլոր խաղաղության պաշտպաններուն, հատկապես մեր հայրենի կառավարության, որ ինչպես միշտ, վերջին շրջանին անգամ մը ևս հանդես եկավ և խաղաղսեր մարդկու-

թյան սիրար շարժեց ամբողջական և բնդիքանուր զինաքափման առաջարկությամբ և Խորհրդային Միուրյան մեջ զինյալ ուժերու կրթաման որոշումով:

Մեր իղձն է և Մեր աղօրքը առ Աստված, որ խաղաղության ոգին առավել ամրապնդելի և դառնա անխորտակի ամրոց մը և ապահովի բարօրությունը, հառաջդիմությունը և եղբայրությունը աշխարհի բոլոր ժողովուրդներու: Հայաստանյաց ծիեղեցին,

Համագումարի մասնակիցները միաձայն բանաձև ընդունեցին, որով ողջունում և չերպարեն պաշտպանում են Սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը և հավանություն տալիս խաղաղությունը ամրապնդելու նպատակով նրաբոլոր միջոցառումներին:

Այնուհետև խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ Ն. Զարյանը Հայաստանի խաղաղության



ՎԵՀԱՓՈԽ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒԹ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՕԳՏԻՆ ԿԱՅԱՑԱՌ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մեր ամբողջ նովորականությունը, մեր բոլոր հավատացյաները, ուր որ ալ գտնվին, պիտի շարունակեն բարողել ու գործել հասուն խաղաղության և հանուն ժողովուրդներու տևական բարեկամության:

Այս մատադրությունը, այս նույզերով, բույլ տվյալներու վերջացնել Մեր խոսքը ճին մաղթանու մը հայկական:

«Տէ՛ր Աստուած հարցն մերց, Տու աշխարհին խաղաղութիւն, Ազգին հայոց սէր, միութիւն»:

մարտիկների՝ լուսավորության, գիտության, արվեստի, արդյունաբերության, գյուղատնտեսության ֆրոնտում աշխատող 56 հոգու հանձնում է խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պատվորերը: Վերջում ընտրվում են խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի կողմից փետրվարի 15-ին Մոսկվայում հրավիրվող համագումարի պատգամավորներ: Այդ պատգամավորների թվումն է նաև Վեհափոխ Հայրապետը:

Փետրվարի 7-ին Վեհափոխ Հայրապետը ցանկանալով խաղաղության մասին իր

մտածումներին և հովզերին մասնակից դարձնել նաև իր հավատացյալ զավակներին, հետեւյալ բովանդակալից պատգամն ուղղեց, որը ճայնասփռվեց Երևանի ռադիոյից:

«Միենի՛ հավատացյալ ժողովուրդ Մեր.

Երեկ, 6 փետրվար 1960, Մեր համար ուրախության և միսիքառության մեջ օր մը եղավ, ու Երևանու Մայր Արքու վերադառնալով, մտածեցինք մասնակից ընել նաև ձեզ՝ Մեր հովզերուն և Մեր ապրումներուն, ձեզ՝ ի սիյուս աշխարհի ցրված պանդուխտ զավակներ Մեր:

Երեկ մեր մայրաքաղաքի սիրուն դանիիններն մեկուն, Արվեստի տան մեջ, մասնակցեցանք մեր Հայրենիքի խաղաղության պաշտպանության կողմնակիցներու հանդիսավոր նիստին, որ նվիրված էր Խորենիային Միության կառավարության կողմե՛ բոլոր պետություններուն ուղղված՝ ամրացական զինաքաղաքամաս առաջարկության, ինչպես և Խորենիային Միության զինյալ ուժերու կրթատման որոշումին:

Այս բարի, այս աստվածահանու առաջարկի տարիվ, հանուն մեր Ս. Եկեղեցիին, հանուն մեր համայն հավատացյալ ժողովուրդին, Ս. Էջմիածնեն Մեր ողջույնը ովկինք պատկանելի համագումարին, և անգամ մը ևս օրեննցինք աշխարհի խաղաղության սրբազն գործը, անգամ մը ևս օրեննցինք բոլոր խաղաղաբանները, որոնց համար մեր Տերը Հիսուս Երանելի օր մը ըստ, թե անոնք զԱստված պիտի տեսնեն:

Մենք, իրեւ Հայաստանյաց Եկեղեցւոն Հայրապետ, խորապես միսիքարված ենք, տեսնելով, թե ինչպես օր օր կամրանան հիմքերը խաղաղության և ժողովուրդներու միջև բարեկամության, թե ինչպե՞ս մեծ պետություններուն զեկալարները կմոռենան իրաւու, առավել կճասկնան զիրար, և միասնական նիգերով կաշխատին հարբել հանգարեր՝ ընդհանուր և ամրոշական զինաքաման: Միսիքարված ենք, այս, որ մարդկությունը բայլ առ բայլ կճառաջանա դեպի խաղաղ ու շինարար գոյակցություն, դեպի բարօղություն և երջանկություն, դեպի բարօղությունը և երջանկությունը անհայր բոլոր ազգություններուն:

Քայլ, սիրելինե՛ր Մեր, այսօր, եր մեր սիւնը լեցված է այս մասնությունով ու այս հովզերով, չենք կրնար անտեսել՝ այն տագնապայի կացությունը, որ արտասահմանի հայ զաղութներուն մեջ, տեղ-տեղ սկսած է

դրու բահայ ներքին խոռվություններու և պատականութեան:

Հայ Սփյուռքի եկեղեցական կյանքը նեռու է խաղաղ ու շինարար ըլլալի: Մայր տված խոռվություններուն ու պառակտումները ոչ միայն իրավ իմաստն զուրկ են, և ոչ մեկ շահ չեն բերեր մեր Ազգին, այլ ուղղակի կյանքնեն մեր Ս. Եկեղեցին ու կցրվեն մեր հուար: Եվ ավելին, ներքին այդ խոռվությունները վնասակար ու անպատճառ կդառնան հայ ժողովուրդին համար հաշու օտար ժողովուրդներուն և հյուրենիալ պիտուրյուններուն: Մինչդեռ բոլոր մեր եկեղեցիներուն և բոլոր մեր հավատացյալներուն անխորի սկզբունք պետք է ըլլա հյուրընկալ երկիրներու մեջ ապրիլ իրեւ օրինապահ, կարգապահ ու խաղաղասեր քաղաքցիներ:

Անա թե ինչու Մեր սրբազն պարտքը կնկատենք, այսօր անգամ մը ևս Մեր իդք հայտնելու և Մեր հորդորը ուղղելու Ձեզ բոլորիդ, սիրենի՛ զավակներ Մեր, բոլորիդ անխորի, որ հայու սիրու կկրեք, որ մեսք հավատարիմ մեր Տիրոջ և Փրկչին՝ սիրու և խաղաղության Ավետարանին, որ միշտ մտածեք խաղաղության մասին և միշտ գործեք հօգուա խաղաղության, և մանավանդ սիրու և խաղաղության ոգինվ առաջնորդվիք ձեր եկեղեցական համայնքներն ներս:

Եկեղեցի և անմիաբանությունն, Եկեղեցի և պառակտում իրաւ մերժող, իրաւ Ժխոտող հասկացություններ են. «Զի ոչ եք խոռվութեան և Աստուած, այլ խաղաղութեան, որ պէս համայն յեկեղեցիս սրբոց»: Ուտեմն ապրեցե՛ք և գործեցե՛ք և ձեր Եկեղեցական, կրքական, մշակութային կյանքը կազմակերպեցե՛ք անալմուկ, սիրով, միարան, առաջնորդված մեր սուրբ հավատքի լույսով, որ ամրող մեր ժողովուրդին կրաշնչվի ավելի քան տասնվեց դարեր ի վեր, սրբազնասուր էջմիածնի Լուսավորչյան անձար կանքենեն:

Սիրու և խաղաղության ոգի կիայցենք ի Տյառնե, նաև Մեր այն զալակներուն համար, որոնք բոյլ կարծիքներու շփոքած, անջատումներու կորսայան նամբաներու վեա կրափառին: Ս. Էջմիածնի լույսով է, որ ամեն հայ պետք է զանն ուղիդ հանապարեր իր հոգենը կյանքին, ուղիդ հանապարեր դեպի խաղաղության ու Փրկության հավահանգստը: Ս. Էջմիածնին է, որ բոլորդ պիտի միացնեն, բոլորդ պիտի ամրացնեն, բոլորդ պիտի ուրախացնեն:

Ուշեմն, սիրելի՝ հավատացյալ ուղիներ Մեր, միացեմ, զորացեմ և չեն ու պայծառ պահեցեմ՝ ձեր եկեղեցիները, հայ դպրության ձեր օջախները։ Անսպառ եռամբով ու անայլալլ լավատեսությամբ և միացյալ ուժերով հառաջ տարեմ ազգապահապահման նվիրական գործը, միշտ հավատարիմ մեր հախեցաց լուս հավատքին, միշտ հավատարիմ հավերժական լուսի փառու Մայր Արքու Ս. էջմիածնին, միշտ հավատարիմ հայ ժողովուրդի սրբություններուն։

Թուրքիդ ողջուն, բոլորիդ օրինություն՝ Փրկչի հջման Ս. Սեղաննեն։

Թուրքիդ ողջուն, բոլորիդ օրինություն՝ սուրբական Մասիս սարեն։

Թուրքիդ ողջուն մեր սրբերեն, ձեզ միշտ սիրող կարուտավառ մեր սրբերեն։

Թող Տերը մեր ամենակալ մեզ ամենուս ողորմի և պարգևե այժմ և միշտ՝ «խաղաղութիւն աշխարհին, սէր, միուրին Հայոց Ազգին»։

Փետրվարի 12-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պաշտոնական հրավերը և ուղարկեց Մոսկվա՝ մասնակցելու զինաթափման օգուին սովետական հասարականության համագումարին։

Առավոտյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը, շրջապատված միաբանությամբ, Մայր Տաճար է մտնում հջման Ս. Սեղանի առողջ աղոթք մատուցելու, ապա միաբանության հետ ճանապարհում դեպի Երևանի օդանավակայանը։

Երևանի օդանավակայայնում Վեհափառ Հայրապետին ճանապարհում էին եկել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առջնորդեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Արարատյան թեմի առաջնորդական փոխնորդը, քահանայական դասը, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը։

Դեպի Մոսկվա Վեհափառ Հայրապետին ընկերանում են Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքապահսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Հոգեշնորհ Տ. Հուսկի Վարդապետ Սանթուրյանը և բարեշնորհ Սանդոր սարկավագ Բեհրուդյանցը։

Տեղական ժամանակով ժամը 10-ին, ինքնաթիւը կտրվելով Հողից, ուղղություն է վերցնում դեպի Մոսկվա և երեկոյան ժամը 7-ին վայրէջք կատարում Մոսկվայի Վնուկովյի օդանավակայայնում։ Օդանավակայայնում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առջնորդ Կրօնական պաշտամունքների գործերի խորհրդի անդամ պր. Սոլովյովը,

Մոսկվայի Հայոց Հոգմոր Հովիվ Հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գեորգյանը, Տ. Խաչատրուկ ավագ քահանան, եկեղեցական խորհրդի անդամները և Հայ Հավատացյալներ։ Պր. Սոլովյովը, հանում Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի և Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի, բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին։

Փետրվարի 14-ին, Կիրակի, Մոսկվայի Հայոց Եկեղեցին լի է Հայ Հավատացյալ ժողովրդով։ Մատուցվում է սուրբ պատարագ։ Պատարագին է գերապատիկ Տ. Սահակ արքապահուպուր, Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Եկեղեցի։ «Հայր մեր»-ից առաջ նորին Ս. Օծությունը իր Հայրապետական ողջունն ու օրհնությունն է բաշխում բոլոր ներկաներին։

Փետրվարի 15-ին, Երկուշարթի, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով առաջնորդվում է դեպի Կրեմլ, ուր Կրեմլի թատրոնի շենքում բացվում է զինաթափման օգուին սովետական հասարակայնության կոնֆերանսը։ Կոնֆերանսի դահլիճն էին Հավաքվել Սովետական երկրի բոլոր միութենական և ավտոնոմ սեսպուլիկաների, երկրամասերի և մարզերի պատվիրակները՝ գրողներ, գիտնականներ, հասարակական գործիչներ, բանվորներ և ուսանողներ, որպեսզի մեր երկրի ամրող ժողովրդի միահամուռ կամքը արտահայտեն հանուն ամրողական զինաթափման և խաղաղության ամրապնդման։

Նախագահության սեղանի շուրջ տեղ է հատկացվում Վեհափառ Հայրապետին։ Դահլիճում հյուրերի թվում են Խաղաղության Համաշխարհային Խորհրդի պատվիրակությունը, չին գիտնականների պատվիրակությունը, Բուզդարիայի, Հունգարիայի, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի, Հնդկաստանի, Ֆրանսիայի, Ճապոնիայի և այլ երկրների խաղաղության պաշտպանության կողմնակիցների շարժման ներկայացուցիչները, ԱՄՆ-ի կվակերների պատվիրակությունը, Սովետական Միության կրօնական համայնքների պետեր, ղեկավարներ, ներկայացուցիչների Ալյուտարքների համոզմունքների և գալանանքի տեր մարդիկ կողք-կողքի են եկել քվեարկելու հանուն ընդհանուր և լրիվ զինաթափման, հանուն ժողովուրդների խաղաղության և բարեկամության։

«Սովետական ժողովուրդը կողմնակից է ընդհանուր և լրիվ զինաթափման հարցի վերաբերյալ ընդարձակ և բովանդակալից զեկուցում է կարդում Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նախագահ գրող Ն. Ս. Տիխոնովը։

- Փետրվարի 15-ի առավոտյան նիստում ելույթ ունեցան նաև ակադեմիկոս Ա. Վ. Թոփլիկը, գրող Իլյա Երենբուրգը, Սովետական Միության մարշալ Կ. Ա. Մերեցկովը և ուրիշներ։ Սրտառուց էր բելոռուս ուսուցչուհի, նախկին պարտիզանուհի Ա. Կողեր ելույթը, որն իր աշքերով տեսել էր պատերազմի արհավիրքները, իր հարազատների մորթուվելը։ «Որպես մայր, ես չեմ ուզում; որ իմ երեխաները, ամբողջ երկրագնդի երեխաները, ապրեն այդ արհավիրքը։ Իմ մեծագույն ցանկությունն է, որ երեխաները

վով, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ և բուռն ծափահարությամբ».

«Հայ ժողովուրդի հավատքի կեդրոն Ա. Էջմիածնեն բույլ տվել ողջունել այս համագումարը, ուր հավաքված են Խորեղային Միության Մեծ Հայրենիքի բազմամիլիոն խաղաղասեր մարդոց ամենասականալոր ներկայացուցիչները։ Այս հանդիսավոր առիրով, իրեւ Հայոց Հայրապետ, խանդավառ սիրով կուգանք անզամ մը ևս ողջուներու մեր Հայրենի կառավարության խաղաղասիրական աստվածանան բաղաժական աստվածանան» բաղաժականության է.



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐքը ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ԱՌԱՋ

ժապտան, ծաղիկներ աճեցնեն, դպրոցներ հաճախեն, ապրեն կյանքի բերկրանքը»,

Երեկոյան նիստում հանդես եկան ՍՍՌՄ ժողովրդական արտիստ, Վրաստանի խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամ Ա. Ա. Խորավան, ՌՍՖՌՆ Մանկավարժական գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ի. Ա. Կահրովը, ակադեմիկոս Լ. Ի. Սեդովը և ուրիշներ։

Երեկոյան նիստում ելույթ ունեցավ նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը ոռակերեն լեզ-

րյունը և ի մասնավորի մեր Երկրի իմաստում և մարդասիրական անսպառ եռանդով լեցան Վարչապետ Նիկիտա Խորչշովի առաջարկությունը ամբողջական զինաքավիման, ուղղված աշխարհի բոլոր պետություններուն։

Հարգանք և շնորհակալություն մեր Կառույցարքան և բոլոր մեծ պետությանց ազնիվ ղեկավարներուն, որոնք միասնական ջաններով կաշխատին հարթել նաև ապահով ընդհանուր և ամբողջական զինաքավիման, որոնք կաշխատին մարդկությունը առաջ-

նորդիլ դեպի խաղաղ ու շնարաց գոյակցություն և դեպի ընդհանուր բարօրություն:

Ս. Գիրքը կպատվիրէ մեզ բոլորին՝ երաժարի կյանքի մին զգաւուներն «և նորոգի նոգում մտաց» և «զգենով զեր մարդ» (նիստ. Դ 24):

Մարդկային ողբերգություններով լեցուն, երկար դարերու պատմության փորձն նետու, ավելի բան երբեք անմրածիչն է իրոք, որ մեր օրերու մարդիկ, մանավանդ պետությանց զեկալար մարդիկ, եկեղեցիներու պետեր ու հասարակական գործիչներ, նեռանան մտածումի և գործելակերպի մին կաղապարներն և համարձակ վեռականությամբ հանդիս զան իրու նոր մարդիկ, նոր ոգիով, նոր խոսքով և նոր գործելով: Մեր օրերու ճշմարիտ նոր մարդ խաղաղության մարդ է, մերկացած մին հախապաշտառներ, մին բշնամուրյուններ, մերկացած՝ իր նմանին աշխատանքը, նողն ու ազատությունը հափշտակելու կիրքներն, կիրքներ, որոնք դարեր շարունակ բնորոշած են, ավազ, հարաբերությունները մարդկային հասարակության և միջազգային կյանքին, ծեսն ու ազատությունը հափշտակելու անթիվ-անհամար պատերազմներու, արհապիրներու և անավոր տառապահներու:

Նոր մարդը, խաղաղության մարդը, պետք է ըլլա բարի ձեռներով կառուցող մարդը: Նոր մարդը, խաղաղության մարդը, իր նմանին մեջ պետք է տեսն իր աշխատակիցը, իր օգնականը, իր եղբայրը:

Այսունետև, խաղաղության ու մարդասիրության ոգիով նորոգիած մարդիկ բոլ առաջնորդին ժողովությները՝ դեպի կյանքի ապահովություն, դեպի հառաջիմություն, դեպի ծաղկումը գիտություններու և արվեստներու, դեպի երշանկություն:

Հայ ժողովուրդը և Հայ եկեղեցին ևս խաղաղության դատին վերջնական հարաբեակին մեջ կտեսնեն իրենց կյանքի անվետանգությունը, իրենց հառաջիմության և բարօրության գրավականը և իրենց ոսկի ապագայի ապահովումը:

Հայ եկեղեցին, Ս. էջմիածնի գլխավորությամբ, ինչպես ցարդ, նաև այսունետև սիամի շարունակի իր ձայնը բարձր հնչեցնել և իր աշխատանքը շարունակել հանուն խաղաղության և հանուն ժողովությներու եղարարության:

Մենք արդեն Մեր նոգիի աշխերով կտեսնենք, քեզ «արդ, ժամ իսկ է մեզ ի բնոյ զարբնակ, զի այժմ մերձ է մեզ փրկութիւն՝ բան յորժան մանատացացն». գիշերն մերժեցաւ և տիմ մերձեցաւ» (Հոռմ. ԺԴ 12), զի զողոմութիւն և ճշմարտութիւն պատահես-

ցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրցին» (Սալմ. Մ 11):

Ողջունին և օրենություն խաղաղության սրբազն գործին: Ողջունին և օրենություն բալոր խաղաղաբարեներուն: Ողջունին և օրենություն մ խաղաղության պատվար Խորեգրդային Միության:

Խաղաղասեր եղբայրներ և բույրեր, ձեզ բալորիդ կմադրենք անսպառ եռանդ ու պայծառ լավատեսության ոզի և փառավոր հաղթանակ:

Փետրվարի 16-ին, երեքշաբթի, առավոտյան նիստում ընթերցվեցին բազմաթիվ ողջունին հեռագրեր մեր երկրից և արտասահմանից: Ապա ելույթ ունեցավ Մովկայի և Համայն Ռուսի Պատրիարք Ալեքսին, որն իր ելույթում նշեց, որ Ռուսական Ռողղափառ եկեղեցին, ինչպես միշտ, այժմ էլ աննկուն կերպով պաշտպանում է Սովետական կառավարության խաղաղասիրական առաջարկությունը և բոլոր խաղաղասեր մարդկանց հետ պահանջում է սրբերից խոփեր և նիզակ-նիրից մանգաղներ կոփեր:

Կոնֆերանսում ելույթ ունեցան նաև Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նախագահության անդամ, Խաղաղության պաշտպանության կանադական կոնգրեսի նախագահ Ջեյմս էնդիկոտը, Խաղաղության Համաշխարհային Խորհրդի քարտուղար պրոֆ. Վ. Չիսկամեն, ակադեմիկոս Ն. Վ. Ցիցինը, գրող Ն. Զարյանը և ուրիշներ:

Փետրվարի 16-ի երեկոյան նիստում ելույթ ունեցան Խաղաղության պաշտպանության Անգլիական կոմիտեի նախագահ Գորդոն Շաֆերը, Խտալական խաղաղության շարժման ներկայացուցիչ Զոյս Լուսան, գրող Բորիս Պոլենովը: ԱՄՆ-ի խաղաղության կողմնակիցների անունից կոնֆերանսին սրտագին շնորհավորանքներ հաղորդեց ամերիկացի գրող Ալբերտ Կան, Կոնֆերանսը արտահայտեց սովետական ժողովրդի և խաղաղասեր ամբողջ ժողովուրդների կամքը և ընդունեց բանաձև միջուկային զենքի փորձարկումները զադարեցնելու մասին, և դիմում՝ աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերին:

Փետրվարի 17-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետին այցելեց Խիդայի և Համայն Լատվիայի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը և երկու Հայրապետների միջև սեղի ունեցավ սրտագին զրուց:

Փետրվարի 18-ին, հինգշաբթի, Վեհափառ Հայրապետը այցելեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Պուզինին և եկեղեցական հարցերի շուրջ զրուց սունեցավ

նրա հետո նույն օրը, հետմիջօրեին, Վեհափառ Հայրապետը այցելեց Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին՝ Պատրիարքարանում։ Ընդունելությունը տևեց մոտ մեկ ժամ և բույր Եկեղեցիների երկու Պետերը ունեցան շերմ զրուց, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը Ալեքսի Պատրիարքին հրավիրեց ամառը այցելել Ս. Էջմիածին։

Փետրվարի 19-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետը «Մոսկվա հյուրանոցում ընդունեց արգենտինահայ տուրիստներին։ Նույն օրը, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը ընդունեց Մոսկվայի հայոց եկեղե-

ցական խորհրդի անդամներին և երգեցիկ խմբին և եկեղեցական հարցերի շուրջ զրուց ունեցավ նրանց հետո ի պատիվ նրանց Վեհափառ Հայրապետը կազմակերպեց ճաշկերուց։

Փետրվարի 20-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ Մոսկվայից և վերադարձավ ինքնաթիռով Թրիլիսի՝ իր շքախմբով մասնակցելու համար Վրաց նորընտիր Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ միտրոպոլիտի գահակալության հանդեսներին։





ՄԱՅՐ ԱԹ ՈՒ ՈՒ Ի Մ

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, «Տօն անուանակոլութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, պատարագեց փոխ-լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Եղիշե Վարդապետ Մարգարյանը:

Սուզր պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Տօն ծննդեան Ցովհաննու Կարապետին»: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչանը:

ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագին էր Մայր Տաճարին առընթեր Եկեղեցական արվեստի թանգարանի վարիչ Հոգեշնորհ Տ. Հուսիկ Վարդապետ Մանթուրյանը: Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց Հոգեհանգիստ նորոգ հանգուցյալ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելքոնիդեկ Գ-ի հիշատակին: Հոգեհանգստի ժամանակ քարոզեց Հոգեշնորհ Տ. Եղիշե Վարդապետ Մարգարյանը՝ հանգուցյալ Հովկապետի կյանքի և գործունեության մասին, բնութագրելով նրան որպես Վրաց Եկեղեցու զարթոնքին և խաղաղության սրբազն գործին նվիրված մեծ Հոգենորականի:

ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց մեծ դահլիճում տեղի ունեցավ ուսանողության կողմից կազմակերպված հերթական գրական երեկո: Ընթերցվեցին ինքնագիր շարադրություններ, կատարվեցին արտասանություններ, մեներգեր, խմբերգործություններով:

Երեկոյի վերջում փակման խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒՆՎԱՐԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագին էր արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչանը:

Սուզր պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒՆՎԱՐԻ 28-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Զիկագոյի նորդերն համալսարանի պրոֆեսոր, հնագետ և աստվածաբան Առնոլդ Շուկը: Հարգելի հյուրը, բարեշնորհ Ցովհաննես սարկավագ Եղիայանի առաջնորդությամբ, այցելեց Մայր Տաճար, Եկեղեցական արվեստի թանգարանը, Եղավ Հոգևոր Ճեմարանում, Մայր Աթոռի գրադարանում: Պրոֆեսորի խնդրանքով Վեհափառ Հայրապետը բարեհանձեց Վեհարանում ընդունել նրան և շերմ զրուց ունեցավ հետո: Հյուրը Մայր Աթոռից մեկնեց լավագույն տպավորություններով:

ՀՈՒՆՎԱՐԻ 31-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում, պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը՝ Քարոզեց Հոգեշնորհ Տ. Հուսիկ Վարդապետ Մանթուրյանը՝ բնաբան ունենալով «Ձի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի և որ խոնարհեցուցանէ զանձն բարձրացի» (Ղուկ. ԺԴ 11):

ՓԵՏՎԱՐԻ 3-ԻՆ, ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց մեծ դահլիճում,

նախագահությամբ վերատեսուշ գերաշնորհ
Տ. Հայկաղուն եպիսկոպոս Արքահամյանի,
առաջարկություն դոկտ. Կ. Պետրոսյանը դա-
սախոսություն կարդաց «Առամեների դերը
ընդհանուր մարմնի առողջության մեջ» թե-
մայով, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ:
Վերջում սրբազնը շնորհակալություն
հայտնեց հարգելի բժշկին շահեկան դասա-
խոսության համար

Փետրվարի 7-ին, Կիբակի, Մայր Տաճա-
րում սուրբ պատարագ մատուցեց Արքահատ-
յան թեմի առաջնորդական փոխանորդ հո-
գեշնորհ Տ. Վահան Վարդապետ Տերյանը:
Պատարագի հայր սուրբ դաստիարակիչ
քարոզ խոսեց «Եւ որ հաւատայ յիս՝ ոչ եր-
րեք ծարաւեսցի» (Յովհ. Զ. 35) բնարանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:



ԿԾՐԺԻՔՆԵՐ ԵՂԻՃԵ ՄՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՄԵՄԻՆ



ուրյանի ամենեն ինքնատիպ
և գրավիչ գիծը վարդապետի իր
բարձր շնորհն էր, դասական
կատարելությամբ օժուված ու
շեշտաված Ան մեզի կհիշեցներ մեր հինա-
վորց Նարեկացիները, Շնորհալիները և Տա-
թևացիները. գիտուն, օծուն նկարագիրով և
զիտակից բարեպաշտությամբ:

Վարդապետը Հայ Եկեղեցվո նվիրապե-
տության մեջ է՞ն լուսավոր գեմքն է, Ս. Մես-
րոպի մտատիպարով, որուն լուսապասակին
քով կդալկանա և կանչքանա ուրիշ տիտ-
ղոսներու փառքն ու շուրջը:

Դուրյան իմաստասեր միտք և ներհուն
աստվածաբան մըն էր: Փիլիսոփայական և
աստվածաբանական հին դպրոցները և նոր
դրությունները գաղտնիք չունեին իրեն հա-
մար, և մենք հիացմունքով կհետևեինք իր
վերլուծումներուն:

Դուրյան սրբազնը հոգիով խոնարհ, մըտ-
քով հզոր, նկարագիրով մաքուր ու աննենգ,
բանաստեղծ և բազմահմուտ բանասեր,
շնորհազարդ եկեղեցական, անզուգական
դեմք մըն է մեր մեջ:

ՄԵՄՈՑ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐՈՅԱՆ

Իր սրտին ամենեն վառ հրայրքներեն մին
եղած է սակայն Ազգին սերը: Անոր զգա-
ցումն է, որ զինքը մղած է ամենեն տքնա-
շան աշխատություններուն. իր գրականու-
թյունը ազգային գիտությանց ոլորտին մեջ
շրջանակված արդյունավորություն մը եղած
է գլխավորապես. իր ուսուցչությունը ազ-
գային կրթության և մշակութի գերազանց
նվիրում մը եղած է ամեն տեղ, իր բեմը ժո-
ղովուրդին հոգևոր դաստիարակության դաշ-
տը եղած է միշտ Ազգային Եկեղեցվո հովա-
նիին տակ:

Ուսուցչի և քարոզչի, բանաստեղծի և բա-
նասերի, նվիրակի և հովիչ, առաջնորդի և
պատրիարքի իր գործունեության գիծը ան-

ցած է միշտ Ազգին կյանքին մեջեն, անոր
սիրտեն ընդունելով միշտ իր կորովին թա-
փը, անոր ապագային մտածումնեն՝ իր հուց-
սին կենդանությունը, ու անոր ահավոր վիշ-
տերեն՝ խորապես հզոր իր կամքին ներույժ
մեծությունը:

Ու իր ասպարեզին բովանդակ տարածու-
թյան վրա, Սկյուղարեն Պարտիզակ, Եվրո-
պային Արմաշ, Պոլիսեն Երուսաղեմ, իրմեն
անբաժան եղած է շարունակ իր ժամանակը.
պարտականության զգացումին սրբությունը
ճաշակած մարդու ներքին երանության
ճառագայթումը իր կերպարանքին վրա:

ԹՈՐԳՈՍ ԵԳԻՆԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԱՅԱՆ

Կարող ուսուցիչներ, հմուտ բանասերներ,
կորովարան քարոզիչներ մենք ունեցեր ենք
և այժմ իսկ ունինք, բայց Դուրյան Եղիշի
սրբազնին մեջ անբացատրելի շնորհ մը,
ներքին թուլություն մը կզգացվի, որ անոր
անձն ու անոր գործը (իր բոլոր մտավոր
ձևերուն մեջ) անդիմագրելիորեն սիրելի
կդարձնեն, և այդ թաքուն շնորհը, այդ խոր-
հըրդավոր հրապույրը՝ անոր էության հիմը
կազմող բանաստեղծական իսկությունն է,
Այդ է, որ կրացատրե անսահման պաշտումն
ու գորովագին պատկառանքը, զոր անոր բո-
լոր աշակերտաներն ունեցած են իրեն համար,
աշակերտներ, որոնցմ ումանք իրենք իսկ
առաջնակարգ զեմքեր դարձած են շատոնց
ի վեր և իրենց տաղանդի և հմտության ամ-
բողջ մեծությամբը հոժարակամ կիոնարհին
վարպետներու ամենեն ներշնչողին, ամենեն
հեղինակավորին և ամենեն սիրելիին առջև
Այդ է, որ կրացատրե մասնավոր հմայքը, որ
կարտաշնչվի քարոզներեն այդ եկեղեցակա-
նին, որոն խոսքը, միշտ ծանրաբեռն հոծ
մտածումով ու բազմակուտակ հմտությամբ,
ունի նաև միշտ թրթում մը ներքին, մտքի
լայնարաց թեմբու համր ալլ հզոր շարժման
մը շունչը, որ այդ խոսքն իր բոլոր ծանրու-

թյամբ միջոցին մեջ կրարձրացնե և ունկնդիրներու հոգվույն վերև զայն կառկախե՝ իր թավ ու խոր ներդաշնակություն մը բարձունքների իշնող: Չորս անգամ ևս բախտն ունեցեր ևմ Դուրյան սրբազնի քարոզները լսելու. առաջին անգամ Փարիզ, Հայրենաշունչ հոյակապ քարոզ մը՝ սովորական պոստարանություններին ինչքան տարրեր՝ արվեստագիտ խորհուղի մը տեսիլը վերածնվող Հայրենիքին. երկրորդ անգամ՝ դարձալ Փարիզ՝ սկատերազմի ատեն ինկած հայ և հովուն նահատակներուն հոգեհանգըստյան պատարագին, զմացլիի զուգակշիռ մը հայ ու հելլեն ճակատագիրներուն. երրորդը երրուազեմ՝ կրոնական բարձրագույն խորհուգներու խորիմաստ ու վեհաշունչ մեկնաբանություն մը. և չորրորդը՝ նորեն երուսաղեմ՝ Սահակա և Մեսրոպա տոնին առթիվ՝ հայ ազգային մշակութի երկու հիմնադիրներուն գործին նշանակությունը բացարող ճառ մը այնքան ճշտատես որքան խանդավառ դատումի. և յուրաքանչյուր անգամ՝ մտածող բանաստեղծի այդ սքովյալ հուրն զգացեր եմ իր խոսքին մեջ, ու ցավեր եմ, որ տարիներե ի վեր իր արտասանած բազմաթիվ քարոզներն գեթ կարուրագույններուն սղագրությունն առնված ու հրապարակված լըլա:

ԱՐԵԱԿ ԶՊՊԱՆՑԱՆ

Մեր անմահ բանաստեղծ Պետրոս Դուրյանին եղբայրը, եղիշե Դուրյան, անմահ պիտի մնա ժամանակակից պատմության մեջ իր եկեղեցական, իր վարչագետ, իր ուսուցիչ և իր գրագետ:

Իր եկեղեցական, ոչ միայն քաջ ըմբըսնածէ Հիսուսի աստվածային վարդապետության ոգին, այլև յուրացուցած է զայն իր կյանքին բոլոր շրջաններուն մեջ: Ավելին ըրած է. տաճարին ամբիոննեն ու մամուլին բնմեն քարոզած է զայն հայ ժողովուրդին, որ մաքուր խոսքի ծարավն ուներ, մաքուր բերանե մ'արտասանված:

Իր վարչագետ, իմաստությամբ կառավարած է իր հոտը Պարտիզակի, Արմավակամ Զմյուռնիակի մեջ, և, դժնդակ պարագաներու մեջ Կոստանդնուպոլիսի և Երուսաղեմի Պատրիարքական Աթոռներուն վրա բարձրանալով, կրցած է խաղաղել փոթորիկներն ու բազմարդյուն պաշտոնավարություն մ'ունենալ:

Իր ուսուցիչ, իր մտքին ու սրտին անսպառ գանձերը բացած է իր աշակերտներուն առջև, որոնք իրեն կպարտին իրենց հոգմուն ու մտավոր զարգացումը և իրմեն սորված էն սիրել Ազգին ու ծառայել անոր, ամսամ օք կրնանք ըսել, թե եղիշե Դուրյան, Եղիշա

մարգարեին պես, իր մաշկյակը ձգած է բազում եղիսեներու վրա:

Իր գրագետ, առաջնակարգ դիրք մը գրաված է հայ զարության մեջ, թե՛ իր հողակապ թարգմանություններով, և թե՛ մանավանդ իր գողտրիկ հեղինակություններով, որոնք, ոճին հրապույրն ու գաղափարին վեհությունն իրարու խառնելով, նվիրական օծումով մը կպարարեն ընթերցողին միտքն ու սիրտը: Եթե հոգեփոխության հավատայի, պիտի ըսեի, թե ներսես Շնորհալին է, որ կվերապրի Եղիշե Դուրյանի մեջ, ավելի հոխացած:

ՄԻԱԱԾ ԶԲՐԱԾ

Դուրյան որբազնի բանաստեղծությունը կխտացնե խորապես զգայուն հոգի մը, քաղցըր, անհունորեն ներողամիտ, թայց տագնապահար ու վարանոտ, ավելի վարված լավագույն այլուրի մը հույսին ըղձակաթ սերեն քան թերես անհասանելի անալլայլ ապահովութենեն: Ամեն ինչ կրոննով օծված, ալլակերպված է հոն, և ամեն ինչ մաքուր է հոն կղերական արատներե: Ստաշիի և զմուռախ արբեցուցիչ խնկում մը կրուռամնավետ զայն, ու կարելի չէ դուրս գալ այդ բանաստեղծութենեն՝ առանց հոգիին մեջ բան մը զգալու զինքը տոգորող բուրմունքներուն հեշտանքեն: Կրոնքը, հոս, անծես հոգեկան վիճակ մըն է, զգացական (sentimental) միստիկականություն մը, որ ազատ կթողու իմացականությունը՝ իր կասկածներուն ու վարանումներուն փիլիսոփայական աշխատանքին մեջ: Եվ ասոր համար՝ բնակ հակասություն չկա ենթակային անձնական ամբողջության մեջ, որ անկեղծ է նորեն կատարելապես:

Հովվական սրինզը հայտնություն մըն է: Դուրյան սրբազն բազմաթիվ տիտղոսներ ունի, մաքուր եկեղեցականի մը և բազմահմուտ բանասերի մը համբավը կվայելի: Քիշեր իրեն շափ լավ գիտեն իրենց լեզվին գաղտնիքներն և շատ քիշեր արդի աշխարհաբարը կգրեն իրենին նման գեղեցկագետ ու մաքրաճաշակ հասկացողության մը համեմատ: Այդ բոլորը շատ ճիշտ է միայն անշուշտ, բայց արդարություն ընենք իրեն և ճանանք նաև զինքն իրը մեր ամենեն տաղանդավոր բանաստեղծներն մին: Այս՝, արդարություն ընենք, ու բնավլ շվարանինք զինքն ընդունելու իր եղբոր կարգին վրա, փառք և պարձանք հայ գրականության, ուր, ինչպես ամեն բանի մեջ, այնքան շատ են ինքնակոչները, բայց այնքան սակավ ընտրվածները:

ԱՐՏԱՇԵԽ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Թուրքովին հակառակ կարգ մը հոխորու ու ճղմիմ իմացականությանց, Եղիշե եպիսկո-

պոս համեստության տիպարն է: Ճշգրիտ ու մեծահոգի բանաստեղծը՝ որ իր առօրյա զբաղմունքներեն դուրս ունի հոգելից ներշնչումներու և միստիկ վերացման իր պահերը, երբ իր հոգնաշխատ միտքն ու վաստակական մարմինը հոգվույն սիրական հըրձվանքներով կազմուրվին ու անոնցմով կհանգին, երազանքի բուռն ու խորհրդավոր վայրկյաններ, ուր բանաստեղծ միտքը կրածնվի մերթ աշխարհի ունայն աղմուկներեն, ու մտածումը կալանա թևաբախ գեպի հոգեկանը, որ իրեն կսպասե արդեն անանուն և զգիլիի նեկտարին բաղցրությամբ ամոքելու համար թոփլքին հոգնությունը:

Ինքը բանաստեղծ ծնած է արդեն, ինչպես իր եղբայրը: Եվ ի՞նչ մտերիմ, ի՞նչ սերտ շեշտ մը, ինքնազուկի զգացման, բառի ու բացարության տեսակ մը ի՞նչ շնորհալի ու գողտրիկ բնականություն ունին երկու եղբայրներն այլ, որոնք կնույնանան մեր զատումին առջև: Միևնույն միջավայրին մեջ ծնած, Սկյուրարի մեջ միևնույն բանաստեղծականությունը շաշած, — ու մանավանդ արդեն իսկ բանաստեղծ ծնած, — Միհրանիկը աղջամեն Պետրոսին հարազատ շարունակությունը կիվի ըլլալ: Կարծես միևնույն Դուրյանն է, որ կիսուի մեղի, միևնույն Դուրյանը՝ որ սակայն կրած է տարիքին և կոչումին հարկադրած փոփոխությունները. և մեծ հաճույք մը չէ՝ միթե տեսնել մեր վաղամեն սիրական քերթողին շարունակությունը՝ իր հարազատին մեջ: Ու ո՞չ ապաքեն նղիշեն եպիսկոպոսը մեր երևակայած Պետրոսն է: Հասուն աարիքեն բանաստեղծը, նվազ մելամաղձիկ, ավելի խոնուն ու հզոր, մի՛շտ քաղցր ու մի՛շտ խանդավառ,

Բավական երկար լուսական մը վերջ բանաստեղծի իր տաղանդը, տեսիլքի մը, ոյզությանկարի մը պես գունագեղ ու փողփողուն հիմակ, եկալ մեղի հիանալի փետրափոխության մը հմայքը վայելել տալ, ու մենք, որ վարժված էինք միօրինակ ու ձանձրացուցիլ հարթավայրերու տաղտուկին, մենք,

որ երկարածիդ ու հոգնեցուցիլ անապատի մը մեջ հազիկ երրեմն կրկներևույթներու պատիր հմայքը վայելած էինք լոկ, հոգիի ճշմարիտ հրճվանքով մը ըմբոշնեցինք իր սրբագեղ բանաստեղծություններուն թուլք:

Իր սակավաթիկ քերթվածներուն անըստպուտ հորինվածքը, զգացումներու նրբին ընդելուզումը, երածշտական բառերու աղամանդավարդ ագուցվածքը, ու վերջապես գաղափարներու ներույժ արտահայտությունը, իրարու միացած, բանաստեղծի բնածին տաղանդին հետ մեղի կհայտնեն նաև հշմարիտ արվեստագետին տաղանդը, որ ազնվական ու շնորհալի մոգությունն մըն ալ կալիցնե իր բանաստեղծությանց թովանքին վրա: Ապաքեն, ո՞վ պիտի կրնար մատնանիշ ընել մեղ իր քերթվածներուն մեջ գաղափարի անձարակ կաշկանդումներ, բացարության բռնազրուիկ գարձվածքներ և զգացումի անձահ արտահայտություններ. և մանավանդ ո՞վ պիտի կրնար այնքան զգայազեղ ու խանջարորը բնականությամբ մը ներկայացնել մեղ, օրինակի համար, Անառակ որդիին զղցումի այն հոգնոր ցավերը՝ պոռթկացող ուժգնությամբ մը տողուն:

... Ու մտածել, որ իրապես արժանավոր ու հոգելից այսպիսի մտավորական մը այսքան ո՞ւզ հրապարակ կելլե, ամփոփված ըլլալով իր հումկու և բանաստեղծ եսին մեջ, ու խոնարհած՝ իր կրոնաշունչ մտածումին սրբանուշ խորանին առջև. մինչ ուրիշներ, բանաստեղծի վատառողջ գոյություններ կամ շպարգմա, սիրուն ոչնչություններ, միշտ երևալու, միշտ խոսվելու նիհար ու ճղճիմ փառակիրության մեջ մոլորած, և կամ իրենց անունին քով ներրողի երկու բառ տեսնելու շատ տղայական անձուկե բռնված, ասդինանդին կթափառին, հոս ու հոն ծիծաղելի ուրվագեծեր նկարելով, և հոսկ հետո իյնարկվ տղայական և ունայնամիտ հոխորտանքի մը մեջ:

ՄԻՍԱԿ ՄԵԽԱՐԵՆՑ



ՃԵՄԱՐԻՏ ԱՐԺԱՆԻՔԻՆ ՄԱՐԴԸ



հծանուն բանասեր մը և պատվական մտավորական մը, պրոֆ. Աղոնց, 1929-ին, Փարիզի մեջ Դուրյան Հոբելյանի առթիվ կատարված հանդեսի միջոցին ի պատիվ հոբելյարին արտասանված գեղեցիկ ճառի մը մեջ վերլուծելով անոր նկարագիրը, իբրև անոր հարացուցական պատկեր ներկայացուց Ս. Մեսրոպի մահվան առթիվ Խորենացիի Պատմության վերջին գրուփին մեջ տողված սա հատվածը. «...Գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ի նորա վարս աեղի գոտանել երբեք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոց զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւր պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարսիւր անհաս, խորհրդականութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուտով համբերող, սիրով անկեղծաւոր, ուտուցանելով անձանձոյթ»:

Հայ պատմահոր այս կտորը, գամբանական ներբող մեր գրականության հիմնադրին և Աղքին ու Եկեղեցին մտավորական և բարոյական մեծագույն փառքին, գրված ըլլալով, ինչպես հհաստատե արդի քննադատությունը, սուբքին վախճանումեն երկար տարիներ՝ շուրջ երկու դար ետքը, այդ պատճառավ նույնիսկ կներկայացնե մեծ կարևո-

րություն. անիկա մեկ կողմե կհասկցնե, թե Աղքին սրտին մեջ դարեր ետքը որքան խոր և զինչ պահված էր մեծ երախտավորին հոգվույն տպավորությունը, և մյուս կողմե ցուց կուտա մեղի գաղափարական այն տարազը, տիպարը, որուն մեջ կկաղապարեր հայությունը մաքուր, բարի, արդյունաշատ, հայրենասեր և մտքի ու սրտի շնորհներով զարդարված կրոնավորին դեմքը: Այդպիսի մեկը միայն կրնա և պարտի եղած ըլլալ արդարեւ մեր եռամեծ սուրբը, Մեսրոպ. և իր Աղքին հոգեւոր և իմացական ծառայության լծված որևէ եկեղեցական այնքան ավելի ճշտիվ կիրագործե իր կոչումը, որքան ավելի իր ձգտումը մոտ տանի զինքը անոր նմանության: Աղոնց՝ հանդիսական պատշաճությանց զգացումեն թելադրված «գյուտ» մը չէր որ կըներ այդ միջոցին, Դուրյանի նկարագիրը մոտեցնելով իր գերազանց տիպարին: այլ իրականությունը միայն կմատնանշեր՝ որքան զգացումով նույնքան նաև համոզումով, մոտեն ճանցած և սիրած ըլլալով անոր մեջ ճշմարիտ արժանիքին մարդու:

Այդ եղած էր զգացումը, արդարեւ, նաև ամենուն, իր բոլոր աշակերտներուն, Դպրեվանքի իր առաջին տարիներեն, ուր ոչ թե իր տեսակ մը մտազրոսությամբ, այլ հետրզհետե մեր սիրտերուն մեջ բազմող մտածումով, մինչ մեր մյուս մեծ ուսուցին և հոր, Օրմանյանի, այլպես և բարձրորեն այդ արժանավոր հոգեւորականին մեջ ճիպ կընեինք տեսնելու մեծին Սահակա կազմա-

կերպող տաղանդին, մշտարթուն մտքին և անդանդաղ կամքին պատկերը, Դուրյանի դեմքին առջև կանգ կառնեինք մտադյուր, իրեւ Մեսրոպի շնորհներովը կենդանագրված մաքով կերպարանքի մը առջև: Իսկ հիմակ, իր մահեն եռամյակ մը ետքը, նայվածքին առջև իր խոսուն նկարը և սրտիս մեջ՝ իր խոսուն ու սերը, մինչ կարդամ պատմահոր այդ հատվածը, վերստին կանեռվի իմ մեջս նույն համոզումը իր մասին. իր լուսատիպ ու այնքան ճշգրիտ պատկերն ավելի՝ այդ տողերուն մեջ է, որ կտեսնեմ զինքը, իր հոգվույն այնքան ճշշտ թվումն մասնացովը, իր ձիրքերուն այնքան կենդանի արտահայտությամբ նկարագրված:

Արդարն, իր ամենեն գործունյա եռանդի շրջանեն, իր եպիսկոպոսացումեն պիտի ուղի ըստել՝ մինչև իր մահը, հայոց մտավորական եկեղեցականներուն մեջ, իրիմյանն և շափով մը հզմիրվանե զատ, դժվար պիտի ըլլար գտնել մեկը, որ նկարագրի բարձրությամբ, մեկ բառով՝ առաքինությամբ, հավասարեր իրեն. ինչ որ այս երկուքը ունեին իրենց անձին մեջ, իրեր հավատքով և հայրենասիրությամբ կազմված մեծություն, ինք ստացած էր զայն նաև իր զարգացումովը: Խմաստասիրություն, գրականություն, բազմահմտություն, այս ամենը փոխարկված էին անոր մեջ բարոյականի. և ադո՞ր մեջ էր իր նկարագրին ամբողջ ճգողականությունը: Երբ միտքը կիշնե սկրտին մեջ, մարդը կատարելության ճամբան կգտնե անկե վերջը, Դուրյանի մեջ լրիվ կար այդ հոգեվիճակը, բարյական բարձրության այդ սրանշելի գեղցկությունը, Աստուծո և ճշմարտության մասին խորունկ և անկեղծ հավատքով մը ա՛լ ավելի աղվորցած: Հավատքի մարդն էր ինքը, այդ բառին ամենեն անուշ և զոր առումովը:

...Եյսպիսի բարձր բարոյականի, զարգացման և կորովի ներգործությամբն էր, որ իր բովանդակ կյանքը եղավ ստույգ առաքինության հանդիսարան մը ճշմարիտ գիտնականի մը միայն վայելու բարքով, իր մեծ

հմտութենեն իրավունք չզգաց երբեք իրեն՝ խրոխտալ խոնարհներուն և սկսնակներուն հանդեպ, որոնց համար հարգանք և սեր միայն ունեցավ միշտ, ու անոնց շմերժեց երբեք իր աջակցության և խրախուսին նպաստը. իսկ մեծերու, դիրքի, տաղանդի և արժանիքի ստույգ բարձրությանց վրա ապրողներուն՝ պատկառանք ներշնչեց միշտ իր նկարագիրը: Հոփորս կեցվածքը և սողոսկող մարդահաճությունը իսպառ անծանոթ մնացին իր խաղաղ և անբիծ հոգին: Իր սրտին հեզ քաղցրությունը և մտքին բարյացակամ հաղորդականությունը մոգիչ գաղտնիքը եղան իր հմայքին տիրապետությանը՝ իր աշակերտներուն և բոլոր վինքը ճանցողներուն վրա, մարդկային հասարակ մեծություններուն վեր բարձրության մը վրա պահելով միշտ անձը:

Այն խոսքը՝ թե մարդուն գեմքն ու արտարինը պատկերն են անոր հոգին, լրիվ ճշշմարտված էր կարծես իր վրա մանավանդ. իր նրենի հասակին բարձրությանը, իր շնորհալի գնացքին ու շարժվածքին վայելշությանը, իր անուշ նայվածքին ու ժապարությանը, իր բեղուն խորհուրդներուն խորությանը, իր ջինջ ու զաշն ձախին ազնվականությանը, իր հրաշալիորեն առինքնող վարվեցողության կերպին վեհությանը և ուսուցումի գաղափարին ու գործին հանդեպ տածած իր անձկայրյաց և անձանձրութնվիրումին սրբությանը մեջ գեղեցկորեն կարտափայլին իր ուղիղ շավատքը, երկայնամիտ Հովսը և անկեղծ Սերը: Այնպէս որ մեղի համար տիտուր, բայց իր հոգիին համար երշանիկ օր մը, երբ անողոք մահը անոր հանդիպեցավ անմահության սեմին վրա, իրեններն ու ամենքը անոր մեջ ողջունած էին արդեն ճշմարիտ արժանիքին մարդը, Հայ եկեղեցվո երկրորդ Շնորհալին:

Սումկի եկած եմ իր հիշատակին առջև: Հանգիստ իր հոգվույն:

(«Եղիշե պատրիարք Դուրյան», Երևանիմ, 1932)



ՀԱՅԿԱԾՈՒՆ ԵՊԻՍԿՈՓՈՍ ԱԲՐԱՀԱՄՑԱՆ

(Վեատիսուշ Հոգևոր Շնմարանի)

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ...

(Եղիշե պատրիարք Դուռյանի անմահ հիշատակին)

Երուսաղեմ: Հավիտենական քաղաք անմահներուն: Անոր հոգին լեցուցած էր հայոց հնամենի վանքի՝ Ս. Հակոբի մթնոլորտոց, Համրավը վաղուց տարածված էր աշխարհի շորս կողմերը, իսկ անունը կարտասանվեր երախտավորյալ հոգիներուն կողմե սրբությամբ:

Լսարանի ուսանողներ էինք, սարկավագ: Իր շունչին տակ մեծցած, իր հոգիովը թըրձված, դեռ քանի մը ամիս առաջ ականատես իր քահանայության հիսնամյա հորելանի: Փառավորումին: Մեր հոգին իրմով էր լեցուն: Ան մեր փարոսն էր, մեր մտատիպարը՝ պապավի Նվիրական մեր գործի ճանապարհին:

Իր շատ սիրելի դասարանն էինք՝ Կյուպենկյան սաներ: Անձկությամբ կսպասեինք իր դասերուն և ամեն անգամ, դասի օրերուն, մեր քալերը թեթևությամբ և ուրախությամբ կուղղվեին դեպի Պատրիարքարանը, դեպի մեր սիրելի դասարանը: Ի՞նչ վառ երևակայություն ունեինք, ինչե՞ր չէինք երազեր լսել դասի ժամին: Բախտավոր կհամարվեր մեկմե այն, որ այդ օր պատմելու էր դասը:

Իր գրասեղանին առջևն ենք արդեն, բոլորակ կազմած, լուռ ու անձկանոր կսպասենք մեծ Ուառչյին, մեր գլուխները հակած գըրքերու և նոթագրությանց տետրերու վրա: Դասարան կմտներ իր աշխատության սենյակեն, ուրախ, ժպիտը դեմքին, պարթեական ամենուն մեջ, թիւ կամ ամենուն մեջ: Աստիճան մեջ առաջարկության մեջ առաջարկություն, լեզվարանություն, թե փիլիսոփայության պատմություն: Կրանար իր ծով գիտության մեծ գիրքը մեր առջև:

Համայնագիտարան մըն էր անոր ուղեղը: Մեր մատիտները հաղիվ կհասցնեին էշեր սևագրել: Մերթ ընդ մերթ հարցումներու պատասխանին մեջ կերևար իր հատկանշական ժպիտը: Քմծիծաղ, ուրախություն: Շատ անգամ մեզ կշփոթեցներ անոր խորհրդավոր ժպիտը:

Երեսուն տարի է անցեր այդ օրեն, ու տակավին աշքիս առջևն է իր քաղցր ժպիտը: Իր դասավանդությունը միշտ հոգեկան ու մտավոր խնջույքի սեղան մըն էր, բացված մեր առջև և Հոգիներ առինքնող այդ մեծ Ուսուցիչը, որ մեր ամենուն Ուսուցչապետեն, Օշականի Մեծ Սուրբեն «այբ բնի գիմի աղվոր զամ մը» առած էր, իր դասի ժամանակ կվերանար, և երբ կմտներ ներս մեր մատենագրության անդաստաննեն, կտաներ մեզ իրեն հետ, մեր մշակույթի հեռավոր գանձերու այցելության, որպես ուկտավոր, և երբ կկորսնցնեինք իր լուսավոր հետքը մեր պատմության անդաստանին մեջ, քմծիծաղով կհանդիմաներ մեզ՝ «յանապատի՝ մոլորեալք»: Դուռյան քաշածանոթ էր մեր պատմության և մատենագրության: Մեր անցյալը գաղտնիք շուներ անոր համար: Ինչպիսի զերմությամբ, ամենաանուշ բառով կբացարեր յուրաքանչյուր հեղինակ և ժամանակաշրջան: Օրինակ, կհիշեմ, երբ կխոսեր նարեկացիի մասին, ինչպիսի եւսանդով և Հոգեկան հպարտությամբ կհիշեր անոր միստիկ ոգին և դերը մեր մատենագրության մեջ: Հայաստանյայց եկեղեցին պատմությունը շատ կհուզեր զինքը: Հայեկեղեցին Դուռյանի համար, երբեմն ծիրանի և ծաղկազարդ պատմուճանով, մերթ ցընցոտիներ հագած, բայց միշտ իր կողման աղնվական բարձրության վրա էր: Կիսոսիր

«գետօրէն», ինչպես մեր հին վարդապետները, ու մենք, կտրված միջոցներ և ժամանակնեն, անհագ կլսեինք: Հաճախ ինքն էր, որ կարթնեցներ մեզ՝ «Ելե՛ք, եթե շհշեցնեմ, մինչև իրիկուն հնատիք»: Հեռանալ դասարանեն: Բայց միկիթարված հաջորդ օրը նորեն դիմքը լսելու հույսով, հմայքին տակը իր շունչին, մեր բազերը կուղեինք դեպի ժառանգավորաց վարժարանը:

Ուսուցչությունը կըներ որոշ նպատակով մը մանավանդ, հայ Սաղեմի մեջ: «Վրեժս լուծեցի...»: Վրեժի ուսուցիչն էր ինքը: Իր սիրաը արյուն կուլար բոլոր այն մատաղ հոգիներուն համար, որոնք Արմաշի մեջ իր շունչովք թթված, զո՞ւ դարձան 1915 թվականի մեջ եղեռնին: Ինչպես շկապվեր այս նոր և մատաղ սերունդին, հաջորդները Արմաշի հույսին, լուծելու համար իր արդար վրեժը իր հոգեծին զավակներուն: Զի՞՞ որ, Կոստանդնովուլուս մեջ, երբ ծրուալզեմի պատրիարքի ընտրության համար իր թեկնածությունը առաջարկված էր, նախ մերժած, բայց երբ իր աշակերտներու անմեղ հոգիներու արյունը խոսած էր իր մեջ, վճռականապես ըսած էր՝ «Կընդունիմ, և կերթամ միայն իմ արդար վրեժս լուծելու համար»: Հասած էր իր սուրբ նպատակին:

Դպրոցական գրասեղաննեն վեր, կար ուրիշ սուրբ և նվիրական բարձրություն մը իրեն համար, այդ եկեղեցին բեմն էր: Աչքերը սկեռած Մայր Տաճարի ջահերուն պլազլացող լույսերուն, կվերանար աստվածախոս մարդարեի նման, ու աղոթող հոգիները դեպի երկինքները կբարձրացներ: Հոգիի մարդն էր Դուրյան սրբազնն, սուրբ մը և բարության մարմնացումը: Որքան հատկանշական են կրոնական շունչով գրված իր սատողերը հավատացյալ հոգիներուն.

«Թե պաշտումի թափն ունենաս Տերն զուգ մը թէ քեզի կուտա, Որպեսպի իր ուժը անհաս Սավառնեցնես երկրի վրա»: Բանաստեղծը, պատմաբանը, բանասերը, լեզվաբանը. շնորհներու ո՞ր մեկին ժառանգավորաց վարժարանը:

Երկար շկարողացանք վայելել Դուրյանը: Անոր առաջնորդության կարիքը ունեինք մանավանդ վեղար. ստանալին հետո: Բայց ան ուրախությունը շունեցավ նույնիսկ մեզ ձեռնադրելու:

Ապրիլ 26-ի իրիկուն, 1930: Սուրբ պատեր է հայ Երոսաղեմը: Անոր մահվան վիշտը զգեստներ է բոլորս: Անոր կյանքի վերջին բոպներն են: Մահիցին մոտն ենք, իր վրեժածին զավակները: Կնայի մեղ երկար, հույսերով և հույսերով լեցուն և արցունքուտ աշքերով, կպայքարի մահվան դեմ, կիսոսի Եղիկի «Եղծ աղանդոց»-ի սրբագրության և բաղդատության մասին... ու խոսելով կհանգի լուսն ու կյանքը Դուրյանի:

«ԱՌ արձակե զիս, Տեր, այս բիրտ կապերեն Որ սուրբներս խաղաղին, ինչ որ ըլլա Քու զորություն՝ մենք նորեն Հարկատուներ ենք հողին»:

Ապրիլ 27: Ոչ ևս է մեծանուն Ուսուցիչը: Մարեր է Եղիշե պատրիարք Դուրյանը: Մենք, իր մահման առաջ, կհայցենք լալագին. «Օրհնությունդ, Հայրու...»:

Ու Սիռնի լեռան բարձունքն, Ս. Հակոբի մեծ զանգակը ընդհատ-ընդհատ կտարածեր մեծ գույժը ամբողջ բաղաքին վրա. տա՞նկ, տա՞նկ, տա՞նկ...

Խաղաղություն սուրբ վրեժի մեծ մարդու հոգիին:



ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐՅԱՆ*

8. ՄԻԶԱՆԿՅԱԼ ՏԱՍԸ ՏԱՐԻՆ

Եվ ահա միջանկյալ ուրիշ շրջան մը Դուրյանի կյանքին մեջ: Այդ միջանկյալ շրջանը տեսք ամբողջ տասը տարի:

Միջանկյալ, այո՞, բայց այն իմաստով միայն, որ պատասխանատու պաշտոնի վրա չէր Ազգական ան միշտ շարունակեց «ուսանիլ և ուսուցանել», ինչպես ըստ էր ամբողջ կյանքին մեջ, այս անգամ Կոստանդնուպոլսու հայ եկեղեցիներու մեջ իբր քարողիչ և իբրև ուսուցիչ հայ դպրոցներու:

Մյուս կողմեն ան չեռացավ ազգային պաշտոնական կյանքի ալ: Ազգային երեսփոխան էր, և ընտրվեցավ նաև Կրոնական ժողովի անդամ: Ամեն անգամ շուր մը կմտներ իրեն հետ Ազգային ժողով, ճիշտ այն օրերուն, երբ պարզապես դառնագեղ մըն էր այդ ժողովը ու բոլորը կուրցած էին հոն կիրքով:

Հրապարակային երությների միշտ կխուսափեր Եկեղեցվոր բեմը և ուսուցիչ ամբողուն էին միայն, որ կոգենորին զայն:

1913-ի ամառը ևս, ինչպես 1912-ին, Եւսայան սանուց միությունը հրապարակային դասախոսությանց շարք մը կազմակերպած էր՝ արձակուրդի առթիվ Կոստանդնուպոլիս հավաքված ուսուցիչներուն համար մասնավորապես: Ամեն կողմեն փափագ կար Դուրյանն ալ ունենալ դասախոսներու շարքին մեջ: Երբ իրեն ալ դիմեցի, տկարությունը պատրվակեց: Միակն էր հայ մտավորականության մեջ, որ մեղ կմերժեր:

Եվ անմիջապես ավելցնեմ, թէ Օրմանյան, որ նոր եած էր քառամյա իր «շիլե»-ին և որևէ մեկն ալիկի պատճառներ ուներ զգուշանալու հրապարակային արտահայտություններ (եթե ոչ ուրիշ բանի, գոնի նշա-

վակ չըլլալու համար ցուցերու, ինչպես որ եղեր էր քանի մը անգամ, երբ փորձեր էր պատարագել), մեր զիմումը սիրով ընդունեց և նսայան վարժարանին մեջ տված հմտալից դասախոսությանց շարք մը, որոնց նյութն էր «Հայ Եկեղեցվոր հարաբերությունները ուրիշ եկեղեցիներու հետո: Իր հրապարակային առաջին ելույթն էր, իր ակամա ճգնութենեն հետո:

Դասական հայերենի հայտնի տիրապետող Հակոբ Գուրգենի հորելլյանին առթիվ կազմակերպված մեծարանքի ցուցը, 1913 դեկտեմբեր 15-ին, առիթ մը եղավ, որ վեճ մը բռնկի ներկա գրողներուն միջև գրաբարի շուրջ: Հանդեսին միջոցին արտասանված բանախոսություններին մեկուն մեջ ակնարկություն մը եղած էր գրաբարի և աշխարհաբարի լեզվապայքարին և ադկե դրդված խոսք առին ներկա գրագետներն ումանք, ինչպես Զոհրապ, Սիպիլ, Գուրյան, Վարուժան՝ իրենց կարծիքը հայտնելու համար: Դուրյան այդ օրը համոզված ու շերմ պաշտպանողական մը խոսեցավ ի նպաստ աշխարհաբարին, ըստով, որ այլևս մեռած լեզու մըն է գրաբարը, և որ աշխարհաբարը, արդեն սիրացած իր քերականության և կանոններուն, ոչ մեկ կապ ունի անոր հետ և կրնա առանձին զարգանալ. Եթե Ուկեղարու մեջ, ըստ սերունդ մը ունեցանք, որ գրաբարը գեղեցկությամբ օժտեց, ինչո՞ւ պիտի շումենանք սերունդ մը նոր օրերուն ալ, որպեսզի փառքով պահած աշխարհաբարը: Ու հետեւյալ նմանությունը մեջ բերավ, սահմանելու համար գրաբարի և աշխարհաբարի


1 Հանդեսի պաշտոնական մասին մեջ ուղերձները լսվեր էին գոկա, Վահրամ Թորգոմյանի, ողկա, Տաղավարյանի, գոկա, Վահեի, Արշակ Ալպոյանյանի, Հայկանուշ Մառքի, Տիգրան Զոկյուրյանի և իմ:

* Հարունակված «Եղմիածին» ամսագրի 1960 թվականի Ա. Իգու

արժեքը: Նվազածու մը, ըսավ, կորսնցուցած
էր իր նվազարանին մեկ թելը և տեղը ուսկի
թել մը կանցներ, բայց այդ ոսկի թելը չէր
ձայներ այնպես, ինչպես աղիքը թելը, ու
նվազարանը զրկված էր ահա իր ներդաշնա-
կութենեն. գրաբարը այսօր այդ ոսկի թելն է,
որ այլևս չի կրնար հնչել աշխարհաբարին
բնականությամբն ու ներդաշնակությամբը:
Դուրյան վերջացուց ըսելով, թե ինքը հորեւ-
յարին ընծայված հարգանքի արտահայտու-

էին ասոնք, մեծ մասամբ ֆրանսացի բա-
նաստեղծներեւ:

Պատերազմը ահավոր շրջան մը բացավի-
ջարհուրանքի մեջ էին և անոնք, որոնց դա-
շիճը մոռցեր էր դպիլ: Դուրյան թերայի Ս.
Երրորդության քարոզիչն էր այդ օրերուն, ու
դասախոս էր Ծավան վարժարանին մեջ:
Կերևակայեք անդրանքը, զոր այն օրերուն
կրնար ապրած ըլլալ Դուրյան: Կյանքի ե-
րևությներուն վրա վերեն նայիլ պետք էր:



ԽՂԻՉԵ ԳԱՏՏԻԱՐՔ ԴՈՒՐՅԱՆԻ ՎԵՐՁԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ (1929 թ.)

թյանց կմասնակցի այն ըմբռումով, որ ա-
նոնք դաստիարակի մը կուղղվին և ու թե
«գրաբարի կախարդ»-ի մը, ինչպես որակվեր
էր Դուրյան ճառերու ընթացքին:

«Միշանկյալ» այս շրջանին շատ քիչ ար-
տադրեց Դուրյան, կամ գոնե շատ քիչ բան
տպվեցավ իրմեւ, եթե հնաշվենք թերթերու և
պարբերականներու մեջ լույս տեսած ցան-
ցառ էշերը: Ավելի շատ թարգմանություններ

ինչպես սովոր էր նայիլ Դուրյան, լընկճվելու
համար հուզումներու մրրիկին առջև:

Ապրիլ 24-ը հնձեր տարեր էր հայ ժողո-
վուրդի մտավոր ընտրանին մեջ. Ու մյուս կող-
մե տարագրության, շարդի լուրերը կսկսեին
հասնիլ գավառներեն, Կոստանդնուպոլիսը
պահելով զարհուրանքի և մղձավանջի մեջ,
Դեռ աքսորված չէր Զավեն պատրիարքը,
բայց անկե արդեն խույս կուտային բոլորը:

Անուշ ջուրի հերոսները, իրենց պատյանը քաշված, հայոց հոգնոր պետք լրեր էին իր հոգեկան տագնապներուն մեջ։ Մենք մեր թաքատոցներեն խոռվագով կհետևեինք դուրսի անցուղարձին։ կիմանալիինք, թե ինչ քաջեր սկսեր էին իրենց հայ անուննեն իսկ վախնալ, ու փոխարեն ինչ քաջեր կծնեին զգուշ կարձակած մարդոցմեն։ կիմանալիինք, որ Դուրյան այն բիշերեն է, որ կերթա համախ սփոփել իր նախկին սանը, խրախոսել զայն, խորհուրդներ տալ անոր, նույնիսկ այն օրերուն, եղրոր արդեն հրաման հասեր էր անոր՝ պատրաստ ըլլալ մեկնելու համար աքսոր։

Ինձ համար բացառիկ սփոփանքը մը եղավ թղթակցությունը, զոր 1917-ին ունեցա իրեն հետ իմ թաքստոցես։ Հոգեկան խոռվագով մոռնալու համար գրելու տվեր էի ես զիս, ու

փորձեցի, ի միջի ալլոց, թառերախաղ մը գրել Արտաշես Բ-ի կլանքին։ Պատմական ճշգրտումներ ընելու համար ոչ մեկ աղջուր չունեի մոտս, ու չէի ալ կրնար ճարել։ Մտածեցի Դուրյանին դիմել։ Հոգը ըրավ, թե վտանգ մը կուգա ինձ հետ թղթակցելեն, ու լուաբանեց զիս ինձ համար մութ մնացած կետերու մասին։

Դետք է այդ օրերն ապրած ըլլալ, զգալու համար աղեալը, որ հանկարծ կրնար պայթիլ հայ հոգնորականի մը զիսոն, երբոր հայտնվեր, թե կապ կպահե թաքստոցը գտնվողի մը հետ։

Պատերազմը պիտի ավարտեր շուտով։ Ու պիտի փոխվեր միջանկյալ շրջանը Դուրյանի ալ կյանքին։ Բայց զայն շփակած՝ էջ մը ևս բանանք այդ կյանքին մութ մնացած գլուխներեն։

9. ՀԱՅ ԴԱՏԻ ՀՈՐԶԱՆՔԻՆ ՄԵՋ

Արդարն նույն այդ միջանկյալ տարիներուն էր, որ Եղիշե Դուրյան իր անունը կապեց հայկական դատին համար փորձված նոր աշխատանքներուն։

Քիշեր միայն տեղյակ են սակայն հայ ժողովուրդի տառապանքին ու անոր ազատագրական ճիգերուն հետ կապված Դուրյանին։ Երջան մըն էր, երբ ասպարեզ էին գտած բոլոր տեսակի պոռոտախոսությունները, և անոնք է, որ ծափ կբաղեին ժողովներու և միտինգներու մեջ։ Ու փոխարեն կային շուրջին մեջ աշխատող մարդիկ ալ, զորս չէր շահագրգուր ծափը։ Ու նաև մարդիկ, զորս հեռու կարծեիր հայ ժողովուրդի անմիջական հոգումներեն և որոնք ասպարեզ իշան բախտորոց պահու մը, հաճախ առանց երեւալու։ Ասոնցմեն մեկն էր Դուրյան։

Հայ ժողովուրդը ապրեցավ ցնորդներու և պողոթումներու, հույսերու և հուսախարությանց քառորդ դար մը, 1888-են մինչև 1912. Ճախողությանց ու ճախորդությանց շրջան, երբ քով-քովի շնչեցին հերոսն ու խաչագողը, ու զավաճանները շփոթվեցան հաճախ իսկական հայրենասերներուն հետ։ Երջան, երբ հայկական դատը, արյամբ շաղախված, լքվեցավ աշխարհի բոլոր Պիղատուններեն, անով շահագրգուվեցան այն ատեն միայն, երբոր պետք ունեցան հայ արյան, իրենց սակարկությանց համար։

Այսպես անցավ քառորդ դար։

Դետք էր այս քառորդ դարը անցներ, որպեսզի Դուրյան դարձալ խառնվեր հայկական դատին, այս անգամ արդեն տարրեր պայմաններու մեջ ու տարրեր դերով։ Հայ ժողովուրդի կյանքին մեջ ու տարրերը դերով։

Հայ ժողովուրդի կյանքին մեջ բացառիկ տարի մըն էր, դարձակեալ մը գրեթե։

Երիտասարդ-Թուրքերը ամբողջ շորս տարի, ցուց էին տվեր, թե նույնքան անզիշող էին հայ ժողովուրդի իրավունքներուն հանգեց, որքան ժեր Թուրքերն էին, և նույնքան դաման դեպի հայերը, որքան Համիդը։

Մյուս կողմեն, Աղանան իր տասնյակ հազար զոհերով եկեր էր սթափեցնելու հայը իր ցնորդներեն, և զայն դարձուցեր մտահոգ դեպի ապագան։ Ան այլևս չէր հավատար թուրք վարիչներուն։

Հայկական դատը սեղան եկավ ճիշտ այդ պահուն։ Կոստանդնուպոլսեն սկսան աշխատանքները, և էջմիածինը սիրով սանձնեց պաշտոնական նախաձեռնությունը, Փարիզի մեջ ստեղծելով պատվիրակություն մը, որպեսզի պաշտոնապես հետապնդե հայկական դատը մեծ պատությանց մոտ։

Հանդիսավոր ճառերե հետո, որոնք արտասանվեր էին Աղգային երեսփոխանական ժողովի գեկտեմբեր 21-ի նիստին մեջ, Աղգային կեդրոնական վարչությունն էր, որ կոչված էր հետապնդելու հայկական բաղձանքները։ Երականին մեջ, սակայն, Աղանովության հանձնաժողովն էր, որ, կազմված իր հինգ անդամներեն, պիտի վարեր աշխատանքները դուրսեն ազակիցներու հետ։ Դուրյան, իրեւ կրոնական ժողովի ատենապետ, մաս կկազմեր Աղանովության հանձնաժողովին, նույնիսկ կգիխավորեր անոր դիվանը, հոգիով մարմնով անոր լծված, ամիսներով լքած ուրիշ ամեն հոգ։

Այն օրերու իր աշխատակիցներեն մեկը կպատմէ. «Հունումով կհիշեմ, թե ինչպես Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, մարմնով ծեր ու տկար, բայց հոգիով արի, ովկորված ու միշտ կատակներու մեջ իր հոգնությունը

բողարկելով՝ մոլեռանդ հավատացյալի մը շերմեռանդությամբ, ամրոց օրերով անտըրտունչ կաշխատեր սեղանին կոթնած՝ կերակրվելով հաց ու պանիրով կամ աժանագին հելվայի կտորով մը:

Ըսենք փակագի մեջ, թե բովանդակ այդ շարժման ոգին Գրիգոր Զոհրապն էր սակայն: Համոզված, որ այլևս կարելի է ոչինչ սպասել թուրքերն, և որ հայր այլևս ուրիշ կովան չունի, բայց եթե ոռու ժողովուրդը, օգտագործեց իր կապերը ոռու դժուանատան հետ՝ հայկական դատը մտցնելու համար իր բնական հունը:

Եվ այնուհետև կսկսեին բանակցությունները թուրքերուն հետ՝ ծրագիրը ընդունել տալու համար անոնց ալ:

Վրա հասավ մեծ պատերազմը և ամեն ինչ քանդեց: Զքացան ամեն հույս ու ցնորք, ու փոխարեն զարհուրանքի չորս տարիներ հայ ժողովուրդին համար: Եվ ահա զինադադարը Գինովության նոր օրերի Դեռ արցունքը շամբած՝ հայ ժողովուրդը սկսավ կառշիլ նոր հույսերու, ու նոր ցնորքներու ալ:

Կոստանդնուպոլիսը կրկին արթեցած էր: Կրկնվեին Հուրրիեթի օրերը:

10. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱԹՈՌԻՆ ՎՐԱ

Ներկա սերունդը չի գիտեր ու լավ է որ չգիտնա, թե ի՞նչ զարհուրելի բեռ եղած է երբեմն երուաղեմը հայ ժողովուրդի ուսերուն: Նյութական բեռ ու բարոյական հոգեր հավասարապես առթած է ան հայ ժողովուրդին որքան անցյալին մեջ, նույնքան մեր սերունդին օրով:

Օգովելով պատրիարքի մը զառամած տարիքեն, կարգ մը միաբաններ ինչե՞ր լըրին վանքին մեջ: Միաբանությունը, երկուքի ճեղքած, հակասական տեղեկագրերով կշփոթեցներ Կոստանդնուպոլիսը, երկու կողմն ալ պահոված իր պաշտպանները Ազգային ժողովին թե մամուլին մեջ:

Կոստանդնուպոլիսեն գացած ոլ մեկ հրահանդ նկատի կառնվեր վանքին մեջ: Ոլ մեկ քննիլ լուսարանված կուգար ետ: Ոլ մեկ պատվիրակություն հաջողեր վանքին մեջ բռնկած կրքերը մարել:

Կրքերը շնազաղեցան Հարություն պատրիարքի պաշտոնավարութենեն հետո ևս, Ոչինչ կրցակ ընել Դանիիլ եպիսկոպոս ալ, որ տեղապահ էր կարգվեր: Ի վերջո Ազգային երեսփոխանական ժողովի որոշմամբ Օրմանյանը իրեւ լիազոր Երուաղեմ դրկեցավ Կոստանդնուպոլիսին, Վահան Թեքեյանի հետ, բայց Երուաղեմ գեռ հասած չէին, երբ աշխարհ բռնկեցավ. այնպես որ Թեքեյան վանք

Այդ օրերուն զանազան հոսանքի մարդիկ քով-քովի եկանք՝ նոր կյանք ստեղծելու համար: Եվ իրարու ետև մարմին առին նոր թերթեր ու նոր կազմակերպություններ. նույն այն ոգևորությամբ, ինչ որ Հուրրիեթի օրերուն:

Նույն այդ օրերուն ստեղծվեցավ Ազգային խորհրդական ժողովը բոլոր հոսանքներն երկայացուցիչներով, որպեսզի հայ կյանքը վարե, մինչև որ ազգային իշխանություն ստեղծվի բնականոն պայմաններու մեջ:

Այդ շրջանին բախտու ունեցա աշխատակցելու Դուրյանի հետ Ազգային խորհրդական ժողովին մեջ, ու մոտեն ճանշա մարդը, որ գիտե զգալ ու հուզվիլ, բայց և խուսափիլ պողիկումե, որ կապրի իր ժողովուրդին բովանդակ սուսը, բայց կրնա ցասումը զապել, որ վաղվան հուզմերով կրնա օրորեն իր հոգին՝ սակայն իր խանդավառությունը փողոց չի տանիր:

Շատ հուսալ, որպեսզի շատ հուսախաբ-վինք. այս էր իր փիլիսոփայությունը:

Ճանշա իր մեջ մարդը, որ կժապտի տագնապի պահուն, ու կմնա միշտ պարզ ու միշտ համեստ՝ ինչ փառք ալ ընծայես իրեն:

Իսկ լմտավ և Օրմանյանը առանձին մնաց դեպքերուն առջև:

Ու գեպերը հաջորդեցին իրարու Հայաշինչ սարսափիները սկսեր էին: Թուրք կառավարությունը Կոստանդնուպոլիսի Պատրիարքությունը չնշեց, Կիլիկիան հաշվեհարդարի ենթարկեց իր ժողովուրդին հետ մեկտեղ, ու Սահակ կաթողիկոսը Երուաղեմ տարավ նստեցուց, իբրև միակ հոգևոր պետ Թուրքիո հայոց, այսինքն անոնց, որ մնացեր էին և կամ պիտի մնային:

Ջինագարը ու Օրմանյան գտավ հոն, ու ալ Սահակ Խապայան: Մեկը դարձեր էր Կոստանդնուպոլիսի, Թուրքիո վլուզումնեն առաջ, մյուսը նահանջեր էր Երուաղեմեն թուրքերուն հետ մեկտեղ: Երուաղեմը անգամ մըն ալ նետվեր էր անստուգության մեջ:

Այս վիճակը չէր կրնար սակայն հավիտյան տեսլ: Պատերազմեն հետո այլևս ատենն էր անիշխանության վերջ տալու:

Ու մարդ մը գիտովեցավ, որպեսզի վանքը մահվընե փրկե: Այդ մարդը գտնվեցավ հանձին Դուրյանի:

Կոստանդնուպոլիս Ազգային ժողովը հանդիսավոր նիստի կանչվեցավ 1921 թվականի սեպտեմբեր 5-ին, Մայր Եկեղեցվո մեջ: Ձևակերպություն մըն էր միայն այդ, քանի որ արդեն միաբանությունը համաձայնած

էր անոր շուրջը բերել կանքին մեց, ու ինքն ալ տված էր իր հավանությունը:

Եվ որովհեակ օրենք էր, որ միաբան մը միայն կարենա Ս. Հակոբա Աթոռը նստիլ միաբանությունը արդեն ապրիլին զայն անդամ էր հողակած իրեն, և ինքը արդեն իրու ովասավոր Նրուսաղեմ կատնվեր, երբ Կոստանդնուպոլիսի մեջ կգումարվեր Աղքային երեսփոխանական ժողովը:

Հովանավոր իշխանությունները թույլ էին տվեր, վերջին անգամի մը համար, որպեսզի Կոստանդնուպոլիսին ընտրե նրուսաղեմի պատրիարքը:

Երբ առովը կծագինք մեր քվեները, մեր մտքն չէր անցներ, թե այս մարդը պիտի կարենա Օրուալղեմը փրկել, Քանի՞ քանի պատվիրակություններ գացեր էին հոն ու ձեռնունայն եռ դարձեր: Ի՞նչ պիտի կրնար ընել միակ մարդ մը, որ ուրիշ բան չուներ, բայց եթե միայն իր պատկառանքը:

Եվ սակայն այս մարդը այլափոխեց գործության որջը ճիշտ է, իր հոն ոտք կոխած պահում հին կրքեղը շկային այլև, ու շկային նաև զանոնք արծարծողները: Բայց դեռ կային անոնց հետքերը Պետք էր ցրիվ տալ

զանոնք, կյանք ստեղծել ավերակներուն մեջ: Դուրյան կրցավ այդ ընել:

Մեր գերը չէ պատմել անոր պատրիարքությունը երուսաղեմի մեջ: Բավականանանք ըսելով միայն, որ պատրիարքության մոտ տասը տարիները, 1921—1930, խաղաղությունը, հովանիին տակ բացառիկ պատկառանքի մը, հրաշքներ գործեց հոն:

Նախ երուսաղեմի հայ վանքին վերադարձուց կորուված վարկը: Արմացը եկավ շարունակվել երուսաղեմի մեջ, և սկսավ ճոնչել Գուտեմբերգի մեքենան: Հետո շունչ առավ վանքը, դարերով պարտիերու ապակենակի հեծելի հետո: Պետք չեղավ աշխարհ՝ թափառի շղթա մը վզին: Ասձին հմայքը բավական էր: Իր հորեւանը, 1929-ին, համազգային ցուցը մը եղավ: Ու հաջորդ տարին, երբ աշխերը կփակեր, կմեկներ պարտք մը կատարած ըլլալու գործակությամբ, հավանարար միշտ ժպիտը դեմքին, ու հեգնությունը շրթներու վրա: Ան գնաց հավանաբար մահը հեղնելով, ինչպես հեգներ էր կյանքն ու իր փորձությունները:

11. ԴՈՒՐՅԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

Դուրյանի կյանքին գլխավոր հանգրվանները տալիք հետո, կփորձմինք վերլուծման մը նեթարկել նաև մարդը իր զանգան երեսներուն մեջ:

Բովանդակ իր կյանքը փայլեր էր այլազան ձիրքերուն մեջ: Աւուցիչն ու գիտնականը, բանաստեղծն ու հանրային գործիչը եկեր միացեր էին հոգեռականին: Հայ ժողովուրդը Դուրյանը ճանշեր ու մեծարեր էր իրու միակույզ զանգված բազում արժեքներուն, որոնց մեջ հոգեռականն ալ:

Աշերը փայլելու մոտ, ան մեզ կըսեր սակայն, թե ինք պարզապես հոգեռական մըն էր եղեր իր բովանդակ կյանքին մեջ:

Ան բառ առ բառ ըսավ արդարն իր հորեւանին օրը:

«Եմ հինամյա քահանայության հորեւանն է միայն, որ կկատարվի այսօր, և եթե ուրիշներ տարբեր արժանիքներ ալ տեսան անձիս վրա, այդ իմ ուզածս չէր: Ես հավանեցա այս հանդիսավորության, ու թե ինքինքն փառավորելու, այլ՝ միշնորդաբար՝ առիթ մը ընծայած ըլլալու համար ամեն անոնց, որ կսիրեն իրենց եկեղեցին, և նախանձախնդիր են պատվելու համար անոր մեկ պաշտոնյան, որ իր պարտքը կատարած է լին:

Դուրյան այդ պահուն կմոռնար սակայն, որ համազգային ցուցը, զոր հայ ժողո-

վորդը կընծայեր իրեն նույն այդ հորեւանով, միմիայն քահանային, այսինքն հոգեռականին չէր, որ կուղղվեր:

Եթե պահ մը սակայն տարվինք ընդունելու, թե հոգեռականը գերիշխող եղած է իր մեջ գոնե որոշ պահերու, պետք չէ սակայն սովորական իմաստով առնենք բառը, այսինքն մեկը, որ վեղար ունի գլուխը, պատարագ կմատուցանե, քարոզ կիսուի, հետո կերթա քնանալ հանդարտ խղճով մը:

Դուրյան հոգեռականը ուխտված մըն էր ավելի, նվիրված մը ոչ միայն Հայ եկեղեցիին ու անոր ավանդություններուն, այլ բոլոր այն սրբություններուն, որոնք հայ ժողովուրդին են:

Պատմական իր քարոզին մեջ, զոր արտասանեց 1921 նոյեմբեր 7-ին, երբ իր ուխտը կըներ իբր պատրիարք երուսաղեմի, ան կերպով մը իր կոշումը կրացատրեր:

«Ուխտ. գուցե քիչ մը հին հնչե այս բառը նորաթեք ականջներու... Գիտենք, թե կյանքի նոր ըմբռնումներու փշումներն ընդհարվելով՝ մարելու մոտ երերումներով կառկայծի շատ անգամ ուխտին ներքին լուսու: Եթե միայն «աղքատ, հնազանդ և զգաստ» ըլլալու պայմաններով ապրեինք, մեր հոգին ինք իրմով սնանելու հպարտությամբը պիտի աճեր միայն՝ իր անհատական առանձնացումին մեջ: Այդ բավա-

կան չէ մեզի: Ավելի նպատակահարմար կյանքի մը կուղղի մեր ուխաը, մեր եսերուն մեջ Հյուրընկալելով մեզմե դուրս տարածելու տեսնը, մեկ խոսքով՝ համասեն մասնիկները դառնայու այն հավաքական մարմնին՝ մեր Ազգին՝ որուն մեջ պիտի վերապիրինք: Լավ իմացված ուխտը գեղնէ այն ախտին՝ որ ընդհանրապես մեր էության մեջ կակսի դարանիլ այն օրեն, երբ կապակի մեզմե ու մեր ժողովուրդին հոգմարշավիդ մը ցուց տալու և օրինակելի կյանք մը հանդիսադրելու արիությունն ու պարքը: Եվ որպեսզի կարելի ըլլա ամենուն՝ մեր ուխտի կենցաղը հաշտեցնել՝ իր հինձին մեջ իսկ՝ վեհագույն պահանջումներու հետ, պատրաստ ենք գիտակից նվիրումի մը անհոռովությունը զգալ մեր մեջ և զացնել զայն ուրիշներու Ոչ մեկ տրամարանություն արժեք չոնի այն հոգին համար, որ գիտե անձնուրագությամբ ծառայել սովոր զատի մը, ըլլա պատերազմի դաշտին վրա, ըլլա մենաստանի խորության մեջ:

Մանվածապատ այս բառերուն մեջ անշատ րան կըսեր: Ովստն էր, որ հիմը հզըռշակեր հայ Հոգմորականին, ու այդ ուխտը ուրիշ բան չէր իրեն համար, բայց եթե տեսակ մը երդում ժողովուրդին ծառայելու

Եվ ան շղթեց իր ուխտը. ծառայեց ինշպես Եկեղեցին, նոյնպես իր ժողովուրդին:

Աղկե է, որ հայ ժողովուրդը իրեն համար վեր էր ամեն բանե: Աղկե է նաև, որ տառին շկառշեցավ երեք. ավանդապաշտ և ձեւամոլ երեք շեղավ: Հոգմորական Դուրյանի հատ-

կանշական գիծերեն մեկը իր լայնամտությունն էր, և ինչպես կըսեր թարգեն եպիստուկուս իր մահվան առթիվ՝ «Համբունացիի մը լայնախոհությունն ուներ ան իր կրոնական ու հարանվանական հարաբերությանց մեջ»:

Հայնախոհ էր, այս, բայց կեղծիք չկար իր հավատքին մեջ: Կեղծ չէր իր բարեպաշտությունը: Ան կորցած էր կրոնքը հաշտեցնել գիտության հետ: Կրնանք նույնիսկ ըսել, թե գիտունի մը պես մոտեցեր էր ան կրոնքին:

Շատեր ըսին, թե Ռընանի պես կմեկներ կրոնքի հետ կազմած շատ մը բաներ: Արդարն Ռընանի հանդեպ պաշտամունքը ուներ, և պարզ գիպված մը չէր, երբ 1889 մայիսին, Փարիզ գտնված ատեն, Դուրյան այցի գացած է Ռընանին:

Բայց սխալ պիտի ըլլար ըսել, թե Ռընանի բոլոր տեսությանց հետևող մըն էր ան Ռընանի հանդեպ պաշտամունքը առավելապես գիտնականին համար էր և անոր ծովածավալ հմտությանը համար: Տքնել հաճույք զգացող մարդու համար էր, և տառերուն ետին ոգին փնտող մարդուն համար: Ռընանի հանդեպ իր պաշտամունքը ան փոխանցած էր իր աշակերտներն շատերուն ալ: Ասոնցմե ունաց սեղանին վրա և Ռընան կար:

Ումանք «հայ Ռընանը» ըսին իրեն համար բայց մասամբ միայն ճիշտ էր այդ Հակառակ հարատեև իր որոնումներուն՝ Հոգմորականը գիմացավ իր մեջ:

12. ԴՈՒՐՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԾԸ

Եթե իր բոլոր ձիրքերն ալ տատրամսիս զետեղել իր պատվանդանին մեջ, Դուրյան կրնար անմահանալ իրեւ ուսուցիչ:

«Ուսավ և ուսուց». Ի՞նչ լավ բնորոշեր է զայն Վաղենին Կաթողիկոս: Ուսավ և ուսուց երբ գեռ, գրեթե պատանի, ուսուցանել սկսավ Սկյուտարի մեջ. «Տասնեւթ տարեկան ըլլալու էր այն տաեն, — ինչպես կըրե Առն Բաշաւլան, — երբ վարժարանին մեջ հայերենի դաս կուտար, Եղիշեն վերծանել տալով. նիհար պատանի մըն էր, նորարույս մորուքով մը, շատ զվարթ, ավելի աշակերտներուն մեծ եղայրը քան դաստուն, և իր դասի ժամը ցնծալից շարահարություն մըն էր ինդուֆներու:

Ուսավ և ուսուց, երբ հազիվ քան տարեկան, զայն Պարտիզակ տարին որպես ուսուցիչ և քարոզիչ Տամար մնաց հոն և իր առաջին սերունդը տվապւ:

Մկրտիչ եպիստուկուս Աղավնունի, որ իր անդրանիկ սաներեն եղած է Պարտիզակի մեջ, հուզումով կվերհիշե երիտասարդ Դուրյանը իրենց գրողը գալուն և անոր առաջին դասերը: Կպատմե անոր ուսանելու և ուսուցանելու կիրքն ամեն բոպե, ամեն տեղ և կոգեշնչ անոր դասերը ըլլա վարժարանին մեջ, ըլլա բացոյց, ծառերու հովանինին տակ, և սերունդը, զոր հոն ստեղծեց ան:

Պարտիզակի իր մեկ ուրիշ սանը, Գրիգոր Մխալվան, կպատմե, թե «սկիզբները հայ ոսկեղինիկ լեղուն կկազմեր իրենց երիտասարդ ուսուցչին մտքի վայելքը. աշխարհաբար գրականություն չէր ճանշնար. չէր խոսեր ան իր սրտին ու հոգիին. ուներ գերազանցորեն իր այդ գինովությունը շուրջիններուն ևս փոխանցելու կարողությունը... կրոնանար, որ իրեն պես զգայինք ամենք, իրեն շափով եթե կարելի էր, և չէր ներեր կուրությունը գե-

ղեցիկին ու վսեմին հանդեպ: Վայ անոր, որուն ճաշակը կտկարանար, որ կտղար գետնի վրա, փոխանակ սավառնելու իր թևերով մաքուր բարձունքներու մեջ»:

Միայնակ կպատմե նաև, թե Դուրյան ինչպես կորրագրեր իր սաներուն շարադրությունները, «Տեսնելու բան էր, այդ պահերուն, իր զվարթամտության և սրամտության բոլոր բովովը, որով կարտահայտվեր ցուց տալով գրվածքին թերությունները, լիզվի, արտահայտության, մտածումի և դասավորության բոլոր թերություններուն մեջ. փլցնելով ենթակային մեջ ինքնաբավության պոռոտ շնչը, և մերկացնելով գրվածքը իր միամիտ ու բոնազբոսիկ բոլոր գեղեցկություններն ու շպարումներն: Ասով իր աշակերտները կվարժվեին զգուշավոր դառնալ, կառչի բնականին և պարզին, բառերու և գաղափարներու ընտրության և դասավորումին մեջ»:

Երեսունը նոր բոլորած է, երբ զայն կկանչն Արմաշ, Դպրեվանքին իբր փոխ-տեսուշ, որպեսզի հոն ալ ուսանի և ուսուցանե: Տասներկու տարին, զոր Արմաշ անցուց, իր կյանքին ամեննեն բեղմնավոր տարիներն են և իր ուսուցչական ասպարեզին փառքը:

Վանք մը չէր արդեն Արմաշը հին օրերու իմաստով, ոչ ալ հին Արմաշը մնաց ան, երբ Օրմանյան ոտքը գրավ հոն, և իր ետևեն կանչեց Դուրյանը՝ Երկուքին տքնության պտուղն է Արմաշ, բայց սերունդը հասունցավ առավելապես Դուրյանի շունչին տակ:

Հոն էր, որ հորիզոն բացվեցավ երիտասարդ վարդապետին, որ իր կարգին հորիզոն բացավ իր աշակերտներուն. կապված երբեք շմնաց տառին, ինչպես որ շուզեց, որ մնան իր աշակերտներն ալ. ոդին էր զինք խանդավառողը, նույնիսկ հավատքի հարցերու մեջ:

Բարգեն կաթողիկոս կարոտով կհիշե իր աշակերտության տարիները Արմաշի մեջ, ու այս առթիվ մեզ կպատմե նաև Դուրյանի մեթոդը կըսե, թե դասագրքերու չէր կապվեր Դուրյան, և դասագրքի քարցաց կաղապարներուն վրա չէր ուզեր ձեւել աշակերտին մտավոր գործունեությունը: Ան քննադատությունը պահանջ կնկատեր տրամաբանող մտքին, և տրամաբանությունը՝ ուղիղ մեթոդը ճշմարտությունները զանազանելու ստություններն և իրականները կեղծերեն: Դաստիարակության մեջ իր զվարթությունը, սրախոսությունները և մանավանդ կատակները, հաճախ լարված հեգնանքի և երգիծանքի զապանակներով, մեծ դեր կկատարեին:

Մերուպ պատրիարք Նարոյան, իր կարգին, գովեր կըսներ իր նախկին ուսուցչին, անոր մեջ պանծացնելով իսկական վարդապետը, լուրջ, խորհրդավոր և շնորհալի, որ

կհիշեցներ հինավուրց նարեկացիները, Շնորհալիները և Տաթևացիները: Ու կըսե. «Եղական բախտ մըն է մեծ ուսուցիչներու ոտքը նստիլ և ուսանիլ: Հոգեկան շերմ հաղորդակցությունը մը կզողեր մեզ իրարու. ա'լ պիտակ վարժապետ ու աշակերա չէինք. ամեն պայմանադրական պատվար ու կաշկանդում խորտակված ու անէցած էր: Մենք ուսուցիչներս, մեր ներքին կյանքը բեղմնավորող առողջ սերմերը կընդունեինք թարմ միտքով ու խանդավառ հոգիով, զորս մեծ ուսուցիչը իր հոգեպարար շունչով կավանդեր մեզ»:

Իր մեկ ուրիշ աշակերտը, Եղվարդ եպիսկոպոս Փերտահճյան, կգրե ուսուցիչ Դուրյանի մասին. «Հայ լեզուն, հայ գիրը, հայ պատմությունը, հայ կյանքը, ամբողջ հայրենագիտությունը իրեն համար մեծ գաղտնիք չը չունին: Ան գիտե հմայել ուսանողները հայ լեզվի գանձերովն ու գեղեցկությունովը իրերու և գանձերու իրական արժեքը պահելով հանդերձ, վհուկի մը ճարտարությամբ կկենդանացներ անցյալի հուշերն ու հիշատակները՝ լուսեղեն թերաստվերի մեջ ցուց տալով մեծ դեմքերը»:

Արմաշի վանքեն երբ հզմիր գնաց իբրև առաջնորդ, դարձալ չհրաժարեցավ ուսանելու և ուսուցանելու կիրքեն: Միասին էր շալկեր տարեր իր գրադարանը, և ուսուցչի բեմ ապահովեր այնտեղ ևս, դասեր ստանձնելով Մեսրոպյան և Հոփիսիմյան վարժարաններուն մեջ Բարձրագույն վարժարաններ չէին, որպեսզի լրիվ սերունդ խմորեր հոն ալ. բայց իրմե այնտեղ ևս կայծեր ցանեց: Իր այդ շրջանի սաներն ու սանոււիները հափշտակությամբ հիշած են հետո անոր դասի պահերը:

Կոստանդնուպոլսու պատրիարք Ընտրված 1909-ին՝ մոտ երկու տարի ան զրկվեցավ իր բուն կոչումնեն. ուսուցիչ ամբիոն չուներ: Ու կենթագրեմ, որ իսկական տառապանք մըն էր այդ իրեն համար: Բարեբախտաբար երկար շտենց այդ խորթ շրջանը:

Օրմանյանը երբ տապալեցին, Ըտըր փողոցի խուցը քաշվեցավ, թաղվեցավ գրքի դեղերուն ծոցը, գրեց ու գրեց. «Ազգապատում»-ի զույգ հատորները և «Հայոց եկեղեցին» այդ օրերու պտուղն են. հալածականին ընծան են անոնք զինք հալածողներուն:

Դուրյան երբ լքեց ասսան, դուռնե գուռ ինկավ աշակերտ ճարելու համար: Իզմիրի աշաջնորդության և Կոստանդնուպոլսու պատրիարքության խորթ տարիներեն հետո, քացառապես ուսուցիչն էր, որ կհառներ դարձալ իր մեջ. դասեր ստանձնեց ան զանազան վարժարաններու մեջ, ու իր հոգին դարձյալ շիման մեջ դրավ նոր սերունդին հետ:

Ուսուցչությամբ միմիթարվեցավ պատճեռազմի օրերուն ալ՝ Դահիճը խնայեր էր իրեն, ու ինք մնացեր էր Կոստանդնուպոլիս։ Քաշված Տատավլա, իր գրքերուն մեջ, կշարունակեր ուսանիլ. մյուս կողմեր դասի կվագեր զեր զանազան վարժարաններու մեջ։

Պատերազմեն հետո պահ մը դարձյալ զրկվեցավ ուսուցչի բեմեն, ու շուտով ցմիշտ պիտի թողովր նաև Կոստանդնուպոլիսը։ Բայց մոտ տասը տարին, զոր անցուցեր էր Կոստանդնուպոլսուն մեջ, այնպիսի պահու մը, երբ արևմտահայության մտքի ոստանը իր վերջին փայլը կապրեր, այլապես բեղմնավոր շրջան մը եղավ ուսուցիչ Դուրյանի համար։ Դեռատի սերունդն էր, որ իրեն հետ շփման մեջ էր մտեր այս անգամ, Կեդրոնականի ու Պերպերյանի, Հինդիլանի ու Պեղադյանի, Եսայանի, Դպրոցասերի ու Արամյանի մեջ։

Իր հորելանին առթիվ իրենց երախտագետ սանի տուրքը բերին շատ շատերը զանազան դպրոցներու մեջ իրեն աշակերտողներեն, Բնական է անխառն պիտի ըլլային բոլորին ալ զմայլանքի արտահայտությունները նման առիթով մը։ Ինչ որ կարծեր ընդգծել, իր ձգած հետքն էր Կոստանդնուպոլսուն նոր սերունդին վրա։ Կեդրոնականի մեջ իրեն աշակերտողներեն լսած եմ, որ գիտության բովեն անցած գիտելիքներով կօժտեր ան իր սաները եվ ակամա միտքս կուռային Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյանի հայ եկեղեցական պատմության դասերը մեզի, Եսայան վարժարանին մեջ, ադկե քառորդ դար առաջ, երբ երկուղածությամբ ու Հափշտակությամբ կպատճեր հայոց Արգար թագավորին թրղթակցությունը Քրիստոսի հետ, ու մեզ գոց ընել կուտար նույնիսկ Արգարի նամակը Քրիստոսի ուղղված։ «Արգար Արշամայ...»

Երուսաղեմի իր պատրիարքությունը զինք դրդեց Արմաշը վերստեղծել Ս. Հակոբա հովանին տակ, հիմք զնելով Հոգեոր վերածնության մը։ Ուսավ և ուսուց հոն ալ։ Այդ օրերու սերունդեն շատերը կան։ Թող անոնք պատմեն, թե ինչ ցանեց հոն, իր պատրիարքության մոտ տասը տարիներուն։

Քարգեն, իր լավագույն ձեռնասուններեն մին, որ անոր վերջին տարիներուն ևս ապրեցավ անոր մտերմության մեջ, կըսե, թե ան «երբ կդադրի ուսուցանելե՝ կճանճանանա. երբ կդադրի ուսուցանելե, կհիվանդանա. լոթանասունի դռները ոտք դրած է, և դեռ կուտամնասիրե, ըսենք՝ կուսանի. ... Ամեն օր նոր բան մը պետք է ավելնա իր առաստ պաշարին վրա...»։ Հետո, բնորոշելու համար անոր կատարած դերը իբր ուսուցիչ, Քարգեն կըսե, թե «Դուրյան սրբազնի վարդապետական

կամ ուսուցչական ծառայության հավասարող էջ մը գտնելու համար մեր ազգային-եկեղեցական պատմության մեջ, պետք է բարձրանալ մինչև ծ դարու ոսկեղարյան դպրոցը։ Սահակ-Մեսրոպի շունչին տակ, և Ժերուն ալ՝ Սյունյաց դպրոցը, Որոտնեցի և Տաթեացի գավազանին ներքս, որոնք դարագուխներ ստեղծեցին իրենց ժամանակ-ներուն մեջ. իսկ մեզի ժամանակակից պատմության մեջ Դուրյանն է այն միակ Հոգեորական դեմքը, որ ուսուցիչն ու վարդապետը եղած է բազմաթիվ աշակերտության մը Հիսուս տարիներու ոսկեղող շղթայումով մը։

Եատեր են ըսած, թե եկեղեցվո բնմը ուսուցանելու ուրիշ ամբիոն մըն էր իրեն համար։ Թյուրիմացությունն է այդ ծիշտ է, որ աստվածաբանական մարզանները կամ բարոյախոսական հասարակ տեղիքները չեին իր քարոզները։ Բայց չեին նաև մտերմության այն պահը, երբ ուսուցիչ մը դեմ-հանդիման կուգա իր սաներուն հետ։

Ավելին. իր գրական ստեղծագործությանց մաս կազմեն իր քարոզները, զորս կրնայիր ըմբուխնել այնքան հաճուքով, որքան իր քերթածները։

Պերճախոս էր իր քարոզներուն մեջ, այսինքն կտպավորեր, բայց հոետորական ձևեր երբեք չուներ։ Կտպավորեր խոսքին գեղեցկությամբը և ձայնին քաղցրությամբ։ «Ի՞ր աղոյ ձայնը մերթ երգի մը սրտագրակ ոլորակը կառնուր և մերթ կշուավոր քերթվածի մը դաշն հնչականությունը», — կըսե Թորգոմ պատրիարք ակնարկելով Դուրյանի քարոզներուն։

Հազվագետորեն աշակերտ մը կկապվի իր ուսուցին հետ այնքան սերտ ու այնքան զերմությամբ, որքան կապված են Դուրյանի աշակերտները իրենց ուսուցչին։ Եվ այդ կապը երբեք չեն կրցած ջնջել տարիները։ Իր սաները ինչ դիրքի ալ հասած են, միշտ աշակերտ նկատած են իրենք վիրենք անորու Ու պատիկ արժանիք մը չէ ուսուցիչ մը համար՝ ցմիշտ պահել իր հմայքն ու պատկառնքը, դարու մը մեջ, ուր աշակերտները շուտ մը կգլեն կանցնին իրենց վարպետները, ու նոր համբավները հեղնանքով կնային ետև Ու կրնանք ըսել, որ Դուրյան ամրոց սերունդի մը ուսուցիչն էր։

Հարկ չկար, որ ուղղակի աշակերտեիր իրեն։ Առիթ մը միշտ կըլլար, որ իր իմաստութենեն քեզ կայծ մը հասներ։

Ու քանիներ կան, որ իրեն աշակերտած են՝ առանց գիտնալու

(Շարունակելի)

**ՀԱՄԱՅՆ ՎՐԱՅ ՊԱՏՌԻԱՌՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-Ի ՄԱՀԸ**



Հունվարի 10-ին, Թբիլիսիում, իր մահկանացուն կնքեց Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս ծերունազարդ Մելքիսեդեկ Գ-ը, 88-ամյա հասակում։ Սպի մեջ մտավ Վրաց Եկեղեցին։

Ամենայն Հայոց Հայրապետը ցավակցական հեռագիր ուղարկեց՝ բաժանելով Վրաց

Եկեղեցու վիշտը, և պատվիրակություն նշանակեց թաղման մասնակցելու։

Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը ծնվել է 1872 թվականին Գանտառուրա գյուղում։ Ավարտել է Կազմանի Հոգևոր ակադեմիան 1900 թվականին։ Ուսուցչություն է արել Քութայիսի, Սմոլենսկի, Կամենեց քաղաքների Հոգևոր

սեմինարիաներում: Երկար ժամանակ պաշտոնավարել է որպես հոգևոր հովիվ:

1925 թվականին ծանուագրվել է Համբարձում 1935-ին ձեռնադրվել է միարոպովիտ Սովորումիի. 1952 թվականին, երջանկահիշատակ Կալիստրատ Կաթողիկոս-Պատրիարքի վախճանումից հետո, նույն թվականի ապրիլ ամսվա 5-ին ընտրվում է Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս: Զնայած իր 80-ամյա տարիքին, նա իր ընտրությամբ իր վրա դրված ծանրությամբ դժվարին լուծը Աստուծո օգնականությամբ տարավ հավատարմորեն, արդյունավորությամբ և մեծ ձեռնհասությամբ ղեկավարելով իրեն հանձնված բանափոր հոտը 8 տարի, տարիներ, որոնք լուսավոր են մնալու վայա եկեղեցու տարեգրության մեջ:

Հանգուցյալը բարեկամական ամենաշքրի
դգացմունքներով էր կապվել ամենայն հայոց
Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և անձամբ Վե-
հափառ Հայրապետին, որին սիրում էր և
հարգում մեծ սիրով:

1957 թվականի հուլիսի 6-ին, Հանգու-
յալի Հրավերով, Վեճափառ Հայրապետը
այցելեց Թրիլիսի և նույն թվականի հոկ-
տեմբերին Համայն Վրաց Կաթողիկոս-
Պատրիարք Մելքիսեդեկ Գ-ը փոխադարձ
այցելությամբ ժամանեց Ս. Էջմիածին։ Այդ
փոխադարձ այցելություններն արտահայ-
տում էին երկու քույր եկեղեցիների և եղ-
բայրական ժողովուրդների փոխադարձ
սեռն ու անքակտելի բարեկամությունը։

Նորին և ասքազնութեամբ պատճենագործ կատարել է Ա. Էջմիածնում եղած
ժամանակ, Մայր Աթոռի միաբանությունը մտտիկից ծանոթացավ ալիքարդ Հայրապետի մաքուր և սուրբ սովոր, տեսավ, թե նա ինչ-պիսի սեր և սիրալիր վերաբերմունք ունի հայ ժայ ծողովորդի և Հայ եկեղեցու նկատմամբ

նապատիկ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոս-
յանը, իսկ Մայր Աթոռից գերաշնորհ Տ.
Սահակ արքեպիսկոպոսին ողեկցում էին
նաև բարեշնորհ Կարապետ սարկավագ Թեն-
լիյանը և բարեշնորհ Մանղրո սարկավագ
Բեհրուզյանցը:

Պատգամավորությունը Ս. էջուրու կազմակերպությունը 15-ին և 16-ին հասպարհվեց Հունվարի 15-ին և 16-ին հասպարհիլիսի: Կայարանում պատգամավորությանը դիմավորեց Քոփթայիսիի եպիսկոպոս Նաումը, պատրիարքարանի քարտուղար քահանա Հոր ուղեկցությամբ: Դիմավորելու էին եկել նաև արժանապատիկ Տ. Ռուբեն և արժանապատիկ Տ. Զարեհ քահաննաները: Տ. Նաումը եպիսկոպոսի հետ Տ. Սահակ արքեպիսկոպոսը ուղեկցվեց Հայոց առաջնորդարանը, ապա վրաց Ս. Միտոն դարավոր պատգամական տաճառարը, ուր դրված էր Հանգամանականի դագաղը:

գուցյալ Հայրապետի դադալը՝
Դագաղի վրա դրվեց Վեհափառ Հայրապե-
տի ուղարկած ծաղկեպսակը՝ զարդարված
ճշմարին խալով:

Հայկական խաչող՝
Գերաշնորհը Տ. Սահակ արքեպիսկոպոսը
Վրաց Կաթողիկոսության նորընտիր տեղա-
պահ Տ. Եփրեմ Միտրոպոլիտին հայտնեց
Վեհափառ Հայրապետի և Հայ Եկեղեցու ցա-
վակցությունը, որից հետո Հայոց Եկեղեցու
պատամապորությունը Եկեղեցական զգես-
տավորումով կատարեց Հոգեհանգիստ, վրաց
և Աւելի առաջապահ։

Ա. Օիսու տաճարին:

Հայրապետի թաղման օրն էր Հայոց սկզբում կատարվեց հոգեհանգիստ, որից հետո էջմիածնի պատգամավորությունը ուղևորվեց գեափի վրաց Ս. Սիոն եկեղեցին, ուր պատարագ էր մատուցում կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Տ. Եփրեմ միտրոպոլիտ Պատրիարքին, նիոնսա էու Համայն Ռու-

լիտը: Պատարագին ներկա էր Համար և ուս
սիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի
պատգամավորությունը՝ Լուսի արքեպիսկո-
պոս Պալլագիի գլխավորությամբ: Մուս Պրո-
վուլավ Եկեղեցու պատգամավորության մեջ
էին գտնվում նաև Զերնիկովսկի արքեպիս-
կոպոս S. Անդրեյը, S. Նիկողոյմ վարդապետը
և ուրիշներ Ներկա էր նաև Դամասկոսի
Պատրիարքարանի Ներկայացուցիչ Վասիլի
Եպիսկոպոսը՝ Ընկերակցությամբ Ալեքսի
Արքել-Քերիմ արքեղայի: Ներկա էին նաև
Վրաց Եկեղեցու միտրոպոլիտներ, եպիսկո-
պոսներ, վարդապետներ, քահանաներ, սար-
կավագներ և դպիրներ, որոնք բոլորը զգես-
տավորված՝ մասնակցում էին սուրբ պատա-
րագին: Ներկա էին նաև կաթոլիկ համայնքի
պետ Հայր Էմմանուիլ Վարդիձեն, Գրեական և
մոռուլմանական Համայնքների Ներկայա-
ցուցիչներ:

Սուրբ պատարագից հետո սկսվում է հանգուցյալ Կաթողիկոսի թաղման արարողու-

թյունը, Գագաղի վրա կվովի արքեպիսկոպոս գերազնորհ Տ. Պալլաղին հուզիլ դամբանական է արտասանում՝ Հայտնելով Ռուսաց Եկեղեցու ցավակցությունը Վրաց Եկեղեցուն, միաժամանակ վեր հանելով հանգուցյալ Կաթողիկոսի կատարած Հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունը:

Ապա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Հայ Եկեղեցու և պատգամավորության անոնից ցավակցության խոսք ասաց Տ. Սահակ արքեպիսկոպոսը: Դամբանական ճառեր արտասանեցին նաև միտրոպոլիտ Դիմիտրին, Դավիթ եպիսկոպոսը, Վասիլի եպիսկոպոսը և Հրեական Համայնքի պետ Խորայել Արոնովիչ Բանալիկաշվիլին:

Ապա բոլոր հոգևորականները վերջին հրաժեշտը տվեցին՝ Համբուրելով Հանգուցյալ Պատրիարք-Կաթողիկոսի Աջը:

Ժամը 5-ին հանգուցյալի դագաղը տաճարից դուստ բերվեց և ըստ Վրաց Եկեղեցու սովորության՝ պատեցվեց տաճարի շուրջը մեծահանդես թափորով: Դուրսը լի էր բազմահազար ժողովով, որոնք եկել էին իրենց վերջին հրաժեշտը տալու հանգուցյալ սիրելի Հայրապետին: Տաճարի շուրջ մեկ պտույտ

կատարելուց հետո դագաղը ներս տարվեց, ուր փորձած էր հանգուցյալի գերեզմանը:

Հուզիլ էր թաղման տեսարանը. ոչ ևս է այլևս բոլորից սիրված ու հարգված վրաց հավատացյալ ժողովրդի Հայրը, Վրաց Եկեղեցու Հովվապետ Մելքիսեդեկ Գ-ը:


Թաղումից հետո արվեց հոգեճաշ, երեկոյան ժամը 6.30-ին: Հոգեճաշի ընթացքում հանգուցյալի հիշատակը ոգեկոչեցին Տ. Պալլաղի արքեպիսկոպոսը, Տ. Եկրեմ Միտրոպոլիտը, Տ. Սահակ արքեպիսկոպոսը, Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Տ. Դիմիտրի միտրոպոլիտը և ուրիշներ:

Հոգեճաշից հետո Հայ Եկեղեցու պատգամավորությունը հրաժեշտ տվեց կաթողիկոսական տեղապահ Տ. Եկրեմ միտրոպոլիտին, և Վրաց բարձրաստիճան Հոգևորականներին, մի անգամ ևս Հայտնելով իր խորունգ ցավակցությունը Վրաց Եկեղեցու մեծ կորստի առթիվ:

Հանգիստ երշանկահիշատակ Հայրապետի նշխարներին:

Տա՛ Աստված, որ շուտով վերանա սգո և քողը Վրաց Աթոռից և այն ունենա իր արձանավոր նոր Գահակալը:





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ*

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ Կահիրեաւմ գումարված Եպիսկոպոսական ժողովը, որի օրակարգում կային Վեհափառ Հայրապետի կողմէից ներկայացված հիմնական 10 հարցեր (տե՛ս «Ուղևորություն», էջ 129), 1956 թվականի մարտի 5-ին, իր երկրորդ նիստում «Մայր Աթոռի և նվիրապետական մլուս Աթոռներու փոխարաբերությունը և գործակցության ծրագրի մը բնարկությունը և պատրաստությունը» օրակարգի առնչությամբ, քննության առաջ նաև 1956 թվականի փետրվարի 20-ին Անթիլիասում կատարված կաթողիկոսական միակողմանի ընտրության հարցը, որն սպառնում էր պառակտում առաջացնել Տանն Կիրիկոս Կաթողիկոսության միաբանության և ժողովրդի մեջ: Բնական էր և անհրաժեշտ, որ Կահիրեաւմ հավաքված Հայեակոպաները և մեր նվիրապետական Աթոռների ներկայացուցիչները, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, զբաղվեին այս ծանրակշիռ հարցով, կանինելու համար պապականումը և երկիրեղումը:

Այդ ժողովին մասնակցում են Կոստանդնուպոլիսի պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը, Երոսաղեմի Առաքելական Աթոռի պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե Արքանը, Եղիշեի հայոց առաջնորդ Տ. Մամբրի Արքեպիսկոպոս Սիրունյանը, ԱՄՆ-ի հայոց արքեպիսկոպոս Գալֆայանը, Երևանացի Աթոռի միաբան եպիսկոպոսներ Տ. Սուրեն, Տ.

Հայկազոն, Տ. Պարգև և Տ. Հայրիկ սրբազնները, Եպիսկոպոսի թեմի Հայրապետական պատվիրակ Տ. Սերովը եպիսկոպոս Մանոկյանը, Վրաստանի հայոց առաջնորդ Տ. Վարդան եպիսկոպոս Սահակյանը և Կաթոպոնիայի հայոց առաջնորդ Տ. Շնորհը եպիսկոպոս Գալւարյանը:

Ժողովական եպիսկոպոսների միաձայն հավանությամբ (և Հատկապես Տ. Խորեն և Տ. Ղևոնդ եպիսկոպոսների ցանկությամբ), «Հարմար զատվեցավ, որ ժողովի այս նիստեն բացակային Մեծի Տանն Կիրիկոս Կաթողիկոսության եպիսկոպոսները՝ Տ. Խաղ արքեպիսկոպոս, Տ. Խորեն եպիսկոպոս, Տ. Դերենիկ եպիսկոպոս, Տ. Ղևոնդ եպիսկոպոս և Տ. Շավարշ եպիսկոպոս, Նկատելով, որ ժողովի այս նիստին խորհրդակցության ընյութն էր Անթիլիասի կաթողիկոսական ընտրությունը: Ներկա էին մնացյալ 11 սրբազնները, ընդ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, որ ժողովը բացավ աղոթքովյա («Ուղևորություն», էջ 132):

Բաց անելով ժողովը, Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս շնչտում է իր արտասահման ուղևորության ազգօգուտ և եկեղեցական սպատակները, իսկ Անթիլիասի կաթողիկոսի ընտրության նրա մասնակցության ամիակ շարժառիթը եղած է պահպանել ի հարկին պաշտպանել Հայաստանյայց եկեղեցվոր միուրյանը, որ ստացված լուրերու համաձայն վտանգված կտեսները:

Արդարեւ, 1956 թվականի փետրվարի 14-ի հետո պատահած զեպքերը ապացուցեցին որ արդարացի էին եղել Վեհափառ Հայրապետի մտահոգությունները՝ եկեղեցու միությունը պահպանելու մասին:

* Շարունակած եկեղեցին ամսագրի 1959 թվականի թ-թ, ժ. Ժ. և Ժ. համարներից:

Ապա ժողովում Վեհափառ Հայրապետը վերլուծության է ենթարկում փետրվարի 14-ից այս կողմ կատարված դեպքերը, խոսում եկեղեցական պառակտումը կանխելու իր փորձերի մասին, շեշտելով այն, որ Իր հիմնական մտահոգությունը եղած է առաջքը՝ առնել երկպառակման:

Իր խոսքերին և խորհրդածություններին որպես եղակացություն, Վեհափառ Հայրապետը հայտարարում է հատենի եպիսկոպոսական ժողովի, որ «Ենք երբեք կանխակալ կարծիքով Անբիլիաս չէ եկած: Ինչ որևէ մեկը չէ ունեցած ի մտի որպես թեկնածու, իր միակ նպատակն է եղած, որ ընտրությունը կատարվի համերաշխությամբ և խաղաղ պայմաններու տակ»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը եպիսկոպոսական ժողովին տեղեկացնում է, որ մի օր առաջ Տ. Խորեն և Տ. Ղեռնդ սրբազանները ներկայացնել են Իրեն և ժողովին իրենց մասնակցության համար առաջարկել են երկու պայման. ա) որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորի Տ. Զարեհ եպիսկոպոսի ընտրությունը՝ նկատելով այն արգեն իսկ կատարված իրողություն և բ) եպիսկոպոսական ժողովում չքննվի Անբիլիասի հարցը:

Տեսակցության ընթացքում անթիվասական երկու եպիսկոպոսները «քաղաքական բնույթ պարունակող ակնարկություններ ևս» արել են, այն իմաստով, որ «ամերիկյան կառավարությունը և տեղական պետությունները իրենց կողմն են»: Տ. Խորեն և Տ. Ղեռնդ սրբազանները, չգոհանալով այսպիսի ակնարկություններով, ցուց են տվել նաև «սպառնալիքի հեռանկար, ակնարկելով Ամերիկայի հնջատյալ հատվածի և Դաշնակցական կուսակցության ազդեցության ներքև գտնվող թեմերուն»:

Վեհափառ Հայրապետը, անալլայ և խաղաղ հոգով, տվել է հետեւյալ կարծ և կտրուկ պատասխանները Տ. Խորեն և Տ. Զարեհ սրբազաններին:

ա) որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը չի կարող շնորհավորել առ այժմ Տ. Զարեհ եպիսկոպոսին, որովհետև նա կաթողիկոս չէ օրինավոր ընտրությամբ և չի ստացել հայրապետական օծում:

բ) որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը չի կարող խոստանալ, որ եպիսկոպոսական ժողովը չըրացվի Անբիլիասի հարցով, և որ ինքը, ընդհակառակը, համոզված է, որ եպիսկոպոսական ժողովը պիտի զբաղվի այդ հարցով:

Վեհափառ Հայրապետը Տ. Խորեն և Տ. Ղեռնդ սրբազաններին հայտարարել է միաժամանակ, որ Կիլիկիո Կաթողիկոսությունը Հայաստանյաց Եկեղեցու մի մասն է, և ընդունելի չէ երբեք այն վնասակար, աղետա-

բեր տեսակետը, ըստ որի Անթիվասի մասնակոր Կաթողիկոսությունը, իր թե, անշատ, անկախ մի գոյություն է Հայ Եկեղեցու նվիրապետության մեջ և վեր եպիսկոպոսական ժողովից:

Ժողովում Վեհափառ Հայրապետը իր խոսքը վերցացրել է օրինական այն մտածումով, որ ստեղծված կացության առաջ «Մեր ցանկությունն է որոշ կեցվածք մը ցուց տալ այն դեպքերու հանդեպ, որոնք տեղի ունեցան Անթիվասի մեջ», երբ «Եկեղեցվու հետ կապ չունեցող ուժ մը, քաղաքական կազմակերպություն մը, իր կամքը պարտադրեց ընդդեմ էջմիածնին, եպիսկոպոսական դասուն և ժողովուրդի լայն զանգվածներու տրամադրության: Երևույթ մըն է սա, որուն հանդեպ վերաբերմունք մը անհրաժեշտ է ցուց տալ: Սկզբունքը պետք է փրկել Կրնան տեղի ունենալ Երևույթներ, որոնք վտանգավոր ըլլան Մայր Աթոռի համար. բայց սպառնալիքները պետք չէ աղդեն մեր վրա: Պետք է փրկել Եկեղեցական հեղինակությունը» («Ուղևորություն», էջ 134):

Եպիսկոպոսական ժողովը, միասիրու և միակամ, բաժանում է իր Վեհափառ նախագահի մտահոգություններն ու առողջ դատողությունները և Հայ Եկեղեցու մարմնի վրա բացված ժամանակավրեպ և աղիտարեր վերքը բուժելու համար, շեշտելով կացության լրջությունը, մտքերի փոխանակությունից հետո, անհրաժեշտ է գտնում նվիրապետական Աթոռների և ամբողջ եպիսկոպոսական դասուն վերաբերմունքը ճշտել Անբիլիասի գեղքերի նկատմամբ:

Խոսք են առնում ներկա բոլոր սրբազան հայրերը:

Ամենապատիկ Տ. Գարեգին պատրիարքը համարում է բոլորի միտքը հետևյալ կերպով. «Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը մաս կազմե Հայաստանյաց Եկեղեցվու: Երբ զեղծում մը կպատահի կամ շեղում մը կկատարվի Կիլիկիո Կաթողիկոսության մեջ, Հայաստանյաց Եկեղեցին շիկնար անտարեր մնալ: Հետեւաբար, Ամենայն Հայոց Հայրապետությունը, մյուս նվիրապետական Աթոռները և եպիսկոպոսական դասը իրավունք և պարտականություն ունին զբաղելու Կիլիկիո Կաթողիկոսական ընտրության հարցով»:

Ապա, հետ եպիսկոպոսական ժողովի խորհրդակցության, միաձայն ընդունվում է հետևյալ բանաձեռ.

«Նկատի ունենալով,

որ Հայաստանյաց Եկեղեցին մի և անքաժան մարմին մըն է, իբրև միակ Պետք և Գլուխ ունենալով Ամենայն Հայոց Կաթողի-

կոսր և որպես միակ կեղրոն լուսավորչա-
հիմն Մայր Աթոռ Ս. էջմիածինը,

որ Կիլիկիո Աթոռը յանակի Հայրապե-
պություն մըն է կիրանանի, Սուրբո և Կիպ-
ռոսի այժմու սահմաններուն մեջ միայն և
ննիքա է Ամենայն Հայոց Կաթողիկոսու-
թյան ի հոգեորս, անկախ ըլլալով վարչա-
կան և մատակարարական գործառնությանց
մեջ,

և որ տարվովս փետրվար 20-ին Անթի-
լիսի Հայրապետանոցի դաշիճի մեջ կա-
տարված ընտրությունը զուտ միակողմանի
և հատվածական բնույթ մը ունեցած է,
պատճառ դառնալով հավատացյալ ժողո-
վորդի երկինքման և պառակտման, և
հակառակ ըլլալով ընդհանրապես Քրիստո-
նեական և մասնավորապես Հայաստանյալց
Եկեղեցվո սիրո և միաբանության ոգլույն,
Եպիսկոպոսական ժողովս միաձայնու-
թյամբ սույն ընտրությունը ցավով կնկատե
թերի և անընդունելի» («Ուղևորություն», էջ
134—135):

Այսուհետեւ, ինչպես Վեհափառ Հայրա-
պետի, եպիսկոպոսական դասի և բոլոր ող-
ջամիտ և ազնիվ հայ մարդկանց ամենազերս
փափագն ու ցանկությունն էր վերջ տալ Ան-
թիլիսի տագմապին, ձեռք առնել այնպիսի
միջոցներ, որ կատարված «թերի և անընդու-
նելի» ընտրությունը դառնար ընդունելի և
գտներ համագգալին հավանություն:

Այս նպատակով, Եպիսկոպոսական ժողո-
վը, Եկեղեցական պառակտման առաջքը
առնելու և կողմերի միջև համերաշխություն
ստեղծելու ազնիվ մտահոգությամբ, կաղ-
մամու է երեք հոգուց բաղկացած մի հանձնա-
խումբ, որի կազմի մեջ են մտնում Տ. Գար-
բեգին պարտիարքը, Երևաղեմի Աթոռի
տեղապահ Տ. Եղիշե և Կալիֆոռնիայի առաջ-
նորդ Տ. Շնորհը սրբազններ և նրա վրա
պարտականություն դնում, մեր Եկեղեցա-
կան իրավունքի լուսի տակ, կազմել և Ե-
պիսկոպոսական ժողովին ներկայացնել
վերոհիշյալ բանաձեկից տրամարանորեն
բխող կանոնական եղրակացություններ, ո-
րոնց Անթիլիսի կողմից ընդունելության և
գործադրության դեպքում, փետրվարի 20-ի
«թերի և անընդունելի» ընտրությունը կդառ-
նար ընդունելի:

Հանձնաժողովը բարեխիղճ աշխատանքով
և հանգամանորեն պատրաստում և մարտի
6-ին, Եպիսկոպոսական ժողովի երեկոյան
Դ նիստին է ներկայացնում ? կետերից
բաղկացած համաձայնության մի նախագիծ:

Եպիսկոպոսական ժողովը, Հայ Եկեղեցու
պատմության, ավանդության և մեր Եկեղե-
ցական կանոնների ու իրավունքի, ինչ-
պես նաև 1652 թվականի երուսաղեմի

ժողովրդական որոշումների, ապա 1863
թվականի Ազգային Սահմանադրության և
1871 թվականի 7 հոդվածներից բաղկացած
«Մրագիր հարաբերութեանց Կիլիկիո Կաթո-
ղիկոսական վիճակի ընդ Ազգային կեդրո-
նական վարչութեան» և 1880 թվականի
Կոստանդնուպոլսում կրոնական ստյանի
կողմից 6 հոդվածներից բաղկացած «Պայ-
մանագրի» և 1945 թվականի Ս. էջմիածնում
Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից և 14
հոդվածներից բաղկացած «Ազգային-Եկեղե-
ցական ժողով գումարելու հատուկ Կանո-
նագրության» պատմական փաստերի և
նախկին ժողովական-կանոնական հանրա-
հայտ և բոլորից ընդունված որոշումների
լուսի տակ, մի առ մի քննության առնելով
կազմում և միաձայն ընդունում և ստորա-
գրում է, իր մարտ 7 թվակիր, և նիստում,
հետևյալ Համաձայնագիրը և Ռիտագիրը.

«ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Նկատելով, որ Տ. Զարեհ սրբազն եպիս-
կոպոս Փայասլյանի ընտրությունը Անթոռ
Հայրապետության Մեծի Տանն Կիլիկիո կա-
տարված է թերի կերպով և անընդունելի է,
Ամենայն Հայոց Հայրապետ նորին Ս. Օծու-
թյուն Տ. Տ. Վազգեն Ա շնորհազարդ Կաթո-
ղիկոսի նախագահության տակ, 1956 մարտ
5—8-ին, Եպիպոտոսի հայոց առաջնորդարա-
նի դաշիճին մեջ ի Կահիրե գումարված Ե-
պիսկոպոսական ժողովս կառաջարկե լրաց-
նել այդ թերին հետեւյալ պայմաններով.

ա) Տ. Զարեհ սրբազն պիտի ստորագրե
ության մը, ուր նշված պիտի ըլլան Կի-
լիկիո Հայրապետին դիրքը հանդեպ Ամե-
նայն Հայոց Կաթողիկոսության և իր Հայ-
րապետական իրավասություններն ու պար-
տականությունները:

բ) Կիլիկիո Հայրապետությունը պիտի ընդունի
գերազահությունը Ամենայն Հայոց Կաթողի-
կոսության որ ի Ս. էջմիածին, Եպիպոկվե-
լով ի հոգեորս՝ դպավանաբանական, վարդա-
պետական և ծխական խնդիրներու մեջ,
սույն Կաթողիկոսության նախամեծար Աթո-
ռուն և պահելով իր անկախությունը վարչա-
կան-մատակարարական գործառնությանց
մեջ:

գ) Կիլիկիո Հայրապետությունը պիտի ու-
նենա իր սեփական կանոնադրությունը, հա-
մաձայն Հայաստանյայց Եկեղեցվո ոգլույն,
սկզբունքներուն և կանոններուն և տեղական
պայմաններուն նկատմամբ, պատշաճեց-
ված Ամենայն Հայոց Կաթողիկոսութ-
յան կողմէ վավերացված «Հայաստանյայց
Եկեղեցվո Սահմանադրության», ապահովե-
լով Կիլիկիո Հայրապետական իշխանության
արժանավայել և ընդունելի դիրք և հեղինա-

կություն։ Մինչև սույն կանոնադրության պատրաստությունն ու վավերացումը, պիտի առկախավիթ և գործադրութենք զարդի 1941-ի կանոնադրությունը։ Ասոր փոխարեն սակայն, պիտի կազմվի Հոգեոր խորհուրդ մը, իրեւ գործադրի մարմին, բաղկացած լորուեկեղցականներեւ և չորս աշխարհականներեւ և ընտրված Կիլիկիո Հայրապետության Միաբանական ընդհանուր ժողովին։ Սույն Խորհրդի նախագահն է Հայրապետը։

դ) Կիլիկիո Հայրապետը պիտի ունենա իր ընդհանուր փոխանորդը, ընտրված Միաբանական ընդհանուր ժողովին կողմեւ։

ե) Կիլիկիո Հայրապետի ընտրության պիտի մասնակցի Մայր Աթոռու երկու ձայնով՝ մեկ եկեղեցական և մեկ աշխարհական, վերջինը Գերագույն Հոգեոր Խորհուրդի անդամներեն, և ընտրյալ Հայրապետի օծումը պիտի կատարվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կամ Անոր ներկայացուցի ձեռքով և վեց եպիսկոպոսներու մասնակցությամբ։

զ) Կիլիկիո Հայրապետը, ըստ եկեղեցական-իրավական կանոնաց, պիտի չկոնսակատարել կամ իր Աթոռին և վիճակավոր եպիսկոպոսներուն արտոնել կատարելու որևէ ձեռնադրություն կամ ձեռնադրված եկեղեցականներու ուղարկել Կիլիկիո Հայրապետության սահմաններուն դուրս գտնվող թեմերուն համար, առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնարարության և հավանության, իսկ քահանաներու ձեռնադրության և առաքման վերաբերմամբ՝ Մայր Աթոռին հաստատված առաջնորդներու խընդրանքին։ Հակառակ պարագային ձեռնադրութին և ձեռնադրվողին նկատմամբ կիրառվի կանոնական տրամադրությունը։

է) Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հիշատակությունը կատարվի սուրբ պատարագի միջոցին բոլոր հայ եկեղեցիներուն մեջ անխտիր, նաև Հայրապետական մաղթանք հանուն Ս. Էջմիածնի և Ընդհանրական Հայրապետին։ Պիտի կատարվի նույնպես անվան հիշատակությունը Կիլիկիո Հայրապետին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հիշատակութենեն անմիշապես հետո» («Ուղևորություն», էջ 157–158):

«ՈՒԽՏԱԳԻՐ

ի Մեջ Տաճարիս Սրբոյ Լուսավորչի ի Գահիրէ մայրաքաղաքին Եպիպատոսի, առաջի Աստուծոյ Հօր Ամենակալի, Որդույն Միածնի և Հոգույն ճշմարտի և առաջի պատուական Հայրապետին Ամենայն Հայոց Տեառն Վաղգենայ Առաջնոյ Սրբազնագոյն Կաթողիկոսին և Սայրագույն Պատրիարքին Առաքելական նախամեծար Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ի ներկայության Պատրիարքին Հա-

յոց Թուրքիոյ Տեառն Գարենի Արքեպիսկոպոսի, Պատրիարքական տեղապահին Առաքելական Աթոռոյ Սրբոյ Երուսաղեմի Տեառն Եղիշէի Արքեպիսկոպոսին և առաջի եպիսկոպոսական դասուն, ուխտեմ կալ մնալ զամենախն աւորս կենաց իմոց սպասաւոր հաւատարիմ և աւանդապահ Սրբոյ և միոյ Առաքելական Եկեղեցոյս Հայաստանեաց, և հնազանդ ի հոգեորս յամենայնի, նախամեծար Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի և Գահակալի նորին Վազգենայ Առաջնոյ շնորհազարդ Կաթողիկոսի Ամենայն Հայոց և յաջորդաց սորին։

Վասն որոյ, ես, ընտրեալ Հայրապետ Մեծի Տանն Կիլիկիոյ ի սահմանս կիրանանու, Սուրբիոյ և Կիպրոսի, վկայութեամբ խղճի մտացս, ստորագրեմ զայս գիր յանձնառական և անդրժելի ուխտի» («Ուղևորություն», էջ 158):

Համաձայնագրի մեջ, ինչպես երեսում է, ամենայն վճռականությամբ պաշտպանվում են մի շարք ընդհանուր, հիմնական սկզբունքներ։

1) Ապահովել Հայաստանյաց Եկեղեցու միասնականությունը և հայ ժողովրդի միությունը։

2) Բարձրացնել իշխանությունն ու հեղինակությունը Անթիլիասի կաթողիկոսի, որպեսզի նա «որևէ ձևի տակ, դուրս գննա Հայաստանյաց Եկեղեցվու սիրո միութենեն», — ինչպես նշել է Վեհափառ Հայրապետը, և

3) Անթիլիասը պատել արտաքին քաղաքական-կուսակցական աղղեցություններից, մշակելով նոր կանոնադրություն, համաձայն Հայ Եկեղեցու կանոնների և ողու, ինչպես նաև տեղական պայմանների։ Մինչև նոր կանոնադրության մշակումը, Կաթողիկոսի նախագահության տակ, կազմել մի Հոգեորդ խորհուրդ, որպես գործադիր մարմին, բաղկացած շորս Եկեղեցական և չորս աշխարհական անդամներից, ընտրված Կիլիկիան Միաբանական ընդհանուր ժողովից։

ինչպես երեսում է Համաձայնագրի բովանդակությունից և վերլուծությունից, ոչ Վեհափառ Հայրապետը և ոչ էլ Եպիսկոպոսական ժողովը ոչ մի ձգում, դիտավորություն շնունեցել «խանգարելու կատարված ընտրությունը... Կիլիկիան Աթոռը դնելու նկուն վիճակի մեջ», ինչպես փորձում է պատկերել «Հասկ»-ը (1959 թ. մայիս, էջ 175): Ընդհակառակը, Վեհափառ Հայրապետը Անթիլիաս գնաց խաղաղության ծիթենին ի ձեռնին և ազգային-Եկեղեցական միասնականության քաղցր, Հայրական խոսքը շրթներին։ Իսկ Եպիսկոպոսական ժողովի նախագահի և ժողովական բոլոր եպիսկոպոսների միակ և անկեղծ ցանկությունն էր՝ «միակող-

մանի և Հատվածական բնույթ ունեցող ընտրությունը՝ դարձնել ընդունելի և անքերի:

Փետրվարի 20-ի «թերի և անընդունելի» ընտրությունը նա աշխատել է օրինականցնել կողմերի միջև փոխադարձ զիջումներով և հարավոր բոլոր միջոցներով՝ «կողմերի միջև ստեղծել համերաշխատթյան կարուն հող և «ընդունելի» դարձնել փետրվար 20-ի միակողմանի ընտրությունը, և դրանով ամրապնդել Անթիլիասի Աթոռը, Անթիլիասի Աթոռի և աթոռակալի վարկն ու բարոյապես արժեքավորել և բարձրացնել հմայքը «Հաչու մեր ժողովորդին և օտար շրջանակներու» («Ուղևորություն», էջ 139):

Այս ճշմարիտ ոգին և ուղղությունը թե՛ Վեհափառ Հայրապետի և թե՛ Կահիրերի Եպիսկոպոսական ժողովի Համաձայնագրի:

«Հասկ»-ը իդուր է փորձում նվազեցնել Կահիրերի Եպիսկոպոսական ժողովի պատմական նշանակությունը՝ հեգնաբար աշխատելով Եպիսկոպոսական ժողովի իրապես «զանազան շողջողուն օրակարգեր»-ի մեջ տեսնել «միակ և գլխավոր օրակարգ մը» (1959 թ. մայիս, էջ 175), այն է՝ «Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ճակատագրի» հարցը:

Պատահական չէ, որ փութկոտությամբ «Հասկ»-ը շի նշանակություն և պատմական շշանակությունը գանազան» այլ հրատապ օրակարգեր, որոնք սերտորեն կազ ունեն Հայ Եկեղեցու հետաքա ժղկաման, կազմակերպության, միասնականության և Հայ Եկեղեցու ծոցում հետաքա նման անկարգությունների առաջը առնելու մտահոգությունների հետ, ինչպիսիք են:

«1. Ընդհանուր զեկուցում Մայր Աթոռի ներկա կացության մասին.

2. Հայաստանյաց Եկեղեցվոր Սահմանադրության հարց.

3. Հայաստանյաց Եկեղեցվոր Կանոնագրի կազմության հարց.

4. Ս. Գրքի տպագրության 300-ամյակի տոնակատարություն և այդ առնությամբ Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության հարց.

5. Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի առավել կազմակերպության խնդիր.

6. Արտասահմանեն քանի մը Հոգևորականներ էջմիածին հրավիրելու խնդիր.

7. Մայր Աթոռի կողքին Հոգևոր կաճառ մը ստեղծելու հարց.

8. Հայաստանյաց Եկեղեցվոր բարեկարգություն.

10. Քրիստոնեական այլ Եկեղեցիներու հետ հարաբերության խնդիր («Ուղևորություն», էջ 129):

Կույր կամ ստախոս պետք է լինել հայտարաբերությունը համար, թե այս հարցերը ձևական էին, երբ Մայր Աթոռի հետաքա գործունեությունը պայծառ կերպով ցուց է տալիս, թե այդ հարցերը իրենց կենսագործման ճանապարհի մեջ մտան մեծ մասամբ: Եվ եթե այդ հարցերից մի քանիսը չկենսագործվեցին, դրա պատճառը և պատասխանատուն հենց իրենք, Անթիլիասի ուղեկորուս հերձվածողներն են:

Եպիսկոպոսական ժողովի Յ նիստում, մարտի 7-ին, Համաձայնագիրը ստորագրում են բոլոր ներկա եպիսկոպոսները: Ապա նույն նիստին մասնակցելու հրավիրվում են Կիլիկյան եպիսկոպոսները՝ տեղապահ Տ. Խորեն սրբազնը, Խաղ արքեպիսկոպոսը, Տ. Դերենիկ, Տ. Ղևոնդ և Տ. Շավարշ եպիսկոպոսները:

Հատեսնի Եպիսկոպոսական ժողովի, Վեհափառ Հայրապետը, բացատրելուց հետո Համաձայնագրի հաշտարար ոգին և շինարար ուղղությունը, այն հանձնում է տեղապահ սրբազնին, հանձնարարելով միաժամանակ, որ Կիլիկյան եպիսկոպոսական դասը և միասին ուսումնասիրեն զայն և եթե հնարավոր է մինչև կեսօրե հետո ժամը 5-ին գրավոր պատասխան մը հաղորդեն ժողովին»:

Ժողովից հետո, նույն օրը, տեղապահ Տ. Խորեն և Տ. Ղևոնդ սրբազնները այցելում են Վեհափառ Հայրապետին՝ հաղորդելու համար, որ ի վիճակի չեն այսօր կեսօրից հետո ժամը 5-ին իրենց գրավոր պատասխանը տալ Եպիսկոպոսական ժողովի կողմից պատրաստված Համաձայնագրին և հարկ են համարում վերաբառնալ Անթիլիասի Խորհրդակցելու Խոկ Տ. Խաղ, Տ. Դերենիկ, Տ. Շավարշ սրբազնները ընդունում են Համաձայնագրի պայմանները և պատրաստակամբեցուն են հայտնում ստորագրելու:

Տեղապահ Տ. Խորեն սրբազննը նույն օրը մեկնում է Անթիլիաս, իր հետ տանելով Համաձայնագիրը, և մարտի 12-ին վերադառնալով Կահիրեր, այցելում Վեհափառ Հայրապետին՝ ներկայացնելով իր ստորագրությամբ, 10 մարտ թվակիր, Անթիլիասում պատրաստված մի գրություն, որով մերժվում էին Եպիսկոպոսական ժողովի ներկայացրած և Համաձայնագիրը և Ուկտագիրը: Այս Անթիլիասի պատասխանը Վեհափառ Հայրապետի և Եպիսկոպոսական ժողովի շինարար, հաշտարար պայմաններին:

Վեհափառ՝ Տեր,

Զերդ Վեհափառությունը Կահիրերի աղքալին առաջնորդարանի դահիճին մեջ, և ի ներկայության Ս. Էջմիածնի և Կիլիկյան Աթոռի միարան սրբազն Եպիսկոպոսներու,

7 մարտ 1956 շորեթշարի առավոտյան ժամը 11.30-ին մեզի հանձնեց «Համաձայնագիր» մը, հարակից երկու թուղթերով, ստորագրված Զերդ Վեհափառության նախագահ Հովհանն և միայն էջմիածնի միաբան եպիսկոպոսներու մասնակցությամբ գումարված ժողովի մը դիվանին կողմեւ:

Զերդ Վեհափառությունը թեև Հանձնարարեց մեղի Հաջորդ օր մինչև ժամը 5 գրավոր պատասխան մը տալ, սակայն նկատի ունենալով «Համաձայնագիր»-ին ծանրակշիռ բովանդակությունը, նույն օր, հետմիջօրեին, Հայտներ էինք Զերդ Ս. Օծության, թե պարտավոր էինք վերադառնալ Ս. Աթոռ, Անթիլիաս, Խորհրդակցելու համար Մեծի Տանն Կիլիկիո ընտրյալ կաթողիկոս ամենապատիվ Տ. Զարեհ սրբազն եպիսկոպոսի հետ, խոստանալով մինչև կիրակի, 11 մարտ, Զերդ Վեհափառության ներկայացնել մեր պատասխանը:

Արդ, Զերդ Վեհափառության մեջի հանձնած «Համաձայնագիր»-ը ամենալուրջ քննության ենթարկած ըլլալով, կուգանք Զերդ Ս. Օժության հայտնել թե՝

1) Եպիսկոպոսական վերոհիշյալ ճողովը կրոնական, պատմական և ավանդական որևէ իրավասություն չունի զրադելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության վերաբերյալ հարցերով:

2) Կհայտնենք նույնպես, որ 20 փետրվար 1956-ին, մեր նախագահության տակ կայացած Կիլիկան թեմերու պատգամավորական ժողովը, Հայաստանյաց Եկեղեցվու և Ս. Աթոռիս ավանդությանց վրա հիմնված, սահմանադրական ոգիով կազմված և կիրարկությամբ նվիրականացած կանոնադրության համաձայն, օրինականորեն և անթերի կերպով կատարեց Մեծի Տանն Կիլիկիոնոր գահակալին ընտրությունը: Թույլ տվեք նաև հիշեցներու Ձերդ Վեհափառության, որ Մեծի Տանն Կիլիկիոն կաթողիկոսները անցյալին մեց այ նույն հիմունքներով ընտրված են:

3) Պարտք կզանք Զերդ Ս. Օծության կարևորությամբ Հիշեցնելու, որ Կիլիկյան թեմերն ու Աթոռը կղեկավարվին Ազգային Սահմանադրությամբ և կանոնադրություններով, որոնք պետականորեն հաստատված և ընդունված են, և որոնց խախտումը ծանրակշիռ հետևանքներ կրնա ունենալ մեր ժողովարդի համար, և գործնականապես անկառիքի է:

ասզարմութիւնը է:

4) Այս առթիվ, Վեհափառ Տեր, կուգանքը
անգամ մը ևս հայտարարել, թէ Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի հետ գոյություն ունեցող Կի-
լիկյան մեր Աթոռին եղբայրական, սիրալիր
և սերտ հարաբերությունները պիտի պահ-
պին ըստ առաջնորդն, հավատարիմ մնալով

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցւո
միության ոգիին:

Վեհափառ Տեր, թուլլ տվիքը ավելցնելու,
որ Հայաստանյաց Եկեղեցվո Ս. Աթոռնե-
րուն ինքնիշխան գոյությունը Հայաստան-
յաց Առաքելական Ս. Եկեղեցվո տևականու-
թյան հիմքը Հկազմի հայ ժողովրդի անցյա-
լի և ներկայի ապրած պայմաններուն մէջ:

Արդ, ի պատասխան Զերդ Վեհափառության մեջ Հանձնած «Համաձայնագիր»-ին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հիմնական սկզբունքները պարզող սույն գրությունը մատուցանելով Զերդ Ս. Օժության,

Մնամք որդիական ամենախորին

Հարգանոք և ի համբույր Զերդ

ԵՀԱՎԻԱՌՈՒԹՅԱՆ U. ԱԶՈՒՅԻ,

Խոնարհ աղոթակից՝

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ:

Անթիլիասի պատասխանը ըստ էության վերջնագիր է և ինքնարդարացման անճարակի փորձ է, առ ի շոյք որևէ կանոնական, պատմական բանական արդարացման և դիտումնավոր կերպով խուսափում է հարցին ըստ էության պատասխանելուց, աշխատում է շրջանցել հիմնական, սկզբունքային հարցերը, խախտել փորձելով իրապես ողնդհանուր կառուցը Հայաստանյաց Եկեղեցվոյ («Հայակ», 1959 թ. հունիս, էջ 226):

Անթիլիասի մարդիկը Համաձայնագրի և
Ուստագրի մեջ աշխատել են գտնել «Էջ-
միածնա դարավոր երազը՝ ջնջված տեսնելու»
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը»,
կամ առ առավելն նրան տեսնել «նվազ ինք-
նիշխան քան Երուսաղեմի և Կոստանդնու-
պլուս Պատրիարքությունները» («Հասկա»,
1959 թ. մայիս, էջ 177):

Սայր Աթոռ Ս. էջմիածնի պարավոր երազը եղել է, կրկնենք մի անդամ ևս, Կիլիկի-յան Աթոռը տեսնել իր հսկական ղերի մեջ իր իրավունքների սահմանների մեջ, իր հոգեոր հայրենասիրական կոչման բարձունքի վրա, որպես Հայ Եկեղեցու նվիրապետական մասնավոր Աթոռ և անբաժանելի մասնիկը Եվ Հետաքրքիր է իմանալ, թե Աշմիածնի ինչո՞ւ պիտի ցանկար Կիլիկյան Աթոռի ջնջումը Երանի՝ թե Անթիլիասի ուղեկիրույնները նվազագույն չափով իսկ ապրումը ունենային «Ս. էջմիածնի ղարավոր երազին»:

«Հասկ»-ը իր 1959 թվականի հունիսի համարում երկարորեն կանգ է առնում Համաձայնագրի և Ուժտագրի վրա, անելու համար բոլորովին յուրահատուկ, բռնազբուհիկ մեկնաբանություններ, խիստաբան առարրական տրամաբանության հետքերն անդառ շունեցող», «որոնք ոչ թե ինդիքի մը կլուսա-

բանեն, այլ տեղի կուտան նոր ու անվերջ ոչ շինարար վեճերու, պարզ խնդիրներ ըստ ինքան կոտանան արվեստական բարդություններ և կդառնան ի վերջո սովհետություններ», — գրում է Գարեգին պատրիարքը:

Նպատակ շունենք այժմ «Հասկ»-ի կողմից գիտակցարար և անքարեխնդորեն կատարված պատմական դեպքերի խեղաթյուրումները մատնաշելու ամբողջությամբ, կարիք էլ չկա. «Եկեղու շար՝ զարդ անիրաւություններ»:

Եպիսկոպոսական ժողովի համաձայնագրի ոգին շինարար էր և դրական, պարզ և անկեղծ իր «տառով և ոճով», հարազատ Հայ Եկեղեցու պատմության և ոգուն:

«Հայաստանյաց Եկեղեցվու եպիսկոպոսական դասը, գիտավորությամբ Ամենայն Հայոց շնորհազարդ Կաթողիկոսին, Կահիրենի մէջ գումարված գրեթե լիակատար ժողովով մը, շանաց դարմանել կացության դառնությունը, ամենալուրջ ու սրտցավ խորհրդակցություններով, առաջնորդված միայն Եկեղեցվա անքածանելի միուրյան սրբազն գաղափարեն և անզանցառելի պահանջնեն, եվ այսպես պատրաստեց «Համաձայնագիր» մը, և Վեհափառ նախագահին ձեռքով հանձնեց զայն Անթիլիասի Աթոռի տեղապահ գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանին:

Մեծ եղավ մեր զարմանքը, երբ լսեցինք, թե պատասխանը եղած է ժխտական և ոչ ակնկալելի ոճով,

... եվ կրկնենք, Կահիրենի Եպիսկոպոսական ժողովը կրածներ ամբողջովին նորին Սրբության այս պայծառ տեսությունը և արդարանալի մտահոգությունը: Տ. Զարեհ սրբազնի օրնորությունը, այո՛, այս տեսությամբ և նկատումներով, գտած էր, գտած էինք և մենք եպիսկոպոսներու, «քերի և անընդունելի» (Գարեգին պատրիարք, «Եջմիածին», 1956 թ. հունիս, էջ 19—20):

Համաձայնագիրը առաջին հերթին մի երավեր էր՝ զարմանելու եղած հակաօրինավորությունը, թերին լրացնելու, «օրինավորության և նվիրագործման բոլոր անհրաժեշտ պայմաններով», հանուն Եկեղեցական միության:

«Դարձլաւ, և միանգամ ընդմիշտ, հարկ պիտի ըլլա խստորեն շեշտել, թե մի և անքածանելի է Հայաստանյաց Եկեղեցին. իր Մայր Աթոռով՝ որ ի Ս. Եջմիածին: Եվ տակավին ոժվա՞ր պիտի ըլլա ընդունի բացարձակությունն այս անհեղի ճշմարտության և անուրանալի իրողության, թե բոլոր մյուս Աթոռները, ըլլա Անթիլիասի Հայրապետությունը, ըլլա Երուսաղեմի և Թուրքիո-

հայոց Պատրիարքությունները և բոլոր առաջնորդությունները ենքական ման Մայր Աթոռին՝ ի նոգարու: Ի՞նչ բան կա անհասկնալի այս ճշմարտության և ասկե բիսած պահանջներուն մեջ: Արժանապատվության վիրավորա՞նք՝ ըստ աշխարհի...:

Եպիսկոպոսական «Համաձայնագիր»-ին մեջ պարզաբանված են այս բոլորը: Ով աչք ունի՝ կտեսնե՞ և դատողական ողջմտություն՝ կհասկնա: Մարեր ծորեր թափառելու պետք չկա լույս փնտուելու համար: Ան ինքն իր մեջ ունի լույսը, անով լուսարանելու համար նաև մուալլուտած և մշուշապատ մտքեր:

Այս համաձայնագրին մեջ շեշտված է Անթիլիասի— որով և բոլոր Աթոռներուն— անկախությունը վարչական գործերու և գործառնությանց մեջ: Բայց կերեկի որոշ կերպով, թե Զարեհ սրբազն և համախոններ չեն բավականանար ասովի, Անոնք կուզեն շափկիլ Մայր Աթոռի բարձրության և տարողության հետ, և ըլլալ ոչ միայն «անկախ», այլ նաև... «անզատ»: Ունինք հրապարակային տիսուր վկացություն ասոր» (Գարեգին պատրիարք, «Եջմիածին», 1956 թ. օգոստ.-սեպտ., էջ 26—27):

Անթիլիասի կողմից տրված պատասխանի մեջ, արդարեւ, «ամենեն ավելի անըմբռնելի կետը այն ատարկությունն էր, թե Եպիսկոպոսական ժողովը իրավունք չուներ զրադելու Անթիլիասի Աթոռին վերաբերյալ իշնդիրներով», ինչպես արդեն սրտմտությամբ նշել է Գարեգին պատրիարքը, մինչ նույն Աթոռի երեք եպիսկոպոսներ, ոտնահարելով օրենք և ավանդություն և խաղալիք դարձած մի խոսք աշխարհականների ձեռքում, լժվել են Հայաստանյաց Եկեղեցու դարավոր կառուցը քակտելու:

Մյուս կողմից Անթիլիասի պատասխանը դիտունավոր կերպով «լոռությամբ կանցնի Համաձայնագրի այն պայմանին վրայեն, որով բոլոր հայ Եկեղեցիներուն մեջ, Ամենայն Հայոց Հայրապետի անունն անմիշապես ետք, պիտի հիշատակիլիր հաւ անունը Անթիլիասի Հայրապետին: Այս ալ նվաստացում էր այդ Աթոռին, թե բարձրացում: Եվ եպիրեկի մանավանդ այն դիտավորյալ խեղաթյուրումները, որոնցմով այդ Համաձայնագրին պարզ և անկեղծ ոգին ներկայացվեցավ Հանրության» (Գարեգին պատրիարք, «Եջմանակ», 1956 թ. օգոստոս 11):

Վեհափառ Հայրապետը, մեկ եպիսկոպոսի կողմից ստորագրված Անթիլիասի այս պատասխանը (որովհետև Կիլիկյան Աթոռի մյուս եպիսկոպոսները՝ Տ. Խարդ, Տ. Փառեն, Տ. Երենիկ և Տ. Շավարշ սրբազնները, անհամաձայն լինելով տրված պատասխանի բովանդակության, ոգու և ոճի հետ, չեին

ստորագրել) կարդալուց հետո, ցավ է հայտնում Հայաստանյայց Եկեղեցու միասնականության ողին սկզբունքով իսկ մերժել փորձող Անթիլիասի այս ժխտական դիրքի մասին, բայց այնուամենայնիվ միշտ լավատես և հաշտարար հայրական տոնով ավելացնում է. «Մենք այս ձեր պատասխանը վերջնական չենք նկատեր և կնորդունք ձեզ և ձերիններուն հայրաբար, որպեսզի անդրադառնաք ձեր վերաբերմունքին վրա և գերագույն ենք մը լենք համաձայնության եզր մը գտնելու կողմերու միջև, նպիսկովոսական ժողովի որոշումներուն ենման վրա: Եթե որոշ տեղեր կկարծենք, որ շատ իխտ են այս պայմանները, դուք ալ ձեր առաջարկերը բերեք, որպեսզի միջին ելք մը գտնվի և համաձայնության եզր մը» («Ուղևորություն», էջ 153, 210—211):

«Հասկ»-ը իր հունիսի համարում փորձում է պատասխանել Համաձայնագրի 7 կետերին, և փոխանակ հարցին մոտենալու սկզբունքային, կանոնական և պատմական տեսակետից, կանգ է առնում հիմնական հարցի հետ այնքան էլ կապ չունեցող մանրությունների վրա, Անթիլիասի տագնապի ողջ պատասխանատվությունը իրենցից վանելու միամիտ ցանկությամբ:

Անթիլիասի տագնապը անշշան շափով իսկ կապ չունի ո՛չ Ս. էջմիածնի, ո՛չ Վեհափառ Հայրապետի անձի և գործունեության և ո՛չ արտասահման ուղևորության հետ:

Անթիլիասի տագնապի արմատները խորանում են մինչև 1920-ական թվականները: Անթիլիասի տագնապը ի վաղուց անտի ծրագրված, նախապատրաստված գործ է, որը գործադրության դրվեց 1956 թվականի փետրվարի 14-ից ի վեր:

Հենված արտաքին մութ ուժերի վրա, Անթիլիասը վառում է հաշտության բոլոր կամուրջները, «իսութի անգամ նատիր» շցանկանալով Եպիսկոպոսական ժողովի առաջարկությունների հետ: «Այսպիսով,— եղակացնում է Անթիլիասի մետասաներորդ ժամու պաշտպաններից մեկը՝ Բյուզանդ Եղիայանը, «կատարված եղավ առաջին մեծ խզումը, ընդուղ էջմիածնի և Անթիլիասի», և «Վաղգեն Կաթողիկոս, հայտարարել հետո, թե ինդիրը կրնա խորհրդակցության առիթ ծառայել և կրնա հարթվիլ բանակցությանց ճամբուլ, Ֆրանսա մեկնեցավ» («Հասկ», 1959 թ. օգոստ.-սեպտ., էջ 318):

Արդարեւ, Հայ Եկեղեցու միասնականության ողին սկզբունքով իսկ ժխտել փորձող Անթիլիասի դիրքը շատ հատկանշական է արժանի խոր ուշադրության:

1956 թվականից ի վեր Անթիլիասը իր ճակատագրի տերը չէր այլևս: Տ. Զարեհ, Տ. Խորեն և Տ. Ղևոնդ սրբազնները, կոր-

ցըրած մինչև անգամ հայ հոգևորականի մինիմում բարոյական պատասխանատվության զգացմունքը, դիտակցաբար գործիք են դարձել ուրիշների ձեռքում:

Անթիլիասը ինչո՞ւ մերժեց Համաձայնագրը և սրտցավ բոլոր հորդորները, կոշերը: Դա ունի իր պատճառները: Եվ քանի որ Անթիլիասի մարտ 10 թվակիր՝ պատմական նամակով խզումը, Եկեղեցական պառակտումը փաստ է այլևս, հարկավոր է մի քիչ ավելի խորանակ այն շարժառիթների ուսումնասիրության և բացահայտման մեջ, որոնց անխուսափելի և ազգավնաս հետևանքը եղավ Անթիլիասի այսօրվա ողբերգությունը:

Մոտ 40 տարի է ահա բաղաբական որոշ մարդիկ աշխատում են Սփյուռքում ստեղծել մի տեսակ «անհայրենիք պետություն», պիտի գործելով Սփյուռքի էջմիածնական թեմերը, ստեղծել գործելով «արտասահմանյան Կաթողիկոսություն»:

Ժամանակին, ինչպես սովետահայ ժամուլը, այնպես էլ Սփյուռքի ողջամիտ և Հայրենասեր հասարակայնությունը մերկացրել են ըստ արժանավույն այդ հայրենադավ արկածախնդրությունը:

Անցնող ժամանակը, սակայն, մինչև 1956 թվականը, ձեռնուու չէր այդ դիվային ծրագրի իրագործման համար: Այդ օրերին Սփյուռքը, մեկ մարդու նման, ոտքի կանգնեց դատապարտելով այդ հիմարությունը: Անթիլիասում հոգինուկս Տ. Սահակ, Տ. Թարգեն և Տ. Գարեգին կաթողիկոսների և Երուսաղեմում Տ. Թորգոմ պատրիարքի օրերին կարելի չէր նույնիսկ մտածել Անթիլիասը և Երուսաղեմը այդ ծրագրին դավակից դարձելու կարելիության մասին: Հետագայում փոխվեց այդ շրջանակների տակտիկան, այն է՝ քանի ժամանակը, պարագաները, ժողովրդի հոգեբանությունը «չեն հասունացած» նման քայլի հաջողության և գործադրության համար, որեմն մնում է պառակտի գործողություններով քակտել Հայոց Եկեղեցու միասնականությունը նախ, հերձված ստեղծել Սփյուռքի կյանքում և Եկեղեցիների մեջ ի դեմս Անթիլիասի, այդ հերձվածի միջոցով ապա հետապնդել բուն նպատակը:

1930 թվականին, Գևորգ Ե-ի մահից հետո, հակահայաստանյան մամուլում ուժեղացավ պայքարը Կաթողիկոսական Աթոռը արտասահման փոխադրելու առաջարկությամբ: Զեյքի տակ ունենք այնպիսի փաստեր, որոնք վկայում են, որ 1930-ական թվականներին, հատկապես Փարիզում, գաղտնի խորհրդակցություններ էին տարվում ստեղծելու Սփյուռքահայ հմիասնական ճակատ

հանում էջմիածնի Մայր Աթոռի փրկության և ազատագրության։

Այս անգամ ևս դավը մատնվեց ձախողանքի, խեղդվեց իր բուլնի մեջ՝ Սփյուռքի հայրենասեր հոգևորականության, հայրենասեր մամուլի և հայ ժողովրդի բուռն դիմադրության շնորհիվ։

Սփյուռքը Ս. էջմիածնի հետ էր, որքան ժամանակ Զարեհներ և Խորեններ չկային ոչ հայ հոգևորականության մեջ և ոչ էլ Անթիլիասում։ Հայ հավատացյալ ժողովրդի համար Ս. էջմիածնը ոչ միայն ազգային-եկեղեցական միասնականության խորհրդանշանն է, այլ նաև պատմական իրական սըրբություն։

Սփյուռքի ողջ հայությունը, բացի մի խումբ ուղեկորպւսներից, երրեք մի դադարել բարոյապես և նյութապես պաշտպան կանգնելուց Մայր Աթոռ Ս. էջմիածնի իրավունքների և գերազանցության։

Ինչո՞ւ և ինչպես, սակայն, առերևույթս և ժամանակավորապես հաջողվեց մասամբ այդ դիվային ծրագիրը 1956 թվականին։ Դրա պատճառները ծանոթ են բոլորին։ Այս մասին պերճախոս վկայություն է 1959 թվականին Անթիլիասի Կողմից անդերեն յեզրով 211 էջ ծավալով հրատարակված «Հայ եկեղեցու տագնապը» զրաքարտչական բնութի գրքով։ Ուր խոսվում է Անթիլիասը գրավելոց հետո էջմիածնի թեմերը հափշտակելու, Սփյուռքում «Կաթողիկոսություն» հիմնելու և ամեն տեղ կուակացական մենատիրություն հաստատելու մասին։ Այդ գրքի մասին հանգամանորեն կխոսվի սույն աշխատության մեջ, իր տեղում։

Ուեմեն պատմության համար մի անգամ ևս արձանագրենք այն, որ 1956 թվականից նետո Անթիլիասը դուրս է եկել եկեղեցական կենտրոնի իր հանգամանքից, կորցրել իր ազգային-կրոնական սրբավայր լինելու հանգամանքն ու հմայքը և, ցավ ի սիրոտ, դարձել քաղաքական կրկես։

Տեղին էր ուրեմն և Մայր Աթոռի, Վեհափառ Հայրապետի, Սփյուռքի բովանդակ հայության վրդովմունքը, արդար զայրությը և արժանի դատապարտությունը Անթիլիասի այսօրվա ուղեկորույսների։

Ճիշտ է, այսօր Սփյուռքում ունենք լուրջ տագնապ, եկեղեցական քողի տակ, Բայց արձանագրենք նաև այն, որ մի քանի եկեղեցիների հափշտակումը, էջմիածնասեր և հայրենասեր հոգևորականության, կազմակերպությունների, հարգելի անձնավորությանց մասին տրված ստահող տեղեկագրերը երրեք և երրեք շեն նշանակում լացացնել Ս. էջմիածնը։ Բոնագրավել չի նշանա-

կում տիրել, օրենք և իրավունք ունակոխիւն սրբություններ վանառել չի նշանակում ունեղաղող լինել։ Անթիլիասի հափշտակումները զորկ են բարոյական և իրավական որևէ արժեքից և որ գիւղավորն է՝ շեն բխում հայ հավատացյալ ժողովրդի հոգուց, նրա ազգային-եկեղեցական զգացմունքներից։ Թեմերի հափշտակումը լավ բան չի խոստանում նույնինքն Անթիլիասին։ Թեմերի բռնագրավումը մնայուն գործոն չէ երրեք ու երրեք մնայուն չէ այն ուժը, որին նա հենվում է։ Պատահական չէր ուրեմն, որ ողջ Սփյուռքը, իր եկեղեցական դասով, հավատարիմ գրտերվեց Մայր Աթոռին և Հայրենիքին։

1956 թվականից հետո Անթիլիասը շարիք դարձավ։

Արևմտահայ Ազգային Սահմանադրության մասնագետ Հարություն Շահրիկյանը, դեռևս 1914 թվականին, Կոստանդնովպոլսում տրպված իր «Ազգային Սահմանադրությունը» աշխատության մեջ, խորհրդածելով էջմիածնի և Կիլիկյան Աթոռի մասին, գրում էր հետեւյալը։

«Հայրենիքեն դուրս հաստատված ազգային կեղրոնական հիմնարկությունը բնականաբար պիտի ըլլա Հայրենիքի համար խորթ, անօգուտ և մինչև իսկ վնասակար» (էջ 26)։

«Սահմանադրության մեջ բացի էջմիածնեւ Կիլիկիո և Աղթամարի Կաթողիկոսությունները շեն հիշված։ Ինչո՞ւ համար։

Մոռացության արդյունք է։ Երրեք։

Որովհետև աղոնք ավելորդ հիմնարկություններ էին։ Աղոնք եկեղեցիի հաստատություններ չեն, այլ նույնիսկ եկեղեցիին հակառակ, հոգևորականության աթոռախնդիր սաղրանք... իշխանախնդիր հոգեվորականությունը կամ հետամտեր է կաթողիկոսական ժամանակավոր բնակավայրին մեջ նոր հակաթոռ հիմնելու կամ Կաթողիկոսությունը իրարմե հափշտակելով ինքնագումար գահակալ հոչակելու (էջ 55)։

Այս հակաթոռները կվնասեին ազգային միության և կստեղծեին վարչական շփությունները (էջ 56)։

Պատմական անհերքելի փաստերի և սկզբունքների լույսի տակ, որքան տղայամիտ է թվում, շասելու համար ծիծաղելի, «Հասկա-ի» (1959 թ. գեկտեմբեր, էջ 469), այն «Փաստարկա-ը, ըստ որի 1860 թվականի Ազգային Սահմանադրության մեջ Կիլիկյան Կաթողիկոսական Աթոռի հիշատակելը համարվում է... աշապացուց Կիլիկիո նվիրապետական Աթոռի բացարձակ անկախության»։

Մինչեւ պատմական իրողությունն այն է, որ 1860 թվականի Ազգային Սահմանադրությունը ոչ միայն չի խսում Կիլիկյան Աթոռի անկախության կամ ներքին ինքնավարության մասին, այլ նույնիսկ չի նշում Կիլիկյան Աթոռի գոյության իրավունքը: Որով այդ ժամանակաշրջանում պետական (Օսմանյան) օրենքի, ինչպես նաև մանավանդ Ազգային Սահմանադրության առաջ չի ճանաչվում Կիլիկյան Աթոռի ոչ միայն անկախությունը, այլ նույնիսկ գոյությունը:

Ահա թե «Հասկ»-ը ինչքան կարողանում է հասկանալ և մեկնել պատմական իրողությունները:

Այնուամենայնիվ, ինչպես փաստերն են ապացուցում, Մայր Աթոռը և Վեհափառ Հայրապետը չեն, որ մտածել են «զնշել» կամ «նեմացնել» Կիլիկյան Աթոռը, ո՛չ անցյալում և ո՛չ էլ այժմ:

Մայր Աթոռը և Վեհափառ Հայրապետը երբեք այսքան արմատական կերպով չեն մտածել այդ մասին: Ընդհակառակը, ինչպես ցույց տրվեց վերևում՝ անհերքելի փաստերով, Մայր Աթոռը և Վեհափառ Հայրապետը աշխատում են բարձրացնել Անթիվասի Կաթողիկոսական Աթոռի հմալքն ու հեղինակությունը այն առողջ մտածումով, որ որքան զորավոր լինեն Հայ եկեղեցու նվիրապետական կազմի մեջ մտնող մասնակոր Աթոռները, նույնքան զորավոր կինի ամբողջը, Հայ եկեղեցու ողջ նվիրապետական կազմը:

Մայր Աթոռը դեմ չէ երեք Անթիվասի Կաթողիկոսական Արքունիքն, պայմանով, սակայն, որ նա հակաթոռի հովեր չառնի, պայմանով, որ նա չվտանգի Հայ եկեղեցու միասնությունը և հայ հավատացյալ ժողովրդի ներքին խաղաղությունը Միջուրքում: Մայր Աթոռը գեմ է միայն Անթիվասի այժմյան հակականոնական արարքներին և ունձգություններին, երբ, հակառակ պատմականորեն ընդունված կանոնական որոշումներին և իրավասությանց սահմաններին, փորձ է կատարվում, լուսահոգի Թորգոմ պատրիարքի պատկերավոր բացատրությամբ, «Ընդհանրական Հայրապետության թեմական քարտեզին վրա զեղչումներ կամ իրավասությանց մեջ փոփոխություններ կատարելու» («Անհարկի փութկոտություն», ԱՄինս, 1937 թ. հունիս):

1956 թվականի մայիսի 19-ին, երեք ու կես ամսվա բացակայությունից հետո, Մայր Աթոռ էր վերադառնում Վեհափառ Հայրապետը, Սփյուռքում կատարած իր հովվագետական ուղևորությունից, արտասահմանի հայության դեպի Ս. էջմիածինը և Հայրենի հողը ունեցած որդիական խորունկ սիրո և

հավատարմության զգացմունքների վառ և անմոռանալի տպավորություններով: Վեհափառ Հայրապետը վերադառնում էր Ս. էջմիածին «ավելի խանդավառ և ավելի լավատես» («Ուղևորություն», էջ 321):

Նորին Ս. Օծությունը ապրիլի 29-ին, նախքան Մայր Աթոռ մեկնելը, Փարիզի արվարձաններից Առուուլիլ-Լե-Կոնսի Վարագա Ս. Խաչ եկեղեցում, հրաժեշտի քարոզում, հանրագումարի բերելով իր արտասահմանյան ուղևորության դրական և ազգաշեն արդյունքները և ստացած տպավորությունները, իր քարոզի մեջ ասում էր. «Մենք ճշմարտապես փորձեցինք աշխատիլ, քարոզել, հորդորել, ծրագրել կազմել ի շինություն մեր Ս. Եկեղեցպատում Ուղևորությունը մեր Ս. Եղիշիանը պատմում է ամենը առաջարկելու մեջ առաջարկելու...»

Այդ արդյունքներն առաջինը և ամենեն մարմորը, Մեզ համար գոնե այն եղավ, որ մեր արտասահմանի ամբողջ հայ հավատացյալ ծողվալուդը հոգեկան ուժքին ցնցում մրունցավ:

... Մենք խորապես միիրարված ենք՝ հաստատելով, թե բոլորին նոգիներուն մեջ ավելի ևս բոնկեցավ սեր, հավատարմությունը, նվիրումի զգացումը դեպի Մայր Աթոռը Ս. Էջմիածինը, որ կեդրոնն է մեր սուրբ հավատին:

... Մեր գործը ուղիղ եղավ և իրոք շինարարու:

Այնուամենայնիվ անդրադառնալով նաև Անթիվասի տագնապին, Վեհափառ Հայրապետը խորունկ վշտով արձանագրում էր նաև, որ «մեր մեջ կատնվին ոմանք, որոնք կուզեն նսեմացնել Ս. էջմիածնի դերը, կամ կսակարեն իրենց հավատարմությունը Ս. էջմիածնի հանդեպ..., մինչ մեր ուժը ներքին խաղաղության և համերաշխության մեջ է, մեր ուժը գործակցության մեջ է, մեր ուժը Միածնի իշման սուրբ խորհուրդին մեջ է: Մայր Աթոռը Ս. էջմիածնին հավատարմություն ցուցաբերելով, Անթիվասի Աթոռը ոչ միայն չի տկարանար, ոչ միայն շանշքանար, ոչ միայն ոչինչ կկորսնցնե իր հեղինակութենեն, այլ ընդհակառակը, ավելի հեղինակավոր և ավելի անկախ կդառնա:

Կառուվի երբեմն Անթիվասի Աթոռի անկախության մասին: Եթե պիտի խոսինք անկախության մը մասին, այդ անկախությունը առավելագույն շափով կապահովվի միայն և միայն պահպանելով մեր Եկեղեցվո անբաժանելիության սկզբունքը, իր գլուխ ունենալով Մայր Աթոռը Ս. էջմիածինը:

Կատար ենք, թե տակավին ուշ չէ ուղիղ և արդար ճանապարհ մը գտնելու՝ Կիլիկիո

Աթոռին մեջ ստեղծված տանգնապը դարձանելու և խաղաղություն ստեղծելու համար։ Վստահ ենք, թե ճանապարհը միշտ բաց է խոսքի նստելու, եթե մը փնտուելու համար, որպեսզի այս պառակտյալ վիճակը վերջ գտնե, փոխանակ ավելի խորանալու։

Մենք Մեր այս խոսքը, Մեր այս կոչը լսելի ըրինք անոնց շատոնց ի վեր, սակայն ոչ մեկ լուրջ պատասխան ստացանք մինչև այժմ, ոչ մեկ պաշտոնական պատասխան ստացանք ցարդ։ Ընդհակառակը, դժբախտաբար երևությունը կան, որոնք կուգան հաստատելու, որ կարծեք ծրագրված կերպով պառակտումը կուզեն փոխադրելու մեջ, ուստի ուրիշ գաղութներու մեջ, ոտնագույթուններ ընելով էջմիածնապատկան թեմերու մեջ։ Ապագան ցույց պիտի տա, սակայն Մենք էջմակվընն արդեն որոշ, շոշափելի փաստեր ունինք այս ուղղությամբ։

Այսպիսի ընթացք մը շարունակել՝ Մենք կխորհինք, թե խոնեմություն չէ, եկեղեցամիրություն չէ, և ոչ ալ ազգասիրություն։ Անթիւհասի Աթոռը բաժնել էջմիածնեն և ծառայեցնել ուրիշ նպատակներու, ուղղակի մահափոք մըն է ուղղված մեր սուրբ հավատքին դեմ և հայ ժողովուրդի խղճին դեմ։ Մեր ժողովուրդը շուզեր բաժնվել Ս. էջմիածնեն և պիտի լրաժնվի։ Այս կետին վրա մենք կանգնած ենք և պիտի շշարժիք, Մենք պիտի պաշտպանենք Հայաստանյաց եկեղեցվո անկախությունը բոլոր ազգեցություններոն՝ ուր որ ալ ըլլան, ուրկե որ ալ գան անոնք— ըլլա Հայրենիքեն ներս, ըլլա Հայրենիքեն դոլու։

Մեր եկեղեցին սուրբ հաստատություն մըն է մոտ երկու հազար տարվա պատմությամբ, ավանդություններով, սրբություններով, և Մենք չենք կրնար շարժիլ այս կամ այն հոգերեն։ Աշխարհական այլամալ կազմակերպությունները— կարևոր անոնները չեն— այսօր մեկ բան կըսեն, վաղը ուրիշ բան և մյուս օրն ալ ճիշտ հակառակ կրնան ըսել։ Մենք չենք կրնար առաջնորդիլ այսպիսի անցողական ընույթ ունեցող կազմակերպությանց թելապրություններով։ Հայաստանյաց եկեղեցին իր ամբողջության մեջ պետք է մնա մեկ և անբաժանելի, և իր կյանքը շարունակե անկախ ամեն տեսակի կողմնակի անհարազատ ազգեցություններե։

Այս սկզբունքն է, որ Մենք և մեր բոլոր եպիսկոպոսները պաշտպանեցինք և պիտի պաշտպանենք Վստահ ենք, որ բոլորը մոտ պապայի մեջ պիտի անդրադառնան և պիտի թողուն, որ եկեղեցին իր ներքին խաղաղությունը գտնե, անոր մարմինը իր բոլոր

անդամներով, և սիրո միությունը ի Քրիստոս։ Եվ Մենք Մեր ծրագիրները, Մեր շինարար զուտ հոգայու ծրագիրները պիտի կարողանանք գործադրության մեջ զնել բոլորի աշխատակցությամբ, բոլոր Աթոռուներու գործակցությամբ» («Ուղևորություն», էջ 291)։

Անթիւհասի ողբերգության տիտուր դերակատարները, քար դրա կարենց խղճի վրա, լսեցին Վեհափառ Հայրապետի նաև այս կոչը։ Արտարև, առակավին ուշ չէ ուղիղ և արդար ճանապարհ մը գտնելու Կիլիկիու Աթոռին մեջ ստեղծված տագնապը դարձանելու և խաղաղություն ստեղծելու համար։

Մայր Աթոռ վերադառնալուց հետո էլ Վեհափառ Հայրապետը, թեև շահազանց կլանված Մայր Աթոռի և ներքին թեմերի հետ կապված կազմակերպչական աշխատանքներով և վանական-եկեղեցական գերանորոգման ու շինարարական հարցերով, այնուամենայնիվ, որպես Հայ եկեղեցու Գերագույն Պետ, շարունակում էր մտահոգությամբ հետևել Անթիւհասի տագնապի առիթով ստեղծված կացության և դրանից բխող իրադարձությունների ընթացքին։ Անթիւհասում ներքին համերաշխությունը դանդաղում էր և նույնիսկ նորանոր բարդություններ սպառնում էին խորացնելու երկիրեղկումն ու պառակտումը եկեղեցու և ժողովրդի ծոցում։

Վեհափառ Հայրապետը խորապես մտահոգված էր Անթիւհասի մեջ ստեղծված վտանգավոր կացությամբ և ընդառաջելով Տ. Զարեհ սրբազնի անձնական խնդրանքներին, կատարված Տ. Եղիշե սրբազնի միջոցով, առաջնը Փարիզ ապրիլ 6 թվակիր նամակով և երկրորդ՝ էջմիածին, հունիս 4 և 6 թվակիր նամակներով և զերմապես փափակելով որ կարելի փութով համաձայնություն գոյանա երկու կողմերի միջև և խաղաղությունը վերահստատվի Կիլիկյան ալեկոծ Աթոռում և Մայր Աթոռ Ս. էջմիածին և մեր նվիրապետական մյուա Աթոռուների միջև ամրապնդվեն քրիստոնեական սերն ու միությունը և շշատ հավանաբար հաշտությունը ազգոր արարքով մը պատկելու մտադրությամբ» («Հայակ», 1959 թ. օգոստ-սեպտ., էջ 319), հունիսի 9 թվակիր հեռագրով, ուղղված կաթողիկոսական տեղապահ Տ. Խորեն եպիսկոպոսին, Վեհափառ Հայրապետը Ս. էջմիածին էր հրավիրում երկու ընդիմապիր կողմերն ու Կիլիկյան բոլոր եպիսկոպոսները։

«Դոհունակությամբ ստացանք Եղիշե արքապիսկոպոսի հեռագիրը Զարեհ սրբազնի խնդրանքով։ Որպեսզի համաձայնությունը իր լրումին հասնի, Ս. էջմիածին կհրավիրենք Աթոռիդ, եպիսկոպոսները և

կողմերու աշխարհական ներկայացուցիչները առանց խտրության: Ցանկալի կդանենք օծումը կատարել էշմիածնի Տաճարին մեջ համազգային ընդհանուր համերաշխությամբ, և ուրախությամբ, առանց որ այդ պարտադիր նախընթաց մը հանդիսանա ապագայի համար:

Կոչ կընենք բոլորի, Ս. Աթոռիդ միաբանության և ժողովուրդին, սիրո և միության ոգով առաջնորդվիլ ի շահ Ս. Եկեղեցվուլս և Ազգի Հայոց. («Էշմիածին», 1956 թ. հունիս, էջ 8—9):

Այս հեռագրի բովանդակության մասին ի դիտություն տեղեկացվեց նաև Կոստանդնուպոլիսի ամենապատիվ Պատրիարք Հոր, Երուսաղմամբ Պատրիարքական տեղապահին, Հայրավային Ամերիկայի Հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սերովիք եպիսկոպոսին, Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սամբրի արքեպիսկոպոս Գալֆայանին և եգիպտոսի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սամբրի արքեպիսկոպոս Սիրուայնին:

Վեհափառ Հայրապետի այս հաշտարար վերաբերմունքը և Անթիլիասի տագնապի լուծման համար առաջարկած այս իմաստուն կերպը բոլորի կողմից ընդունվեց մեծ գոհունակությամբ և երախտագիտությամբ: Գարեգին Պատրիարքը, թարգմանը հանդիսանալով հասարակաց գոհունակության, զգացմունքի և լավատեսության, հունիսի 13-ին հեռագրում էր Վեհափառ Հայրապետին.

«Մայր Աթոռի հեռագիրը Անթիլիասի խնդրի վերաբերմամբ մեծ գոհունակություն և ուրախություն պատճառեց ամենուս: Լուծման իմաստուն կերպ եք առաջարկած: Հուսով ենք, թե Հայպիրյաներն ալ իմաստություն կունենան ընդունելու պատվաբեր հրավերը: Եթե համաձայնություն գոյանա և Աստված կամենա, ես ևս կփափագիմ ուխտի գալ Ս. Էշմիածին» («Էշմիածին», 1956 թ. հունիս, էջ 9):

Այնպես էր թվում, որ շուտով Մայր Աթոռի այս իմաստուն առաջարկությամբ կվերահստատվեն ցանկալի խաղաղությունը, գործակցությունը և համերաշխության ավանդական ոգին՝ նվիրապետական Աթոռների միջև:

Դժգոհ էին միայն Անթիլիասի տագնապի տիւուր դերակատարները:

Հակառակ Մայր Աթոռի և Վեհափառ Հայրապետի բարյացակամության և զիջողության, Կիլիկյան Աթոռի ընդդիմադիր երեք

եպիսկոպասները՝ Զարեհը, Խորենը և Ղեղվոնդը, որոնք զտնվում էին քաղաքական տևական ճնշման ներքեւ, մերժեցին նորից Ս. Էշմիածնից երկարած հաշտարար բարի ձեռքության մեջ:

Իր հունիս 16 թվակիր Հեռագիր-պատասխանով տեղապահ Խորեն եպիսկոպոսը տեղեկացնում էր Վեհափառ Հայրապետին.

«Մտացանք Վեհափառությանդ 9 հունիսի Հեռագիրը: Խորեն կցավինք, որ առաջարկություններն անընդունելի են: Օծումը տեղի պիտի ունենա Անթիլիասի Մայր Տաճարին մեջ: Ի նշան և ի պահպանություն Հայաստանյաց Ս. Եկեղեցվուլ միության, կինդրենք Հրահանգել Ձեր սրբազն եպիսկոպոսներուն՝ բերել իրենց մասնակցությունը օծումինա:

Հունիս 9 թվակիր Հեռագիրը, գրում է «Հասկ»-ում Անթիլիասի մոտ կանգնած մտավորականներից մեկը՝ Բ. Եղիայանը, «ոչ միայն անընդունելի էր, այլ անհանդուրժելի Զարեհ եպիսկոպոսի կողմնակիցներուն համար, որոնք անգամ մը ևս այս բարձերը մեծ ատիք մը նկատեցին նոր մեղադրանքներու և փոխվեծին: Խորեն եպիսկոպոս անգամ մը ևս մերժել ստիպված էշմիածնեն եկած երավերը» («Հասկ», 1959 թ. օգոստ.-սեպտ., էջ 319:— Ընդգծումը խմբագրությանն է):

Եթե Զարեհը, Խորեն և Ղեղվոնդ սրբազնները ի մտի ունենային միայն Հայ Եկեղեցվուլ շահը, Անթիլիասի տագնապի մեջ պիտի որդեգրեին ավելի ինքնուրուց, իրապես իմաստուն և շինարար ուղղություն՝ պատմային ազդեցություններից, ի նպաստ տագնապի լուծման, քան թե բորբքեին հարցը, խանգարելով տագնապի խաղաղ լուծման բոլոր համարվորությունները:

Գարեգին Պատրիարքը շատ ճիշտ կերպով արտահայտել է այն միտքը, որ «խոնարհ և իմաստունորեն վճռական կեցվածք մը ընտելիին կողմե՛՝ պիտի խնայեր Աթոռին այդ ցավալի և ոչ պատվարեր երկությունները»:

Ահա թե ինչու երբեք փոքր չէ Հայ Եկեղեցու, Հայ Ժողովրդի և պատմության դատաստանի առաջ պատասխանատվությունը Զարեհի, Խորենի և Ղեղվոնդի: Տ. Խորեն եպիսկոպոսի բացասական այս պատասխանից Հետո էլ, սակայն, Վեհափառ Հայրապետը, միշտ լավատես և շինարար ոգով առաջնորդված, հունիս 22-ին մի երկրորդ հեռագիր ևս հեղեց տեղապահ Խորեն եպիսկոպոսին, ընդպատճերով Անթիլիասի Մայր Տաճարում կաթողիկոսական օծումը կատարելու նրա ցանկության:

«Ի սրտե ըղձալով, որ Տանն Կիլիկիո Աթոռը վերագտնե իր ներքին խաղաղու-

թիունը մեր Ս. Եկեղեցվո միության ոգիին մեջ, և որպեսզի կողմերը համաձայնության հանդին, Ս. Էջմիածինի հարավիրենք Աթոռիդ եպիսկոպոսները և կողմերու աշխարհական պատվիրակները առանց խտրության, օծումը հետագային կասարելով էջմիածին կամ Անթիլիաս: Կոչ կընենք Զեղ և բոլորին՝ շմերժել եղբայրական սիրո հրավերը, որ կուգա Հայաստանյաց Եկեղեցվո Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն:

Անթիլիասը այս անգամ նույնիսկ Վեհափառ Հայրապետի հունիսի 22 հեռագրին պատահանելու բարոյական քաջությունը շոնեցավ:

Անթիլիասին մնամ էր լմել և դավել:

Դավով սնված ուղեղները, կամ, Տ. Գարեգինի պատրիարքի դիպով բացասրությամբ՝ «զբրով շողացող մթաք ունեցող աշքերը», Վեհափառ Հայրապետի այդ հրավերի մեջ փորձել են տեսնել «որ դավ»: «Ողբալի մտայնություն, որուն պատասխանատվության ծանր բեռը կիյնա ամենեն առաջ Զարեհ սրբազնին վրա»:

Հստ «Հասկ»-ի վկայության (1959 թ. օգոստ.-սեպտ., էջ 301), այսուամենայնիվ Անթիլիասում «առաջին բանակցությանց ձախողութենեն հետո (հունիս 9-ի հոռագիր) կրկին շանք թափեցին, որպեսզի վերահսկ խզումը լկատարվի, Հայաստանյաց Եկեղեցին չփոթորկի...»:

1956 թվականի հունիսի 15-ից հետո, գրացարձակ գաղտնապահության մեջ, առաջ են տարվում համերաշխության աշխատանքները «Կիլիկյան եպիսկոպոսներու կողմեն ստորագրվելը համաձայնագրի մը հիման վրա» («Հասկ», էջ 301): Մինչ այդ հրապարակ են իշնում նաև մի շաք սրտացավ պազայիններ, ուղելի հանդարտ անկյուններու մեջ» («Հասկ», 1959 թ. օգոստ.-սեպտ., էջ 319) աշխատելու «փոխադարձ զիշումի և հաշտության համար, առանց, այսուհանդերձ, մեծ հաջողության», որովհետեւ, ըստ նրանց վկայության, «քաղաքական կացությունը արմատացած էր» Անթիլիասում («Հասկ», էջ 311):

«Այս պայմաններու մեջ, դաշնակցականները մտածեցին, թե ամեն ինչ իրենց ինպաստ էր, և պահանջեցին, որ Ազգային ընդհանուր ժողովը նիստի հրավիրվի: Հեռագրեր դրկվեցան և անդամները սկսան հավաքվի: Դժվար էր մեզի համար կասեցնել պաշտոնական նիստի գծով ստեղծված աճապարանքը: Զարեհ, Խորին և Ղևոնդ եպիսկոպոսները համոզեցինք, որ անհամբերության հետևանքները լավ չեն ըլլար և կըրնան մեկ կուսակցության տիրապետության ներքև իյնար: Մյուս կողմեն, նույնքան տրք-

նաշան աշխատանք տարինք համոզելու համար ընդիմադիր եպիսկոպոսները, որ համաձայնության մը դան Զարեհ եպիսկոպոսի հետ: Մտածեցինք, որ եթե միություն կարենանք ստեղծել եպիսկոպոսներու միջև, այն ատեն կրնանք հուսալ, թե համաձայնությունը կտարածվի ավելի լայն շրջանակներու, և վերջապես աշխարհական կուսակցություններու» («Հասկ», 1959 թ. օգոստ.-սեպտ., էջ 319—320):

Ահա այսպիսի մտայնությանց մեջ և այսպիսի պարագաների տակ, «երկար վիճաբանություններ և տարածայնություններ հետո», պատրաստվում է մի համաձայնագիր Կիլիկյան եպիսկոպոսների միջև, որպես «միակ լուծումն տիսով կացության»:

Հունիսի 23-ին, Կիլիկյան հինգ եպիսկոպոսներ՝ Տ. Խաղ, Տ. Զարեհ, Տ. Դերենիկ, Տ. Խորեն և Տ. Ղևոնդ, ստորագրում են համաձայնագիրը: Միայն Տ. Փառեն սրբազնը մերժում է ստորագրել հիմնական մի շարք վերապահումներով և հետևյալ առարկությամբ:

«Սրբազնն եղբարք, Կիլիկիո կաթողիկոսության եպիսկոպոսական դասու համաձայնագիրը ամ ատեն միայն ինձի ընդունելի կրնա ըլլալ, եթե համապատասխան ըլլա իր ընդհանուր ոգիով Կահիրեի եպիսկոպոսական ժողովի համաձայնագիրին:

Ընդհանուր այդ ոգին այն ատեն պահված կըլլա երբ ընդունելինք.

Ա.— Որ 10 հոգինոց վարչությունը երկու տարվան համար կազմված, դառնա Գերագույն մարմին, իսկ իրմեն բխած 1941-ի Կանոնագրին վերամշակման և վերաքննության հանձնախումբը իր կատարած աշխատանքին արդյունքը ներկայացնե սույն տասը հոգինոց վարչության առ ի վավերացմնի:

Բ.— Օծումը ասկե հետո ընել հավանությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ահա վեց կետերից բաղկացած և սկզբում Կիլիկյան եպիսկոպոսական դասի կողմից ընդունված հունիսի 23-ի Համաձայնագիրը.

«Նկատելով, որ 1956 փետրվարի 20-ին, Անթիլիասի մեջ կատարված կաթողիկոսական ընտրության շուրջ հարուցվեցան վեճեր և անհամաձայնություններ, և զանոնք հարթելու համար բանակցություններ և խորհըրդակցություններ տեղի ունեցան նախ Կահիրեի մեջ մեջ նախակոպոսական դասուն կողմեն, նախական Հայոց Կաթողիկոս նորին Ս. Օծություն Տ. Վազգեն Ա-ի և ապա իր ներկայացուցիլ երապաղեմի պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Պղիշե սրբազնի և հուսկ ապա Կիլիկյան եպիսկոպոսներու դասին կողմեն:

Հայաստանյայց Եկեղեցվո միասնության պահպանման և Նվիրապետական աթոռներու համերաշխ գործակցության համար, մենք, Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսներու— հետ երկար խորհրդակցությանց, հայտարարենք.

Ա. Էջմիածնի և Կիլիկիո Կաթողիկոսության փոխադարձ հարաբերությանց մասին հետևյալ համաձայնագիրը կազմեցինք, ըստ ողբական նկատի ունենալով Կահիրելի մեջ մարտ 5—8 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վագգեն Ա.-ի նախագահությամբ գործարված Եպիսկոպոսական ժողովին առաջարկները:

1) Նկատի ունենալով, որ Կիլիկիո Կաթողիկոսական Ս. Աթոռը Հայաստանյայց Եկեղեցվո մեկ անրաժան մասը կազմեն, Կիլիկիո Կաթողիկոսությունը կը նորանի ի հոգեորս դավանական, վարդապետական և ծիսական գերագահությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսության՝ պահելով իր վարչական անկախությունը:

2) Կիլիկիո Կաթողիկոսության ընտրության կմասնակի Մայր Աթոռը երկու ձայնով, մեկ եկեղեցական և մեկ աշխարհական, իսկ օժման կճրավիրով նախագահելու Ամենայն Հայոց Հայրապետը կամ կմասնակցի իր ներկայացուցիչով: Փոխադարձար Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության Կիլիկիո Կաթողիկոսությունը կմասնակցի երկու ձայնով, մեկ եկեղեցական և մեկ աշխարհական, պահելու համար Հայաստանյայց Եկեղեցվո միությունը:

3) Կիլիկիո Կաթողիկոսությունը, ըստ Եկեղեցական հրավանց, իրեն ենթակա թեմերուն համար միայն Եկեղեցականներ ձեռնադրե: Իր թեմերեն դուրս էջմիածնական վիճակներուն համար Եկեղեցականներ կղըրկե Ամենայն Հայոց Կաթողիկոսի կամ անոր իրավասության ենթակա թեմի առաջնորդի հավանությամբ, և ասիկա փոխադարձարար:

4) Կիլիկիո Կաթողիկոսը պիտի շխույթատրե իր թեմերեն դուրս որևէ թեմ կամ հատված կապելու Կիլիկիան Աթոռին:

5) Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հիշատակությունը ի ժամ սուրբ պատարագի կատարավի Հայաստանյայց Եկեղեցիներուն մեջ անխոտիր, և Հայրապետական մաղթանք հանուն Ս. Էջմիածնի և Ծնդհանրական Հայրապետին: Պիտի կատարավի նաև անվան հիշատակություն Կիլիկիո Կաթողիկոսին էջմիածնական թեմերուն մեջ:

Բ. Կիլիկիո Կաթողիկոսության տեղապահը, համախորհուրդ Կիլիկիան եպիսկոպոսական դասի հետ, միաձախությամբ կազմեն երկու տարգան շրջանի մը համար նշանակովի Ազգային կեդրոնական վարչություն

մը՝ բաղկացած հինգ եկեղեցական և հինգ աշխարհական անձերի: Հիշյալ նշանակովի վարչության անդամներն որևէ մեկուն կամ ամբողջին հրաժարումի պարագային դարձյալ եպիսկոպոսական դասը նշանակովի կվերակալմե վարչությունը:

Նշանակովի Ազգային կեդրոնական վարչության պարտականություններն են.

1) Տնօրինում Կիլիկիան թեմերու աղքային եկեղեցական և վարչական գործերուն:

2) Վերաբննություն և վերամշակում 1941-ին խմբագրված Կիլիկիո հայոց կանոնագրության, վերահիշյալ կեդրոնական վարչության կողմեն նշանակված իրավագետ և ձեռնահասումը մը կողմեն:

Գ. Վերոհիշյալ Ազգային կեդրոնական վարչության շրջանի լրանալեն ետքը վերաբննված և վերամշակված 1941-ի Կիլիկիո Կաթողիկոսության կանոնագրությունը, խմբագրված՝ համաձայն Հայաստանյայց Եկեղեցվո ողբական սկզբունքներուն և կանոններուն ու պատշաճեցված՝ Կիլիկիան թեմերուն տեղական պայմաններուն, կներկայացվի սույն վերամշակված կանոնագրության տրամադրությանց համաձայն լրացուցիլ ընտրություններուվ կազմված Ազգային ընդհանուր ժողովին, որ հետ քննության զայն հզեղ Կիլիկիո Կաթողիկոսին ի վավերացումն:

Դ. Կիլիկիո Կաթողիկոսության վանական բոլոր գործերու կարգապահությունը և մատակարարումը կկատարավին Միաբանական Տնօրին ժողովի սահմանյալ կանոններուն համաձայն Միաբանական ներքին կանոննագրի վերաբննությունն ու վերամշակումը պիտի կատարավի Միաբանական ընդհանուր ժողովին ընտրված հանձնախումբի մը կողմեն, որ հետ վերաբննության զայն կներկայացնե Միաբանական ընդհանուր ժողովին: Վերաբննված կանոնագրությունը կդույլի Ս. Կաթողիկոսին ի վավերացումն:

Ե. Կիլիկիան եպիսկոպոսական դասը վերոհիշյալ հողվածներուն անթերի գործադրությունը հանձն առած, և ծշտած ըլլալով Ս. Էջմիածնի և Կիլիկիան Աթոռի փոխարարերությունները, համապատասխան Կահիրեկի եպիսկոպոսական ժողովի առաջարկներուն, կորոշե բարձրապատիվ Տ. Զարեհ սըրբազնի կաթողիկոսական օծումը կատարել հառաջիկա հուկիս 22-ին, հետ գործադրության կազմություն կեդրոնական վարչության, գումարում Միաբանական ընդհանուր ժողովի՝ վերոհիշյալ հողվածներու տրամադրությանց, Անթիլիասի Մայր Տաճարին մեջ:

Զ. Սույն համաձայնագիրը Կիլիկյան կապիսկոպոսական դատուն, կմատուցվի Ամենայն Հայոց Հայրապետին, խնդրելով որ իր ներկայացուցիւք դրկե Կիլիկիո կաթողիկոսի օժման:

Միանգամայն այս համաձայնագիրը հայտարարենք առ ի գիտություն Հայաստան-յայց Եկեղեցվոն նվիրապետական և առաջնորդական մյուս Աթոռաներուն, Կիլիկիո միաբանության անդամներուն, Կիլիկյան թեմերու ժողովականներուն և հավատացյալ հայ ժողովովորին, աղոթելով վասն խաղաղության աշխարհի և անսասան միության Ազգին Հայոց և Հայաստանյայց Ս. Եկեղեցվոյն:

Մայր Աթոռը լուր շուներ «1956 թվականի հօնմիսի երկրորդ կեսեն սկսյալ բացարձակ գաղտնապահության մեջ» և «Հանդարտանկուններու մեջ» պատրաստվող այդ համաձայնագրից:

Հնդդիմադիր հայ մամուլը այդ համաձայնագիրը որակում է նոր ծովակ, ճանապարհ պատրաստելու համար օժման հանդիսին: «Թիր զմելս ի վերայ մեղաց»:

«Զարթոնք» օրաթերթը, իր հունիս 26-ի համարում, բացատրելով Ազգային ընդհանուր ժողովի հետաձգման պատճառները, գրում էր.

«...Արդ, այս «կարևոր աշխատանքներուն» հետ կապ ունեին ժողովուրդին մեջ համառ կերպով շրջան ընդող այն զրուցները, ըստ որոնց Խաղաղության մեջ կ առաջանա բանակցությանց ձեռնարկեր են Զարբեհ, Խորեն և Ղևոնդ սրբազնաններուն հետ, իրեւ թե ազգային-եկեղեցական տագնապի բարվոք լուծում մը տալու առաջադրությամբ: Այսօր կանխահաս կգտնենք տակավին՝ անդրադառնալու այս հարցի ներքին ծալքերուն Սակայն տեղին կգտնենք հոս զգուշացնել Խաղաղության մեջ կ առաջանա պատճառները, որոնք հոնք շինելու տեղ ալք չհանեն և մասվանդ ծովակի մեջ չլինան, ինչպես ինկան Կաթողիկոսական տեղապահին վերշին ընտրության առթիվ, երբ Խորեն եպիսկոպոսը զիրենք խաղի բերավ: Խաղ և Դերենիկ եպիսկոպոսները պետք չեն մոռնան, թե իրենք իրավասություն չեն ստացած որևէ մեկեն՝ հանձնառություն ստանձնելու հանուն Ս. Էջմիածնի եպիսկոպոսական ժողովի և Միաբանական ընդհանուր ժողովին և ժողովուրդին: Կհուսանք որ կանդրապանան կացության ժանրակշիռ հանգամանքին, և անդառնալի սիալներ չեն գործերու:

Իր հերթին «Արարատ» օրաթերթը, իր հունիս 26-ի համարում, խորհրդաժություններ անելով համաձայնագրի մասին, գրում էր հետևյալը. Անը բոլորի նպատակն է

խարկանքի վերջին փորձը հաջողցնելով. ըլմատրյալքը օծելու մասնակից դարձնել Խաղ և Դերենիկ սրբազնանները որոնք փորձեր և փորձառությունները ետք միամտությունը կունենան ժողովներու մասնակցիլ, տարկելով մութին մեջ խարերաններու պատրաստած և անոնց հավատարիմ գործակալ Խորեն եպիսկոպոսի խարեռութենքն: Այս առթիվ կզգուշացնենք գերաշնորհ Խաղ և Դերենիկ սրբազնանները, որ այս անգամ ալ շինան ժողովակը դավադիրներուն, որոնք կես նպատակի ըրած են ազգային համերաշխության, Հայ Եկեղեցվոն միասնականության ամեն փորձ ձախողեցնել և դաշնակ տիրապետությունը հավերժացնել Կաթողիկոսարաններս: Եթե Խաղ և Դերենիկ սրբազնանները նման սխալի մեջ իյնան, պատասխանատու կմնան հայ ժողովուրդի դատաստանին առջև, որմէ խուսափելու ոչ մեկ ինքնարդարացում չի կրնար ըլլալ: Համաձայնությունը եթե անհամաժեռ է, նախ Եկեղեցվոն, ապա ժողովուրդի միասնականության գծով պետք է գա, այլապես մասնակի համաձայնություններ ավելի կիսուցնեն ստեղծված կացությունը»:

Իրոք, հետագա դեպքերը ցուց տվեցին, թե ուղիղ էին Փառեն սրբազնի արի կեցվածքը և վերապահումները, ինչպես նաև մամուկի ահազանգումները: Բարեբախտաբար Տ. Խաղ և Տ. Դերենիկ սրբազնանները անմիջապես զգալով լարված թակարդի վտանգավորությունը, ամսի 26-ին լուրացնում էին Փառեն սրբազնի հիմնական վերապահումները, հայտարարելով պաշտոնապես, որ սիրենց ստորագրությունները ի զորու էին այն պայմանով միայն, որ էջմիածնի վավերացներ համաձայնագրից («Հասկ», անդ, էջ 321):

Հնդգծենք անգամ մը ևս, թե Մայր Աթոռը և Վեհափառ Հայրապետը լուր շունեին այդ համաձայնագրից:

Այժմ մի քանի բառով անդրադառնանք 23 հունիսի գրացարձակ գաղտնապահության և ավելի հանդարտ անկյուններու մեջ պատրաստվող այդ համաձայնագրին:

«Հասկ»-ը (1959 թ. օգոստ.-սեպտ., էջ 301—322), որ երկար էշեր է նվիրել Անթիլիասի տագնապպի լուծելու համար կատարված մի շարք ոչ պաշտոնական և որևէ հանգամանքից զուրկ, թեև սրտացավ և գնահատելի բանակցություններին և թղթակցություններին, բայց մի տող անգամ չի գրի Մայր Աթոռու կողմից կատարված առաջարկների մասին: Օրինակ՝ հետաքրքիր էր իմանալ, թե Անթիլիասը ի՞նչ պատճառաբանությամբ մերժեց հունիս 9-ի հեռագիրը և զպատասիանեց Վեհափառ Հայրապետի հունիս

22-ի հեռագրին: ինչո՞ւ համար տեղապահ Տ. Խորեն եպիսկոպոսը հեռագրում էր. «Խոր-րապես կցավինք, որ առաջարկությունները (Մայր Աթոռի) անընդունելի են»:

Այնուամենայնիվ ինչպես և ինչո՞վ պետք է բացատրել մետասաներորդ ժամում Անթիլիասի «Փութկոտությունը» համաձայնագիր գոյացնելու, երբ սխատեմատիկաբար նախապես մերժվում էին Վեհափառ Հայրապետի, Եպիսկոպոսական ժողովի և այլ եկեղեցական ու աշխարհիկ անձանց համերաշխություն գոյացնելու բոլոր դիտումները: Շատերի ցանկությունը, պարզ է, որ համերաշխությունն էր և խաղաղությունը: Բայց կողմերի միջև գոյություն ունեցող անհամաձայնությունները կարող էին լուծվել միայն աստիճանաբար, քայլ առ քայլ, բայց և անկեղծ խորհրդակցություններով: Համաձայնությունը պետք է լավ պատրասված լինի համակողմանի խորհրդակցություններով, փոխադարձ զիջումներով:

Միամտություն կլիներ կարծել, որ այնքան փորձերից, պաշտոնական առաջարկներից, թղթակցություններից, ժողովական որոշումներից հետո «բացարձակ գաղտնապահության և ավելի հանդարտ անկյուններու մեջ» կատարված մի շարք խորհրդակցություններում կկարգավորվեն բոլոր հարցերը, երբ դրանք ստացել էին այնքան ծավալուն բնույթ և երբ տարակարծությունները այնքան խորն էին կողմերի միջև:

Արդարեւ, իրողությունն այն է, որ Վեհափառ Հայրապետը որևէ լուր չէր ունեցել այդ բանակցություններից, ոչ էլ որևէ պաշտոնական համաձայնագիր է ուղարկվել Մայր Աթոռ Նույնիսկ կողմնակի կերպով չի առնվել Մայր Աթոռի կարծիքը այդ մասին, գեթ որպես պատշաճություն:

Դրա պայծառ ապացուցն այն է, որ Մայր Աթոռը նույն օրերին, այսինքն հունիսի 9—22-ին, անտեղակ Անթիլիասում կատարվող հաշտարար աշխատանքների փորձի մասին, հունիսի 9-ին և ապա 22-ին հեռագրում էր Խորեն եպիսկոպոսին, բերելով նոր առաջարկներ:

Վեհափառ Հայրապետը հունիս 23-ի համաձայնագրի մասին իմացավ պատահարար և այն էլ բանակցությունների ձախողումից հետո, երբ Եղիշե սրբազնը Վեհափառ Հայրապետին գրած իր մի նամակում խոսում էր նաև այն մասին, որ վերջերս «հաշտության փորձ մը եղավ և ձախողեցավ»:

Նույն այդ օրերին Մայր Աթոռում ստացվեց ձախողված համաձայնագրի մեքենագրված մեկ պատճեննը առանց նամակի, առանց որևէ գրության, առանց որևէ ստորագրության: Ինչպես հայտնի է, Վեհափառ

Հայրապետը այդ մասին արտահայտվել է Տ. Շնորհը եպիսկոպոսի գրած նամակում, որը հրատարակվեց մամուլում:

Հունիսյան համաձայնագրի կապակցությամբ նորից եղան հակառակորդ մամուլի կողմից և Անթիլիասի թելադրությամբ անձիշտ և դիտումնավոր վերագրումներ Մայր Աթոռի հասցեին իր թե հեռագիր ստացվել է Մայր Աթոռում այդ համաձայնագրի մասին, բայց որևէ պատասխան չի տրվել:

«Համկ»-ը ավելացնում է նույնիսկ, թե Հունիսի 24-ին «Խաղաղությունը պատրաստ էր նաև Վազգեն Ա-ին ուղղվելիք նամակի մը սևագրություն»-ը, համաձայնագրի մեկ օրինակի հետ միասին Մայր Աթոռ ուղարկվելու համար, որպեսզի Վեհափառ Հայրապետը ուրի հավանությունը հայտնի, եթե կարելի է նույնիսկ հեռագրով» (Համկ», էջ 307):

Մայր Աթոռում չի ստացվել ոչ հադ արքեպիսկոպոսի նամակը և ոչ էլ որևէ հեռագիր համաձայնագրի մասին:

Այնուամենայնիվ մի պահ ընդունենք, որ Անթիլիասից մի հեռագիր ուղարկվել է Մայր Աթոռ այդպիսի լուրջ և կարեռ մի հարցի առթիվ, ինչպիսին էր հունիսյան համաձայնագրությունը: Մի՞թե կարելի էր նման կարեռ և բախտորոշ մի հարցի մասին հաղորդել միայն հեռագրով Մինչեռ անհրաժեշտ էր պաշտոնական գրությամբ, հստակ բովանդակությամբ, պատասխանատու անձանց ստորագրությամբ և ժողովական որոշման արձանագրությամբ իմացնել այդ մասին Մայր Աթոռին: Այդպես է ընդունված կարգը: Ապա միաժամանակ ծագում է հետևյալ հարցը. ինչո՞ւ հունիսյան համաձայնագիրը պաշտոնապես չպետք է փոխանցվեր Մայր Աթոռ, տեղապահ Խորեն եպիսկոպոսի կողմից, որի հետ պաշտոնական հարաբերությունների մեջ էր և եղել է միշտ Վեհափառ Հայրապետը նրա տեղապահ ընտրությունից ի վեր Դեռ ավելին, եթե իրապես անկեղծ և ուել էր Անթիլիասի համաձայնության գալու ցանկությունը, մի՞թե հնարավոր չէր տեղապահ Խորեն եպիսկոպոսի համար մասնավոր մի պատգամավորության գլուխ անցած, կողմերի ներկայացուցիչների և Կիլիկյան եպիսկոպոսների հետ գալ Ս. Եղմիածին, ինչպես հեռագրել էր Վեհափառ Հայրապետը հունիսի 9-ին, նման կարևոր հարցի շորջ սպառիչ կերպով խորհրդակցելու, մտքերի և կարծիքների աղատ փոխանակություն կատարելու վեհափառ Հայրապետի հետ, և կամ գոնե մի լիազոր ուղարկելու Մայր Աթոռ՝ ունենալու համար նաև Վեհափառ Հայրապետի կարծիքն ու թելադրանքը:

(Նարումակելի)




Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների
քեկնածու, հնագիտ)

ԼՄԲԱՏԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ



Մբատավանքը գտնվում է Սովետական Հայաստանի ալժմյան Արթիկի շրջանի Արթիկ քաղաքից մեկ կիլոմետրաչափ դեպի արևմուտք, քարձրավանդակի գոգավորության լանջի փոքրիկ հարթակի վրա, երբեմնի Շիրակի գավառի գեղեցիկ բնության գրկում։ Դեռ հեռվից՝ կապույտ երկնքի և կանաչազարդ կամ ձյունապատ լանջերի ֆոնի վրա երևում է վառ կարմրագույն հանքաքարից կառուցված վանքի ուրվագիծը Վանքն իր անոննը ստացել է համանում փոքրիկ շենից, որի տների ավերակների հետքերը՝ դար ու փոսերի ձևով մինչև այսօր էլ պահպանվել են վանքին կից։

Հայ հոգեոր կյանքի պատմության մեջ եղակի են այն մենաստանները, որոնց վանական կառուցվածքները բաղկացած են միայն մեկ եկեղեցոց. այդպիսին է նաև Լմբատավանքը՝ իր միակ եկեղեցոց շենքով, որը վիճակն արձանագրությունների մեջ հայտնի է Ս. Ստեփանոս անոնով։ Զնայած այն բանին, որ Արթիկի շրջանի 1948 թվականի հնագիտական հետազոտությունների ժամանակ այդ եկեղեցու արևմտյան կողմում նկատվեցին քարաշար պատերի հետքեր, որոնք հիշեցնում էին եկեղեցու արևելյան արսիդը՝ կից խորաններով, սակայն մինչև այժմ համապատասխան պեղումներ չկատարելու հետևանքով, այդ բանը վերջնականապես դեռ պարզված չէ։

Պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում այդ մենաստանի մասին։ Հայտնի չեն նաև, թե ե՞րբ է կառուցվել այն և ովքեր են եղել նրա կառուցողները։ Վանքի անցյալի մասին միակ հիշատակարանները նրա վրա փորագրված արձանագրություններն են։

Այդ արձանագրությունների համաձայն, որոնք մեջ ենք բերում, ըստ հնարավորի, ժամանակագրական կարգով, ուն Կարպատական ուժությունուն կարգով։ Ս. Ստեփանոսի դուռը, տեսնում է, որ վանքը չուր չունի և ընդառաջելով բնակիչների թախանձանքին, չուր է բերել տալիս վանքը (արձանագրություն № 1)։ Արձանագրությունը տարեթիվ չունի. Հավանաբար ամենահին արձանագրությունը լինի և, մեր կարծիքով, պետք է վերաբերի մինչև սեղուկյան արշավանքների ժամանակաշրջանին։

Հայոց ՈՒ (640, մեր թվագրության 1191) թվականը կրող մի արձանագրության մեջ ասվում է (արձանագրություն № 2), որ Տեր Թարսեղը անօրեններից գնում է վանքը և միաժամանակ վանքին է նվիրում Ցիցը գյուղը, ինչպես և վանքին է վերադարձնում շուրջը, որը դեռ հնուց նրան էր պատկանում։

Արձանագրությունից միանգամայն պարզ է դառնում, որ Լմբատավանքը նույնպես ենթարկվել է սեղուկների ասպատակություններին, որովհետև արձանագրության մեջ գործածած «անօրեն» խոսքը անկասկած վերաբերում է սեղուկներին և որ վանքն իր

կալվածներով սեփականված պետք է լիներ սեղուկ խաների կողմից: Արձանագրության մեջ հիշատակված Տեր Բարսեղը, որը, ինչպես հետո կտեսնենք, Վահրամ Պահլավունի իշխանի որդին է և, ամենայն հավանականությամբ, պետք է ստանձնած լինի նաև վանքի առաջնորդությունը: Իսկ դրանից էլ հետևում է, որ Լմբատավանքը, որը մինչ սեղովկան արշավանքները հանդիսանում էր Պահլավունյաց տոհմի սեփականությունը, սեղովկան արշավանքներից հետո էլ նորից դառնում է նրանց սեփական կալվածքը, Վանքին նվիրած ծիցքը գյուղը, ինչպես պարզել են հնագիտական հետազոտությունները, գտնվելիս է եղել Լմբատավանքից կիս կիլոմետրաշափ գեպի հարավ-արևմուտը, սարահարթի վրա, այժմյան Պեմզաշեն գյուղը տանող կարճ ճանապարհի եզրին:

Երրակ գավառի առաջնորդ և Անի քաղաքի եպիսկոպոս Գրիգոր արքեպիսկոպոսը, իր հորեղացի Տեր Բարսեղի միջոցով լրմբատավանքին է նվիրում իր կողմից դրամով գնված Հայրենյաց Թաղք գյուղը (արձանագրություն № 3): Արձանագրության մեջ հիշատակված Գրիգոր արքեպիսկոպոսը նույնպես Պահլավունյաց նշանավոր ազգատոհմից է՝ Վահրամ Պահլավունի իշխանի թուր, Ապուղումը որդին: Այն փաստը, որ նվիրատվությունը կատարվում է Տեր Բարսեղի միջոցով, ինքնին վկայում է որ վերջինս Լմբատավանքի առաջնորդն էր, որը նախորդ արձանագրության համաձայն վանքը գնում է սեղուկներից: Այդ արձանագրությամբ կըրկին անգամ հաստատվում է, որ Լմբատավանքը հանդիսանում էր Պահլավունիների տան սեփականությունը: Վանքին նվիրված Հայրենյաց Թաղք գյուղը, համաձայն հնագիտական ուսումնասիրությունների, գտնվելիս է եղել այժմյան Արթիկ քաղաքից քիչ վերև, գեպի հարավ, տուփի քարահանքների սահմաններում: Արձանագրությունը տարեթիվ չունի, սակայն անկասկած է, որ նա նույնպես պետք է վերաբերի Ժմանակը՝ 1191 թվականից հետո:

Անի քաղաքի այդ նույն եպիսկոպոս, Պահլավունի Ապուղամբի որդի Տեր Գրիգորը, Լմբատավանքին է նվիրում իր սեփական Արդիք գյուղը (արձանագրություն № 4): Այդ արձանագրությունը նույնպես տարեթիվ չունի, ամենայն հավանականությամբ այն պետք է վերաբերի Ժմանակից կամ Ժմանակի սկզբներին: Արձանագրությունը հավանական է դառնում, որ Տեր Բարսեղը արդեն մահացած պետք է լիներ և վանքին առաջնորդ եղած լիներ մեկ ուրիշը: Վանքին նվիրված Արդիք գյուղը ներկայիս Արթիկ քաղաքին:

Բշտկա թոռներ Գրիգորը և իր եղացյաները կմրատավանքի Ս. Ստեփանոսին են նվիրում Սառնաղբյուր գյուղը՝ Սովուսի վանահայրության և նրա եղբայրակից (վանքի միաբանության անդամներ) Առաքելի ու Վարդանի ժամանակ (արձանագրություն № 5): Այդ արձանագրությունը, որը նույնպես տարեթիվ չունի, պետք է փորագրված լինի ժամանակից առաջին տասնամյակում և, որ Մովսեսը պետք է փոխարինած լինի Տեր Բարսեղին: Վանքին նվիրված Սառնաղբյուր գյուղը, ինչպես առիթ ենք ունեցել ցուց տալու մեր մի այլ աշխատության մեջ (տե՛ս էջմիածին» ամսագիր, 1956 թ. № 8-9), գտնվելիս է եղել այժմյան Արթիկի շրջանի Հառիճ գյուղից ու Հառիճա վանքից մեկ ու կես կիլոմետրաշափ գեպի հարավ, սարահարթի վրա, ձորաեզրին:

Ամիր սպասարար Զաքարեն կմրատավանքի Ս. Ստեփանոսին է նվիրում Ցիցք գյուղը՝ իր եեռներով, դաշտերով ու ջրով (արձանագրություն № 6): Արձանագրությունը տարեթիվ չունի, բայց որովհետև Զաքարը և վախճանվել է 1213 թվականին, ապա այդ արձանագրությունը պետք է փորագրված լինի մինչև 1213 թվականը և 1191 թվականից ու չուտ, քանի որ այդ թվականին Տեր Բարսեղը նույն Ցիցք գյուղը նվիրում է կմրատավանքին: Արձանագրության ժամանակը, մեր կարծիքով, պետք է համարել Ժմանակի առաջին տասնամյակի վերջերը: Արձանագրությունից հետեւում է, որ այդ ժամանակ կմրատավանքը իր կալվածներով այլևս չէր կազմում պահլավունիների սեփականությունը, այլ նրանք պատկանում էին Հյուսիսային Հայաստանի նոր տերերին՝ Զաքարյան իշխաններին:

Ուն Սիմոն, Սատուրի որդին, իր բաժին այդին նվիրում է կմրատա Ս. Ստեփանոսին (արձանագրություն № 7):

Մետք Բարսեղը իր բաժին այդին տալիս է Ս. Ստեփանոսին (արձանագրություն № 8):


Ուն իշխան 1251 թվականին իր հնձանը վաճառում է կմրատավանքի Ս. Ստեփանոսի սպասակոր (հավանաբար վանքի առաջնորդը) հաշատուրին (արձանագրություն № 9):

Գրիգոր արքեպիսկոպոսի ընդարձակ արձանագրության վերջում հետագայում ավելցրած «զերշանիկ հայր զԱռաքեալն...» ամենայն հավանականությամբ Բշտկա թոռների արձանագրության մեջ հիշատակված վանքի միաբանության անդամ Առաքյալը պետք է լինի: Ուստի 1191 թվականից մինչև 1251 թվականը հայտնի են դառնում իրարհացրողները՝ Բարսեղ, Մովսես, Առաքել և հաշատուր:

Բացի վերը մեջբերված ինը արձանագրություններից, հուշարձանի վրա կան էլի մի քանի փոքր արձանագրություններ, որոնք խիստ հողմահարված, քայլայված լինելու պատճառով անընթեռնելի են: Մի ուրիշ, ուն ներկով գրած ընդարձակ արձանագրություն էլ եղել է եկեղեցու ներսում, արևելյան արսիդի հյուսիսային պատի ծեփի վրա, որից առանձին աննշան հետքեր են պահպանվել:

Սրանցով ավարտվում են վանքի վիմագրությունները և նրա մասին եղած հիշա-

վերջին՝ № 9 արձանագրությունը որոշակի կերպով ցույց է տալիս, որ 1251 թվականին դեռ կանգուն և շեն էր կմբատավանքը: Դրանից հետո նրա պատմությունը ծածկված է թանձր խավարով: Այնուամենայնիվ մի բան պարզ է ու հասկանալի, որ կմբատավանքը նովնպես, ինչպես Շիրակի ու Հայաստանի մյուս գավառների վանքերը, խիստ կերպով տուժեց մոնղոլական արշավանքների ժամանակ, քայլայվեց ու ամացավ և այդ վիճակում էլ մնաց ու հասավ



ԼՄՐԱՏԱՎԱՆՔԻ Ա. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՆՉ ՎԵՐԱՆՈՐՈՇՈՒՄԸ

տակությունները: Կատարված հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նա հիմնական վերանորոգման ու որոշ փոփոխությունների է ենթարկվել, որոնք ամենայն հավանականությամբ կատարված պետք է լինեն ԺՊ դարի առաջին քառորդում, Զաքարյան իշխանների կողմից:

մինչև մեր օրերը, մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում:

Սովետական իշխանության տարիներին մեծ աշխատանքներ են կատարվել կմբատավանքի միակ եկեղեցու՝ ճարտարապետական այդ հոյակապ կոթողի պահպանության և ուսումնասիրության ուղղությամբ: 1955 թվականին նախատեսվող հիմնական վերանորո-

գումաների կապակցությամբ, 1954 թվականին անհրաժեշտ պեղումներ և լրացուցիչ ուսումնասիրություններ են կատարվել վանքի նկատմամբ, իսկ նշված ժամկետում ամբող-

ջովին ավարտվել են հուշարձանի հիմնական վերանորոգման ու բարեկարգման աշխատանքները (այդ մասին ավելի մանրամասն կանդադառնանք նկարագրությունների բաժնում);

ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Այն կապակցությամբ, որ 1955 թվականին նախատեսվում էր հիմնական վերանորոգման ենթարկել Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին, 1954 թվականին ան-

շերտի հաստությունը հասնում էր մինչև երկու մետրի: Երկու շաբաթ տևող պեղման աշխատանքներից հետո պարզվեց հետևյալը.



ԼՄԲԱՏԱՎԱՆՔԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հրաժեշտ եղավ որոշ պեղումներ կատարել հուշարձանի նկատմամբ, որովհետև նրան մոտիկ գտնվող վանական միաբանության և շինականների բնակելի շենքերը քանդվելով մեծ շափով ծածկել էին եկեղեցու պատերի արտաքին երեսը, մանավանդ արևմտյան ու հարավային կողմերից, ուր փլամաժների

1. Եկեղեցու արևմտյան խաչթեղի հարավային պատին կից բացվեց մի որիշ խորան՝ խաչթեղի հյուսիսային պատին կից խորանի նմանությամբ: Պահպանվել էին խորանի պատերի ստորին երկու քարաշարերը, շարված կարմրագույն տուֆի սրբատաշ քարերով, իսկ ներսում, հողաշերտից հայտ-

նաբերված գոգավոր տաշված քարերը հաս-
տառում էին, որ նա ունեցել է թաղակապ
ծածկ:

2. Եկեղեցու արևոտմյան կողմում, մուտ-
քից հարավ, պատի ամրող երկարությամբ,
բացվեց խաչարձանների ընդհանուր պատ-
վանդանը՝ պատի ձևով, որի վրա պահպան-
վել էին երկու խաչարերի ստորին մասերը՝
իրենց պատվանդանների հետ:

3. Եկեղեցու հյուսիսային կողմում, պա-
տից մեկ մետր հեռու բացվեցին մի փոքրիկ
կառուցվածքի մնացորդներ՝ սալահատակը և
պատերի հիմքերը, որը հավանաբար պետք է
դամրարան եղած լինի:

4. Այդ նույն հյուսիսային կողմում, գետ-
նի մակերևույթից կես մետրաչափ խոր,
բացվեց անասունների աղրի հավասար հաս-
տությամբ շերտ, իսկ եկեղեցու այդ կողմի
պատի մեջ, թիւ վերև փորված էին ուղիղ
գծով բազմաթիվ փոսեր, ինչ որ շենքի ծած-
կի փայտերի ծայրերը հենելու համար: Այդ
մնացորդները վկայում էին, որ հատափա-
յում այդտեղ բնակություն է հաստատված
եղել, որ եկեղեցու պատերն օգտագործել են
շենքերի համար, ըստ որի հյուսիսային կող-
մինը եղել է անասնագոմը (մանր քարերով
ու ցեխով շարված պատերի մնացորդները
երևացին նաև եկեղեցու հարավային ու արև-
մուտյան կողմերում): Այդ կառուցվածքները
բոլորովին ուշ ժամանակի են և հավանական
է, որ պատկանեն 1830 թվականների Կարսի
ու Էրզրումի գաղթականությանը: Այդ հան-
գամանքը ինքնին վկայում է, որ այդ ժա-
մանակ լմբատավանքը գտնվում էր քայլքայ-
ված ու լքված վիճակում:

5. Եկեղեցու հյուսիսային ու հարավային
կողմերում, հուշարձանի հիմնապատերին

հավասար, բացվեցին մի քանի գերեզման-
ներ՝ հարթ-տափակ երես ունեցող գերեզմա-
նաքարերով, որոնց մշակման ձեր բնորոշ է
թ-ժ դարերին:

6. Մուտքի առջևում բացվեցին շքամուտքի
հետքերը, որը վկայում է հուշարձանի ավելի
վաղ շրջանին պատկանելու մասին:

7. Պեղումների հետևանքով երկու մետր
տրամագծով մաքրվեց հուշարձանի շրջա-
պատը, մինչև հիմքերը՝ խորությամբ: Հողա-
շերտերից, որոնք փլամերային էին ու լից-
քային՝ հայտնաբերվեցին շենքին պատկա-
նող բազմաթիվ բեկորներ՝ երեսապատման
քարեր, քիվեր, տանիքին սալածե ու կիսախո-
ղովակածկ կղմինդրներ, սալաքարեր, լու-
սամուտների շրջանակներ՝ քանդակազրդ
պսակներով, ինչպես և կավե զանազան՝ ա-
մաններ, ոմանք գլազուրապատ-գունազրդ,
մետաղյա գործիքներ, խաչարերի քանդա-
կազրդ բեկորներ և այլ իրեր, որոնք պատ-
կանում են միջին դարերի տարրեր ժամա-
նակաշրջաններին:

Հայտնաբերված ծածկի կղմինդրները, ո-
րոնք անկասկած պատկանում են այդ հու-
շարձանին, մի ավելորդ անգամ հաստատում
են, որ նա պատկանում է վաղ շրջանում կա-
ռուցված շենքերի թվին: Պեղումներից
ստացված մյուս իրերը վկայում են, որ ժո-
ղորից հետո այնտեղ բնակիչներ չեն եղել: Պեղումների ժամանակ հայտնաբերվեցին
նաև կավե թրծած ջրատար խողովակների
կտորներ, որն ապացուց է այն բանի, որ
վանքն ունեցել է իր ջրմուղը: Այդ մասին
վկայում է նաև հուշարձանի վրա փորա-
գոված մի արձանագրություն (արձանագրու-
թյուն № 1), որի համաձայն ունի կարապետ
ջուր է բերել տալիս վանքը:

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնագմբեթ, խաչածե հատակագիծ
ունեցող կառուցվածք է, խաչթերն ուղղան-
կյուն են, արևելյան խաթթելը արսիդային է՝
բեմով: Դմբեթի թմբուկը ութակող է, սրա-
ծայր վեղարով և հիմքին փոխանցվում է
տրոմպների միջոցով: Միակ մուտքին արև-
մըստյան կողմից է, քանդակազրդ պարա-
կալով և շքամուտքով: Վերջինս ամբողջապես
քանդված է: Լուսամուտները լոթ հատ են՝
շրսու գմբեթի թմբուկի և մեկական արևել-
յան, արևմտյան և հարավային պատերի
մեջ: Բոլորն էլ երկար ու նեղ, կամարակապ
ու քանդակազրդ պսակներով: Դմբեթի թմ-
բուկի լուսամուտների պսակների քանդակ-
ները գծավոր են, գլանած, արևմտյան լու-
սամուտի պսակինը կլոր, իսկ հարավային
լուսամուտի պսակի քանդակները բուսական

ձեւի: Առանձին հետաքրքրություն են ներ-
կայացնում քիվերը, որոնք սալածե են և
ունեն կլոր զարդաքանդակներ: Ներսից պա-
տերը ծեփված են, որը մեծ մասմբ թափ-
ված է: Մևիի պահպանված մասերի վրա
նկատելի են որմանկարների հետքեր, որը
պատկերում է ևնորդրագոր ընթիթք-ը: Այդ
որմանկարները բնական մեծությամբ ար-
տանկարած և ցուցադրված են երևանի պե-
տական Պատկերասրահում:

Շարված է վառ կարմրագույն տեղական
հանքաքարի սրբատաշ քարերով, կրաշաղա-
խով մածուցված: Տանիքը պատած է եղել
կղմինդրով, որը փոխարինված է սալաքա-
րերով: Նկատվում են հիմնական վերանորո-
գումների հետքեր, որի ընթացքում վերա-
կանգնված են պատերի թափված երեսա-

պատ քարերը, տանիքը պատած է սալաքարերով, վերականգնված են թափված քիվերը, սալահատակված է։ Այդ վերանորոգումների ժամանակ, որը ամենայն հավանականությամբ պետք է կատարված լինի ժդղ դարի առաջին քառորդում, եկեղեցու արևմտյան խայթին հարավային ու հյուսիսային պատերին կից ավելացված են փոքրիկ խորան-մատուններ, որոնք շարված են տեղական տուֆի մաքուր տաշված քարերով և ունեն թաղակապ ծածկ։ Այդ խորանների արտաքին պատերը դուրս են ընկնում եկեղեցու արևմբույան պատից, իսկ դրանց դռները բացվում են եկեղեցու դռան առջևում՝ իրար դիմաց։ Հյուսիսային խորանի մուտքի ճակատին դրված է քառակող կոթողի մի մեծ բեկոր, որի մի կողի վրա կա մարդու բարձրաքանդակ, իսկ մյուս կողի վրա՝ խաղողի ողկուզածն քանդակներ։ Մշակման այդ ձևերը բնորոշ են Եկատերին։ Այդ խորանների ավելացման հետևանքով քանդել են եկեղեցու շքամուտքը։ Մինչև վերը նշված պեղումները, հարավային կողմի խորանը չէր երեվում, ուստի բոլոր ուսումնասիրողները, որոնք առիթ էին ունենում շափագրելու այդ հուշարձանը, իրենց գծագրերում ցուց չէին տալիս նշված խորանը։

Բշտկա թոռների արձանագրության մեջ (արձանագրություն № 5) ասվում է, որ նրանց նվիրատվության դիմաց վանքի միաբանությունը խոստանում է նրանց հիշատակին պատարագ մատուցել երկու մատուներում։ Դրանից պարզ է դառնում, որ այդ ժամանակ արդեն գոյություն ունեին եկեղեցու արևմտյան խալթերն կից կառուցված խորան-մատունները, եվ որովհետև այդ արձանագրությունը, որի մասին առիթ ենք ունեցել խոսելու վերելում, պետք է փորագրված լինի ժդղ դարի առաջին տասնամյակում, ապա այդ

խորան-մատունների կառուցումը, ինչպես և եկեղեցու հիմնական վերանորոգումը պետք է տեղի ունեցած լինի այդ նույն ժամանակում։

Հայտնի չէ այդ հուշարձանի կառուցման ճիշտ ժամանակը, բոլոր ուսումնասիրողները, հիմք ընդունելով նրա ճարտարապետական ձևերի մշակումը, միահամուռ կերպով այն վերագրում են է դարին։ Եվ իրոք, այդ ժամանակին պատկանող իր տեսակների մեջ նա խիստ բնորոշ ու յուրահատուկ է, ուստի առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայ ճարտարապետության պատմության համար։

Հուշարձանն այժմ կանգուն վիճակում է։ Այն չէ 1955—1956 թվականների հիմնական վերանորոգումները քանդված էին գմբեթի վեղարի վերին մասը, արևելյան խալթեկ արեւելյան պատի հիմնապատը (ստիլորատ), շքամուտքը։ Թափված էին տանիքի բոլոր սալաքարերը, քիվերի մի մասը և մուտքի վերին երրեսապատման քարերը։ 1955—1956 թվականների հիմնական վերանորոգումների ժամանակ, ամբողջապես վերականգնված են նշված քանդված մասերը, բացառությամբ շքամուտքի, միաժամանակ շքապատը մաքրված, հարթեցված ու բարեկարգված է։

Վանքին պատկանող փոքրիկ գերեզմանոցը ասրածվում է եկեղեցու շորջը։ Բոլոր գերեզմանաբարերն էլ կարմրագույն հանքաբարից են և մշակված են տարրեր ձևով՝ ըստ իրենց ժամանակաշրջանի։ Գերեզմանաբարերի մի մասը չարգված է, ոմանք տեղահան արված, մի մասն էլ թաղված է գետնի մեջ։ Որոշ գերեզմաններ բացված են, ուր նկատվում է քարե դագաղը՝ գինի համար փորված հատուկ փոսով։ Գրավոր հիշատակություններ չեն նկատվում։

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՐԵՎԱԿԱՆ ԽԱԶԹԵՎԸ ՀՅՈՒԽԻՍՍՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՆԵՐՄՈՒՄ.

- Կամաւ բարերարին Աստուծոյ ես Կարապետ եկի
- ի Սուրբ Ստեփանոսի դրուն եւ տեսայ որ ջու-
- ր ոչ կայր ի սմայ եւ բնակչաց սորա թախանձեալ զի-
- ս զինչ որ սմայ ունէի տուի յայսմ եւ բարէ-
5. խաւ կալայ ինձ զսուրբ Ստեփանոս առ Աստուծոյ որ զիս յի-
6. շեն ի սուրբ Լեբատին... Սուրբ... տանին առնեն ին-
7. ձ ժամ արարին. զաւ արդ երէ ո՛ք հակառ կայ այս բ-
8. անիս եւ զիս մոռանայ, մոռացեալ լիցի յՈւղոյն Աստուծոյ։

2. ԳՄՐԵԹԻ ՀԱՐԱՎ.-ԱՐԵՎԱԿԱՆ ՏՈՒՄՐԱՑԻ ԱՐԵՎԱԿԱՆ ԿՈՂԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՄԸ.

- Թ. ՈԽ կամաւ Աստուծոյ ես Տէր Բարսեղ որ
- գնեցի զլանես եւ ազատեցի յան—
3. աւինաց եւ ետու զջիցն վանիցս

4. Եւ չուրն որ իւրն էր ի հնոց լեա՝
5. լիշտառկ ինձ եւ բարեխաւս առ Քրիստոս. երէ
6. ո՛ք զիշտառկ մեր խափանեսցէ
7. նզովի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց:

Յ. Արեգելասն և ԱԶԹԵՎԿԻ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏ.

1. Կամաւիք բարերարին Աստուծոյ այս մեր արձան անջնջելի եւ լիշ-
2. ատակ մշտենենաւոր Տէր Գրիգոր արեինապիսկոպոսի մայրաքաղ-
3. ամին Անոյ եւ նահանգին Շիրակա ժառանգորդի սեփինական մերն
4. արռողյու որ ետու եռուր յիմ հաւեղըրաւտն՝ յաստուածապատի Տեառն
5. Բարսղի, հալալ արդեամբք ստացեալ սուրբ ովտոս Լմբատ զեռին զանձ
6. ազին զեզս մերձ ի յԱրդիք որ կոչի անոն Հայրանց Թաղէ ընձ-
7. աեցի զատ Սուրբ Ստեփանոսի հայրենիի մինչ ի կատարած յափառենիս,
8. յաղագս յիշտառկի մերոյ եւ արեւատուրեան եղբաւ իմոյ Ղարփին եւ
9. հոգլոր Տեառն Բարսղի՝ ստացողի սոցա եւ ծնողաց մերոց. եւ եղի լուծ ի
10. վերայ սպասաւորց սորա՝ ի տարին վեց աւր պատարագ փոխարէնս
11. հասուցանել ի տաւենի Ղազարուն.—զերկուսն Տեառն Բարսղի, զերկուսն իմ
12. Հաւան Ապուղամրի, զերկուսն իմ մաւրն Մահմլըքին՝ անխափան կատար-
13. են մինչ ի զալուստն Քրիստոսի. եւ մի ո՛ք իշխեսցէ հակառակի եւ զիշտառկն
14. խափանել, իսկ երէ յանդզի եւ զայս զեզս յայս վանիցս հանել կա-
15. մենա հանցէ զնա Աստուծ ի կենացն անվախնանիցն հոգուկ եւ
- մարմնով. իսկ
16. ո՛ք հաստատուն պահեն զգրեալս մեր աւրմնուրիսն Աստուծոյ եղիցի ի հոգի եւ
17. ի մարմին նոցա ամէն: Զերջանիկ հայր զԱռաքեալն եւ զանուառէր եւ
18. որ զարդին արար տանս զնորէն յիշնցէ ի Քրիստոս Զիրգէսանամ:

4. ՀՅՈՒՍԽԱՅԻՆ և ԱԶԹԵՎԿԻ Արեգելասն ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏ.

1. Կամաւիքն Աստուծոյ ես Տէր Գրիգոր, որդի Ապուղ-
2. ամրի Անոյ եպիսկոպոս տոփ զԱրդիք եւ
3. զԲորենոյ զիրիցուրիմն Լմբատ իմ հայրէ-
4. նեացն. եւ նոքա տարին :Ա: աւր պատարագ՝ ինձ. հա-
5. ստառուն պահողքն աւրմնին յԱստուծոյ եւ ի մէնչ: երէ
6. ո՛ք հանել շանա՝ կամ ի հախանձու կամ բռնութեամբ,
7. Զկանենին եւ զօնդակ անցէ: :ՅԺ: -իցն նզով-
8. եալ լիցի եւ մեր մեղացն պարտական եղիցի:

5. Արեգելասն և ԱԶԹԵՎԿԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏ.

1. Շնորհին Աստուծոյ ես Գրիգոր եւ իմ եղբարքս՝ Բշտկա քոռ-
2. ներս տուաֆ զմեր հայրենին զԱռանաղբիւր ի Սուրբ Ստեփանոսս
3. ի հայրուրեանս Մոլիսին եւ իմ սիրելի եղբարցս Առ-
4. ամելիս եւ Վարդանա, ի յիշտառկ մեր ծնողացն եւ մեզ.
5. եւ սոքա սահմանեցին զՈւրբ Խաչին շաբաթն աւրն :Բ:
6. մատուն պատարագել զՔրիստոս՝ :Ա: աւրն Մխիթարա,
7. :Ա: Հոգնվկա:

6. Արեգելասն և ԱԶԹԵՎԿԻ Արեգելասն ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏ.

1. Կամաւիք բարերարին Աստուծոյ ես Զաքարէ ամիր սպասալար եւ Շահնշահ
2. եւ մանրատոր բախուցայս ետու զՑիցքն իւ նողուն, ջրուն, լեռ-
3. հականաւ եւ դաշտականաւ ի Սուրբ Ստեփանոսս եղիցի յիշտառկ ինձ

4. Եւ եղբայրն իմոյ հասնէի եւ ծնողաց մերոց.... մեզ ի տանի
5. Սուրբ Խաչին յամենայն եկեղեցին իմ ծնողաց կատարեսցեն....
6. Եւ Սարգսյ եւ զինի կենաց իմոց՝ ինձ ի Հայութեան ամեն:

7. ՀԱՐԱՎԱՑԻՆ ԽԱԶԹԵՎՈՒ ԱՐԵՎԵԼԵՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏԱ.

1. Շնորհիմ Սատուծոյ եւ Սիմեոն Շուպրկիս որ-
2. զիս, որ ետու զիմ այզին որ մատ Յանտեցն
3. է, զիմ բաժինն Լմպատայ Սուրբ Ստեփանոսի
4. եւ բարեխասն առ Քրիստոս. արդ երէ ոք հակառակ կայ
5. այս բանիս, Քրիստոս Սատուած նզովէ զիւր ման եւ զիւր կեան-
6. ըն, երէ ոք հակառակարար ջնջել շանա զաա,
7. շն [չես] յցէ զնա յափառենից կենաց:

8. ԿՄԲԵԹԻ ԹՄԲՈՒԿԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԱՑՅԱՆ ԿՈԴԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏԱ.

1. կաման Սատուծոյ եւ Քարսեղ Մե-
2. տրէ զիմ այզին զմասն
3. Սուրբ Ստեփանոս [չոտու]
4. եւ սպասատրէ սորա պատ-
5. արագ արնեն անխափան:

9. ԿՄԲԵԹԻ ԹՄԲՈՒԿԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԱՑՅԱՆ ԿՈԴԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏԱ.

1. թվ. Զ
2. Կաման Սատուծոյ եւ Խշխանս որ իմ կաման եւ իմ սրտի
3. լուժարութեամբ զիմ ընծանն ծախսեցի Լմբատայ Սուրբ
4. Ստեփանոսի ու յուր Խաչառոյ սպասառ-
5. ի: ծախսեցի, զինար տոի. ոչ ում արդաշ կայ յետ
6. Սուրբ Ստեփանոսի՝ ոչ իմոց եւ ոչ ատարաց եւ Յայր Ա-
7. նեցի այ ես Վանեցի Գէորգս գրեցի հրամանս Խ-
8. խանիս Զայէշահապս: Յժն: նզովեսցէ ով խափանէ:





Ս Փ Յ Ռ Ի Ռ Ո Ւ Մ

ԶԵԿՈՒՅՑ ԳԱԼՈՒՄ ԿՅՈՒԼՊԵՆՎՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

(Հայկական գործեր)

Գալուստ Կյուպենկյան հիմնարկությունը 1960 թվականի հունվարի 15-ին, կիսաբռնում, հրապարակել է պաշտոնական մի հաղորդագրություն, 1959 թվականի ընթացքում Սփյուռքի հայ բարեսիրական և կրթական հաստատությունների համար կատարված օժանդակությունների և հատկացումների մասին, որոնց ընդհանուր գումարը հասնում է 643 455 դոլարի:

Գալուստ Կյուպենկյան հիմնարկությունը անցնող 1959 թվականին մինչև մայիս ամիսը կատարել է առաջին հատկացումները՝ 159 000 դոլար, իսկ մինչև նոյն տարվա վերջը Վարչական խորհուրդը կատարել է նոր օժանդակություններ և հատկացումներ, որոնց գումարը հասել է 484 455 դոլարի:

1. Հատկացումներ ուսումնական ծրագրերի համար, որոնց թվում՝ օգնություն հոգևոր և աշխարհիկ դպրոցների, մանկապարտեղների և կարուս ուսանողների, կառուցում արհեստանոցների, կրթաթոշակ հայ ուսանողների, օժանդակություն հայ մտավորականության և հատարակություն հայագիտական երկերի:

2. Հատկացումներ վերաբնակության և բարեսիրական նպատակների համար, այդ

թվում՝ երուսաղեմի հայոց Պատրիարքության և երուսաղեմի տարագիր հայերի բնակության, ինչպես նաև Կոստանդնուպոլիսի հայոց Ս. Փրկիչ հիվանդանոցին կատարված հատկացումներ:

Այս երկրորդ գլխի տակ խոսվում է նաև Գալուստ Կյուպենկյան հիմնարկության Մայր Աթոռ Ս. Էջմիածնին կատարած հատկացումների մասին 1959 թվականի ընթացքում:

Էջմիածնին ենթավերնագրի տակ Գալուստ Կյուպենկյան հիմնարկության պաշտոնական զեկուցի մեջ գրվել է հետևյալը.

«26 մայիս 1959-ի մեր զեկուցեն ի վեր հավելվածական 50 000 դոլարի գումար մը փոխանցվեցավ Ս. Էջմիածնին, 1959-ի հունիսին, և այսպիսով կատարված փոխանցումներուն գումարը հասավ 180 000 դոլարի։ 1959 հոկտեմբերի սկիզբը պր. Եղվարդ Ութուցյանի պաշտոն տրվեցավ կրկին երթալու Ս. Էջմիածնին, քննելու համար կատարված նորոգությունների և անոնց մասին Վարչությանս ուղղված տեղեկագիր մը պատրաստելու համար։

Ի նպաստ Ս. Էջմիածնի կատարված հատկացումները, որոնք մեր Հիմնադրին կտակին մաս կկազմեն, հայկական գործերու բյուզեին վրա հավելվածական հատկացումներ են»։





ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀՇԱՏԱՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Լրասում է մեր ռևսպուբլիկայի 40 տարին: Հայաստանի պետական հրատարակչությունը պատրաստվում է արժանավայր գրմագրորել այդ հորելայնը: 1900 թվականի թեմատիկ պլանով նախատեսված է հրատարակել բազմարուվանդակ գրականություն՝ նվիրված Հայաստանի 40-ամյակին:

Պետհրատի քաղաքական գրականության խմբագրությունը հրատարակության է պատրաստում Գ. Հարությունյանի «Սովետական Հայաստանը 40 տարում» գիրքը: Գրքում ժամանակագրական կարգով շարադրված է Սովետական Հայաստանի համառոտ պատմությունը:

Տպագրության են պատրաստվում նաև Զ. Գրիգորյանի «Հայ» և ուս ժողովորդների բարեկամությունը գիրքը, Ա. Գրիգորյանի «Հայաստանի բանվոր գասակարգը 40 տարում» աշխատությունը և այլն:

Հորելայնական հրատարակությունների հարուստ ծրագիր ունի գիտա-տեխնիկական գրականության խմբագրությունը: Լույս կտևնեն Վ. Համբառնումյանի «Սովետական Հայաստանը 40 տարում», Գ. Գիտությունների Սովետական Հայաստանում», Զ. Միմոնյանի «Մեքնաշինության և սարքաշինության զարգացումը Հայաստանում», Ա. Խոհմանի «Առողջապահության նվաճումները Սովետական Հայաստանում», Գ. Թաղրամյանի «Քիմիկական արդյունաբերության զարգացումը Հայաստանում» գրքերը, պատկերագրգ «Երևան» ալբոմը և այլն:

«Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում»: Այս վերնագիրն է կրում Ա. Ալբամյանի և Մ. Շահրապահի գիրքը, որը ապագրության է պատրաստում գյուղատնտեսական գրականության խմբագրությունը: Դրբանմ համառոտակի նվարդրված է Հայաստանի գյուղատնտեսությունը՝ Սովետական իշխանության հաստատությաց առաջ, և նրա սոցիալ-քաղաքական վե-

րափոխումն ու զարգացման հեռանկարները Սովետական իշխանության տարիներին:

40-ամյակի պատվին Պետհրատի գեղարվեստական գրականության բաժինը նախապատրաստել է գեղարվեստական գրականության մի քանի ժողովածուներու «Սովետահայ» գրականության ընտիր էջերը եռահատոր ժողովածուներու մի շարք ընտիր երկեր, իսկ «Սովետահայ» գրամատուրդների մի շարք ընտիր երկեր, գրականության ընտիր էջերը եռահատոր ժողովածուներու մի շարք ընտիր երկեր, գրամատուրդների լավագույն պիեսները:

Լույս են տեսնելու նաև սովետահայ արձակի ընտիր երկերի ժողովածուներու, քուրդ գրողների երկերի ժողովածուների և «Գրական Հայաստան» (ադրբեջաններին) ժողովածուներու:

«Հուշարձան» վերնագրով հասուն ժողովածու է հրատարակվելու նվիրված քաղաքացիական կրիվների տարիներին զոհված բանաստեղծներին:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱԾԽԱՍՈՒԹՅՈՒՆ.— ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի կեզվի ինստիտուտի հրատարակությամբ ոռուերեն լեզվով լույս է տեսնել պոռփ. Հ. Կուտիկյանի «Գրական հայերների պատմական շարադրության ակնարկներ» աշխատությունը, որն իր տեսակի մեջ առաջինն է հանդիսանում:

Հեղինակը իր առաջ խնդիր է դրել ցուցյալ ժամանակակից հայերների շարադրության կառուցվածքի զարգացման ուղին և որոշել այն ընդհանրությունների ու տարրերությունները, որ երեան է հանում նա իր նախորդ Չըշանների համեմատությամբ:

Աշխատությունն սկսվում է վիպասանական հայերների (Գոյթան երգերի), այսինքն հին հայ ժողովրդական բանահյուսության նմուշների շարադրության կառուցվածքի քննությամբ: Գրան հաջորդություն է ծ գարի մա-

տենագրության լեզվի շարահյուսության քննությունը, որի իր արժարծած հարցերով, ճիշտ ու տեղին մեկնարանություններով կազմում է գրքի ծավալուն և ծանրակշիռ մասը։ Ապա հեղինակը գրաղվում է հունարան դպրոցով և Զ-ժմ դարերի մատենագրությամբ։

Նշելուց հետո միջին հայերենի շարահյուսական առևնձնահատկությունները, Հ. Կուփիկյանն անցնում է ժամանակակից հայոց լեզվին։ Նա արդարորեն ժըմատում է այն կարծիքը, ըստ որում ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքը ամբողջապես հակադիր է գրաբարի կառուցվածքին իր աշխատությունը շարադրելիս պրոֆեսորը միանգամային կանգնում է ճիշտ ուղղությունը հայերենի պատմական շարահյուսակից հարցերը քննելով հաշվի է առնում ոչ միայն հայերենի լեզվագրգացման շրջանների առանձնահատկությունները, այլև այն կրող ժողովրդի պատմական կյանքի պայմանները։

Պրոֆ. Հ. Կուփիկյանի այս աշխատությունը շատ շնորհակալ մի ներդրում է հայագիտության ասպարեզում, ողջունելի և գնահատելի մի ձեռնարկ, թե՛ իր տեսական և թե՛ իր գործնական արժեքով։ Փափագելի է, որ այն հրատարակի նաև հայերեն։

ԱՌՐ ԳՐԹԵՐ. — 1) «Հայ ժողովրդական հեթիարենը, 2-րդ հատոր»։ Ընթերցող հասարակայնության շերմուշադրության էր արժանացել «Հայ ժողովրդական հեթիաթերեա-ի 1-ին հատորը, որին հաջորդած է այս 2-րդը։ Այս գրքում տեղ են գտել անվանի բանահավաք Յ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեթիաթերեա-ի 1—10 գրքերում տպագրված և 11-րդ անտիպ գրքում զետեղված Վաղարշապատի հեթիաթերը։ Դրանց շարքը ճոխացված է բազմավաստակագրագրագիտահամարակաց Յ. Լալայանի հավաքած Վաղարշապատի հեթիաթերով։

2) «Երևանի պատմություն, 1801—1879 թ. թ.»։ Աշխարհի հնագույն քաղաքներից մենք է մեր սիրելի մայրաքաղաք Երևանը, որը հմտնած է մեր թվարկությունից մի քանի հազարամյակ առաջ Հայաստանի հողակված մայրաքաղաքներ ավերակ են այսօր կամ վերածված երկրորդական նշանակություն ունեցող քաղաքների, բայց Երևանը գեղեցկանում, զարգանաւմ ու զարդարվում է օրակուր, ու մեծանում, դառնում է հայության բարախուն ու շեն սիրառ Երևանն իր բացառիկ ծաղկման վերելքն է ապրում մեր այս օրերին։ Թ. Խ. Հակոբյանի 1801—1879 թվականների պատմությունը ընդգրկում է Երևանի Գրքուր

լույս է ընծայել Երևանի պետական համալսարանի հրատարակությունը։ Աշխատությունը բաղկացած է երկու մասից՝ ա) 1801—1828 թ. թ. պարսկական շրջան և բ) 1828—1879 թ. թ. ռուսական շրջան ։ Ցուրաբանը վասկառում է վարչական կարգի, տնտեսական կյանքի, բնակչության, քաղաքի ներքին կյանքի ու մշակությի մասին։ Գրքում ընդարձակ կերպով արված է նաև 1828 թվականին Երևանի աշխատագրման պատմությունը պարսկական լծից։

ՀԱԿՈԲ ՄԵՂԱՎԱՐՏԻ ՔԱՆԴԱԿԱՆ. — 1512 թվականին լույս է տեսել առաջին հայ տպագիր գիրքը ձեռամբ Մեղավարտ Հակոբի Համարյա ոչինչ չգիտենք նրա մասին։ Հակոբ Մեղավարտի դիմանկարը ավանդաբար հասել է մեղ մի քանի պլաճյա փոքրիկ դիմաքանդակ-ներով, որից մեղ նայում է փառահեղյա ալեզարդ մի դեմք։ Ներկա քանդակը գործն է Գրիգոր Ահարոնյանի, որը ցուցադրության է գրվելու Հայաստանում սովորական կարգեր հաստատվելու 40-ամյակին Նվիրված ցուցանոնդնեսում, որից հետո տեղափոխվելու է իր հատուկ տեղը Մատենագարանի շենքում։ Արվեստագիտուր առաջին հայ տպագրիչին պատկերացրել է տպագրական մեքենայի առաջ կանգնած, առաջին տպագրական մեքենակը իր գողղոցում մատների միջև սեղմած, հայացքում անսահման հետաքրքրություն, հուս հսկացք, թալ մորուքը, փանուականի անպանուց հագուստները բարեկազմ ու միջին տարիի մարդ են ստեղծում մեր աշքի առաջ, իր գործի մկածության գիտակցությունից ճառագալթող լուսավորված դեմքով։ Քանդակի տպագործությունը ավելանում է զուազ և թերթ ընդգծված զարդաքանդակներով և առաջին տպագիր գրքից մի քանի տողի փորագրությամբ։ Այս արձանը մին է արձանների այն հոյակապ շարքից, որը զարդարելու է Մատենագարանը, ներկայացնելով հայ գրքի և մշակությի վաստակագործերի խորենացու, Երևակացու, Ռուսինի, Գոշի և ուրիշների արձանների և քանդակների մի ամբողջություն։

ԿՈՒԼՏՈՒՐԱԾՅԻ ՀԱՄԱՀԱՍԱՐԱՆ. — ՀՈԽԵԿԱՆՈՒՄ. — Հոխեկան ամսին Երևանի Գրասանի տանը, հանդիսավոր իրադրության մեջ, տեղի ունեցավ Կուլտուրա-ի Համալսարանի բացումը ներածական խոսքով առաջինը Հանգես եկավ Կուլտուրայի նորասահեղծ համալսարանի ռեկտոր Ռուբեն Զարյանը։

Համալսարանի գործունեության մասին ելույթ ունեցան թատրոնի և կինոյի գծով ռեկտորի տեղակալ Գուրգին Քանիբեկյանը, արվեստի գծով անդակալ Ա-

ըս Սարգսյանը, ճարտարապետության գծով տեղակալ Միքայել Մազմանյանը:

Առաջին օրը գասախոսեց բահասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Հարությունյանը «Երևաստի խնդիրները» թեմայով՝ Կուշառքայի համալսարանի առաջին և երկրորդ խմբերում ընդդրկված են 180 ունկնդիրներ։ Պարապմունքները տեղի կունենան ամիսը երկու անգամ։

40-ամյակի առթիվ կազմակերպվող հոբելյանական ցուցահանդեսին Այս մեծ կտավին զուգընթաց նա աշխատում է նաև մի ուրիշ նկարի վրա, որը կոչվում է «Մեր գյուղում», որի նյութը մեր օրերն են, սովետական գյուղը նկարիլը մտադիր է այդ նկարը ավարտել և ուղարկել Մոսկվա՝ առաջիկայում այնտեղ բացվելը ցուցահանդեսի համար։ Ա. Թերարյանը վերջին շրջանում մեծ ներշնչումով աշխատում էր «Քաջ



ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԶԻՎԱՆ ՏԵՐ-ԹԱԴԵՈՍՅԱՆԸ (ԿԵՆՏՐՈՆՈՒՄ) ԵՎ ԳԻՒԽՅՈՐ ՕՀԱՆ ԴՈՒԹՅԱՆԸ (ԶԱԽՈՒՄ) ԶՐՈՒՑՑԻ ԺԱՄԱՆՈՒՄ

ՆԿԱՐԻՉ ԱՐԱ ԹԵՇԱՐԺԱՆԻ ՆՈՐ ԿՏԱՎՆԵՐԸ. — Այս տարի մեծ շորովով պետք է տոնվի Հայաստանում սովորական կարգերի հաստատման 40-ամյակը։ Այդ տոնը հաջող դիմավորելու համար եռանգույն կերպով նախապարաստվում են նաև Հայաստանի նկարիչները, որոնց նպատակն է իրենց նոր կտավներում արտացոլել 40 տարիների ընթացքում կատարված վիթխարի տեղաշարժերը։

Նկարիչ Արա Թեշարժանի վերջին աշխատանքը կոչվում է «1920 թվական—Հայաստան», որը պատկերում է Կարմիր Բանակի մուտքը Երևան։ Այդ աշխատանքը նկարիչը ներկայացնելու է Սովետական Հայաստանի

նպար» հայկական ժողովրդական ստեղծագործական թեմայով կատարված գրաֆիկական աշխատանքների սերիալի վրա, որն արդեն ավարտել է։

«ՄԱՐԴՈՒ ՃԱԿԱԾԱԿԻՐԸ» ՍԻՄՖՈՆԻԱՆ. — Երիտասարդ և շնորհալի կոմպոզիտոր Զիվան Տեր-Թագեսյանի երկրորդ սիմֆոնիան գրված է Շոլոխովի նովել-անում պատմվածքի թեմայով։ Հայֆիշարմոնիայի մեծ դաշնինում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, տաղանդավոր դիրիժոր Օհան Դուրյանի ղեկավարությամբ, հաջողությամբ կատարեց այս ուշաշաբար ստեղծագործությունը, որն աշբարու մի հաջողություն էր որպես աշխատառություն և որպես կատա-

բողական վարպետություն, արժանանալով ունկնդիր ների անվերապահ գնահատանքին:

Սիմֆոնիան բաղկացած է հինգ մասից: Առաջին մասը նախերդանքն է, սովետական մարդու վառ հայրենասիրության նվիրված: Երկրորդ մասը նվիրված է սովետական մարդու խաղաղ, աշխատանքային սիրագործություններով լի առօրյալին: Մարդիկ շնչ էլ կասկածում միթ մեջ իրենց սպասող արհավիրքների մասին: Երրորդ մասում պատկերվում են հերոսի ունեցած մտորումները և ապրումները Հայրենիքի ճակատագրի, նրա մարդկանց ու բնության մասին: Նվազականմարի հետ ջութակի մենափառը հաջող կերպով տալիս է այն բարդ ապրումները, որոնք կոտակվել են հերոսի հոգում, բախտորոշ այդ օրերին: Գութակի մենանվագը կատարեց Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ թ. Զալերանիանը: Չորրորդ մասը պատկերում է պատերազմի արհավիրքները, ցնցող պատկերներով: Այս մասը սիմֆոնիայի գրամատիկական գաղաթն է: Հինգերրորդ մասը վերշարանն է, միթիկական մի էպիլոգ, հագեցված սովետական մարդու անհաղթահարելի լավատեսությամբ: Դանաւթյունները ցմրուը քամած, բայց երբեք չհուսահատված, աներեք և միշտ լավագույնին ձգատող, իր Հայրենիքի հաղթանակին և լավագույն գալիքի նկատմամբ լիանույս մարդու գդացմունքներն ու ապրումներն են խտանում այսակող:

ԱՆՏՈՆ ՊԱՎԼՈՎԻՉ Զելովի ԾԱՆՆԴԱՆ 100-ԱՄՑԱԿ-ԿԲ.— Խաղաղության Համաշխարհային Խորհրդի որոշմամբ Հոմանարքի 29-ին բոլոր երկրներում նշվեց ուսականական գրող Անտոն Պավլովիչ Զելովի ծննդյան 100-ամյակը:

Զելովը, ինչպես բոլոր խաղաղասեր ժողովորդների, այնպես էլ հայ ժողովորդի սիրելի գրողներից մենք է:

1897 թվականին «Մուրճ»-ում առաջին անգամ լույս է տեսնում Զելովի «Կին» պատմվածքը: Հետագա տարիներին այդ ամսագրի էջերում հրատարակվում են «Տանը», «Փորձանը», «Օտար երկրում», «Թշնամիներ» և ուրիշ ստեղծագործություններ: Զելովի գործերը հայերեն ամենից շատ թարգմանվել և հրատարակվել են «Նոր-դար»-ում: 1900—1902 թվականներին այդ լրագրում հրատարակվել են Զելովի 50-ից ավելի գրվածքները:

Առանձին գրքերով Զելովի երկերը հայերեն սկսել են հրատարակվել 1902 թվականից: Սակայն նրա երկերը շքեղ ու ժամանակակից հրատարակվուն ունեցան սովետական տարիներին: Վերջին մի շաբթ տարիներին վերջին մարդկան բնթացքում հրատարակվել է մոտ 10 գիրք:

Գեղարվեստական խոսքի մեջ վարպետ Ա. Պ. Զելովի ծննդյան 100-ամյակի առթիվ նրա գործերը պատրաստված են հայերեն տպագրության 5 հատորով:

Հունվարի 29-ին Գ. Սովորովյանի անվան պետական գրամատիկական թատրոնում տեղի ունեցավ Հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Ա. Պ. Զելովի ծննդյան 100-ամյակին: Նիստը բացեց Հայաստանի Սովետական գրողների միության վարչության քարտուղար Հ. Հովհաննիսյանը: Ա. Պ. Զելովի սովորական գործիչ, երկարամյա մասին գեկուցեց գորդ Հրաշյա Քուշարը: Երեկոյի վերջում ներկայացվեցին Զելովի «Բայենու ալգին» և «Երեք քույրեր» պիեսներից տեսարանները:

ՊՐՈՅ. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՍՏԵՓԱՆԻ ՔՈՒՇՆԵՐՁԱՆԻ ՄԱՀԱՀ. — Հունվարի 25-ին, Լենինգրադում, հանկարծածամաց Աղավ սովետահայ երաժշտագիտության խոշորագույն ներկայացուցիչ, կոմպոզիտոր, երաժշտական-հասարակական գործիչ, երկարամյա մանկավարժ պրոֆ. Քրիստափոր Ստեփանի Քուշներյանը:

Հանգուցյալը ծնվել է 1890 թվականի հունիսի 5-ին Արմֆերպուղում: 1916 թվականին ավարտել է Պետերբուրգի համալսարանի բնական գիտությունների բաժնումները, իսկ 1925 թվականին՝ Լենինգրադի Կոնսերվատորիայի սովորական գասարանը: Նա մանկավարժական բենուն գործունեություն է ունեցել՝ որպես հմտութեառարկան երաժշտության և կոմպոզիցիայի դասաւուու:

ՊՐՈՓ. Քուշներյանի գրչին են պատկանում բազմաթիվ երաժշտական ստեղծագործություններ: Նրա գիտահետազոտական աշխատություններից է «Հայկական մոնուարիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» ծավալուն մենագրությունը, որտեղ, սկսած վաղ օրերից մինչև մեր օրերի հայ ժաղովրդական երաժշտության պատմությունը շարադրվեց, բազմաթիվ տեսանկյուններից լուսավորելով այս Հարցերի ընդուրված լայնությամբ և գիտական խորությամբ աշխատ ընկնող այս աշխատությունը բացառիկ մի երեսը էր սովետական ողջ երաժշտության մեջ:

Հարգելի արվեստագետը պատրաստել է խոստումնալից երաժշտագետների մի նոր սերունդ:

ՊՐՈՓ. Քուշներյանը Հայկական ՍՍՌ և Ռւզեկական ՍՍՌ վաստակավոր գործչի կոչում ուներ, արժանացել էր թագմաթիվ մետաների և շքանշանների: Նա ճանաչված հեղինակություն էր սովետական երաժշտական աշխատություն: Նա միաժամանակ մարդկային բարձր առաքինությունների մարմնացումն էր, վերին աստիճանի սրտացալ և հոգատար ուսուցիչ:

երիտասարդության բարեկամն ու խորհրդատառն, բարության և ազնվության մարմնացումը, անկաշառ հայրենասիր:

Վերջին շրջանում պրոֆ. Ք. Թուշներյանը իր խորհրդադիրով մեծապես օգտակար եղավ Վեհափառ Հայության ցանկությամբ Մայր Արքուում կազմված հայ Շարակնոցը եվրոպական ձայնանիշների վերածելու և ապա հրատարակության պատրաստելու գործին, որպես նախագահ Շարակնոցի հրատարակության կենտրոնական հանձնաժողովի:

ՈՒՇԱԳՐԱՎ. ԿԻՆՈՆԿԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ.—«Քրդերը Հայաստանում» այս է տիտղոսը Սովետական Հայաստանում ապրող քրդերին նվիրված գեղարվեստական դոկումենտալ կինոժապավեճի, որը պատկերում է քուրդ ժողովրդի 40 երջանիկ տարիները սովետական իշխանության ներքո Հայաստանում, հարազատ Արագածի գեղածիծաղ լանջերին:

Նկարը բացվում է քուրդ հովվի սրտադրավ սրնդի դալլալով, որը գալս է Արագածի դյութիլ լանջերից, երգ, որը հյուսվել է վերածնված քուրդ ժողովրդի կողմից Արագածի արեալող հովոցներում, նոր արեկի հետ կրանք ստացած քուրդ երշանիկ ժողովրդի կյանքի 40-ամյակի արշալույսին:

Արագածի հմայիլ բնության ֆոնի վրա պատկերված

են աշխատասիր քուրդ ժողովրդի նվաճումները, նրա երշանիկ առօրյան:

Արագածի բարձունքին խաղաղ ու բարգավաճ կյանքով ապրող ընդունակ քուրդը հիմա հնարավորություն ունի աշխատելու գիտության և կուլտուրայի օջախներում, գործարաններում, նվաճելու փորձ ու արժեք կյանքի բազմաթիվ բնագավառներում: Երևանի և միութենական շատ ուրիշ քաղաքների բուհերում սովորում են բազմաթիվ ընդունակ և կինսուրախ քուրդ երիտասարդ աղջիկներ և տղաներ:

ԿԻՆՈՆԿԱՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.—«Հայրենի հողի վրայ Հատկանշական անունն է կրում վերջերս պատրաստված այն կինոնկարը, որը պատկերում է հայրենադարձության հուզի դրվագները և հայրենագարձների մասնակցությունը Հայրենիքի վերակառուցման աշխատանքներում: Կինոնկարի ռեժիսորն է Գ. Բալասանյանը, օպերատորը՝ Ն. Սիմոնյանը: Ակնարկը հետարքքիր ու գրավիչ է, մանավանդ որ դիմք գունավոր է:

Կինոնկարում պատկերված են գեղածիծաղ Երևանի նիրագույն արվարձաններից կենսուրախ կերպով ծաղկող նոր Արեւը, նոր Մարաշը ու նոր Կիլիկիան, որոնք կառուցվել են առավելապես հայրենադարձների ձեռքով: Շուտով այս կինոնկարը կցուցադրվի մայրաքարի կինոթարունների էկրանների վրա:

